

ՍՈՒՐԷՆ ՊԱՐԹԵՒԵԱՆ

ԱՐԱՐԱ



ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵԳԻՈՆԸ

Բ. ՏՊԱԳՐՈՒԹԻՆ

Արարայի Առաջին Տարեդարձին Առթիւ

1919

Տպագրութիւն Քեիսեան

Ի Ջ Մ Ի Բ

ՍՈՒՐԷՆ ՊԱՐԹԵՒԵԱՆ

ԱՐԱՐԱ

ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵԳԵՈՆԸ

Բ. ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

1919

Տպագրութիւն Գեորգեան

Ի Զ Մ Ի Ը

Ա Ր Ա Ր Ա



Արարա՛... Ուխտատեղի ըսին անոր: Ի՛նչ թեւադրական, ոգեկոչական տապանագիր, խեղապէս, զոր դիպուածը հրաշայատուկ ընծայեց հոն հանդշող քանեակ մը դիւցազնական քաջերուն:

Հայութիւնը իր ազատագրական դարաւոր ոգորումին մէջ իր հայրենի հողին իւրաքանչիւր քարը, իւրաքանչիւր բլուրը, իւրաքանչիւր կիրճն ու ծործորը իր արիւնտվը նուիրանչեց:

Վերջին երեսուն սարիներու յեղափոխական շրջանը, Գում-Փափուի ու Պապ-Ալիի «ցոյց»երովը ծայր տուած, կարնոյ, Սասունի, Վանայ և Զէյթունի սարալանջերուն և ապառաժուտ սեպտեմբրեաններուն վրայ հայ հերոսամարտին հակայական յիշատակարանը արձանացուց: Սոնարհուկ, անանուն սարահարթեր, օձաբնակ խաւարչտին փապարներ հրաշավիպային կուրներու պատմէշներն ու խրամները դարձան, որոնց անունները՝ հայ արիւնին շառայլովը լուսապսակուած՝ անմահութեան խառնուեցան: Բայց ո՛չ մին, անոնցմէ ոչ մին, իր եղբրաշուք վսեմութեանը մէջ չի կրցաւ հաւատարիլ՝ հայրենի սահմաններէն դուրս, օտար հողի մը կուշտին բարձրացող սա՛հէք անտեսուած բլուրին, որուն անունն իսկ կ'անգիտանայինք մենք երէկ:

Արարա՛... Բոլոր մեր յոյսերուն, բոլոր մեր երազներուն ու բոլոր մեր ոգորումներուն ամբողջ դումարը կը խտանայ այս եռալանկ անունին մէջ:

Հո՛ն էր որ աշխարհի զօրաւորները առաջին անգամ կըսեցին ամբողջ ամեհութիւնը հայ անձնուրաց կորովին. հո՛ն էր որ անոնք միանգամ ընդ միշտ հաւատացին անմահութեանը մեր ցեղին. հո՛ն էր, վեր-

ջապէս, որ անոնք հայ կամքին անդապելի խոյանքին առջև զմայլահար, բռնապատուեցան մեր խաչուած, դաւածանուած, արիւնլուայ իրաւունքին հասուցման պարտքը կնքելու:

Մեր հայրենի հարիւր հազարաւոր զոհերը, չէին կրցած, պիտի չի կրնային, քաղաքակիրթ կոչուած մարդկութեան խղճմտանքը մեզի արդարահատոյց ըլլալու ստիպել:

Կովկասը իր չորս տարիներու ա՛յնքան արիւնոտ զոհաբերումներէն և իրաւունքի ախոյաններուն ընծաւած այնքան անդնահատելի օժանդակութենէն վե՛րջն ալ գուցէ պիտի վրիպէր սակաւին ցեղին ազատսինդիր համեատ պահանջը պարտադրելու աշխարհի բազըր անօրինոյներու գառաատանին: Արատահմանը, զոր հայ կեանքին գերեզմանը յորջորջեցինք պահ մը անիրաւօրէն, մահագին երկունքի մնայլ բոպէներուն՝ իր ծոցէն դուրս բերաւ աստուածային փաղանգը այն կարիճներուն սրունք հեռուներէն, հեռուներէն մեզի եկան՝ ցեղին եզած ահաւոր թշնամանքին վրէժովը սարաւուն, անոր զոյութեան գէժ լարուած գիւային սազրանքէն խռովքէն խենդեցած...

Եւ հո՛ն, Տարտին հանդիպակաց սպաւեր կղզիի մը լանջքին վրայ, հոգինին բուռնցքնուն մէջ, երկա՛ր, երկա՛ր սպասելէ յետոյ, որ մըն ալ՝ պայծառափողի մը հրաւերէն արթնցած՝ ինքզինքնին գտան բարձունքին առջև, ուր իրենց պիտի արուէր, գէթ անգամ մը, ճակատ ճակատի գալ Եղեռնին հետ որ իրենց ցեղն էր անձխտեր, մահացուցեր, որ իրենց մայրերուն, քոյրերուն ու եղբայրներուն արիւնովն էր յղփացեր...

Օ՛ր մը, օրերուն օ՛րը, ու արդէն շաւաղան կ'ըլլար անդխմադրելի մոլեգին խոյանքի մը մէջ ահաւորօրէն զարնելու խորտակելու բոլոր թումբերն ու բոլոր պատուարները զոր ռազմապիտական զծնէ հանճար մը բերեր բրգաւորեր էր այնտեղ... Հո՛ն էր որ, այդ օրը, կը կերտուէր հայ յաղթամտակին մեծ կոթողը զոր Արարա կը կոչենք:

Արեւելքի մէջ, այդ օրը, գերերու հրաշալի և թե-

լազրական շփոթութիւն մը տեղի կ'ունենար: Թորգոմի սերունդը՝ Պաղեստինի բազմաթիւ մէկ ցեղածառքին վրայ, երբեմնի վրէժխնդիր Եհովայի ընտրեալ ցեղին՝ Իսրայէլի ձեռքին վրիպած կոչումը խրատեցնելով՝ տարերային անազնազայրոյթ բազխումի մը փոթորիկը կը փրցնէր, սահնքներով արեւելական ուշադրութիւնը: Բազաւոր ու զեղեցիկ Սուրիային գաւառներն ալ՝ կարծես՝ իրենց հայրենիքին սահմաններուն վրայ մղուող ազատագրական գերագոյն պայքարին փառքը ձգած հայ գունդերուն, հազիւ անուն մը, յիշատակութիւն մը կը բերէին խառնուրդին մէջ ուր կը վճարողուէր ամբողջ Մերձաւոր-Արեւելքի նահըր:

Համաշխարհային տխրանալիքներին բոլոր ձակասներուն վրայ, զիւցազնական կոհակաւորումով մը ցեղին փառքը պանծացնող հայ ազամարդուն պիտի արուի եղեր գրեթէ միա-միեակը կոթողելու: Հրէաստանի կուրծքին վրայ յիշատակարանը որ այլեւս Արդարութեան մեծ Յաղթանակին հոմանիչ է:

Արարա՛... Հայկական Լէզոնին սրտատ հրամանատարը իրաւունք ունէր Հայութեան վաղուան «ուխտատեղին» մկրտելու զայն: Գլխադիրին զացող մեր հաւատացեալներուն չափ շատուոր ու ջերմեւանդ պիտի ըլլան անոնք որ վաղը պիտի երթան հոն ուխտի:

Արարը, Իսրայէլորդին ու Սուրիային իրենց տառապանքի եղբոր և գաղափարապաշտութեան սանձիրային, Հայուն, այդ խորհրդակուս սրբատեղին յարգանքի ազապատանքով մը պիտի շրջապատեն: Հայ ձեռքերով կերտուելիք հոյակապ դամբարանին շուրջը՝ հարեւեան ազգեր եղբայրորէն պիտի զան ծաղիկներ ու նոճիկներ անկել, ուսկել:

Արարա՛... վաղը վերագարձի կարաւաններ պիտի անցնին անոր սուքերը թրջող ծովուն կապոյտ արահետներէն՝ հայրենի լեռներուն մշուշազօծ գագաթները ողջունելով հեռուէն:

Պիտի երթանք, ամենքս ալ ու Արարան հոն պիտի մնայ... Բայց չէ՛, ան յուերժական սօնահրաւերի մը պէս մեզ կտ պիտի կանչէ:

Անոր կուրծքին պեղուած քաննեակ մը փոսերը, մեր յոյսին, մեր հաւատքին ու մեր պատիւին յորդակոհակ աղբիւրներն են... Հո՛ն պիտի երթանք, անոնց սաջև, այդ անմահութեամբ ակաղծուն փոսերուն, անոնցմէ ըմպելու համար յաղթանակին վայելքը, այդպէս տօնելու համար Ազատութեան մեծ տարեդարձը, որ մեր Օրացոյցներուն մէջ արձանագրուած պիտի ըլլայ խոշոր ոսկեհուռ տառերով.— 19 Սեպտեմբեր, Արարա՛... :

* * *

Այս հատորը, հայ զարնուած բայց միշտ անվկանդ մտածումին դոյզն ու հոգերուղիս մէկ արիատւրը թո՛ղ ըլլայ խնկելի յիշատակիդ, Արարա՛, սպասելով որ ազէաքի ու աստանքի այս օրերը անցնին և ազատ Հայուն երախտագիտութիւնը լանջքիդ հանգչող հերոսափառ նահատակներուն վրայ բարձրացնէ հոյակապ մահարձանը, ուր Հայ Արուեստը դրած ըլլայ դարէ ի դար մոռացումին տիրապետող յաւերժահունչ ազազակը Հայ Հոգիին... :



ՎԿԱՅՈՒԹԻՒՆԸ

ԵԳԻՊՏԱՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ՄԻՈՒԹԵԱՆ

25 Սեպտեմբեր 1918

Ձերմապէս շնորհակալ եմ Ձեր շնորհաւորութիւններուն համար, եւ հպարտ եմ այն իրողութեամբ թէ Արեւելեան Լեզունի Ձեր հայրենակիցները գործօն բաժին մը վերցուցին կռիւին մէջ, եւ մասնակից եղան մեր յաղթանակին:

ԶՕՐԱՎԱՐ ԱԼԷՆՊԻ

ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԵԱՆ

12 Նոյեմբեր 1918

Իմ անկեղծ շնորհակալութիւններս Ձեզի եւ Հայերուն շնորհաւորութեան Ձեր հաճոյական հեռագրին համար: Ես հպարտ եմ հրամանատարութեանս սակ հայ զօրամաս մը ունենալու: Անոնք կոռնեցան փայլուն կերպով, եւ մեծ բաժին մը ունեցան յաղթանակին մէջ:

ԶՕՐԱՎԱՐ ԱԼԷՆՊԻ

Լոնտոն, 21 Նոյեմ. 1918

Զօրավար Ալեկսի կը հեռագրէ թէ Պաղեստինի հայկական զօրագունքը արիաբար կոռնեցաւ եւ կարեւոր բաժին մը ունեցաւ սարուած յաղթանակին մէջ:

ՌԻԻԹԷՐ

ԱՐԱՐԱՅԻ

ՆԱՀԱՏԱԿՈՒԱԾ ՀԱՅ ՔԱԶԵՐՈՒՆ ԱՆՈՒՆՆԵՐԸ

(19 Սեպտեմբեր 1918)



ԲԻՍՔԱՆԵԱՆ ՍԱՀԱԿ՝ 2րդ Պաթալիտօն (Տ. Կ.), Սերասաացի
ՏԸՇԼԻՔԵԱՆ ՍԱՐԳԻՄ՝ 3րդ Գոմբաների, Սուէախացի
ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ ՅՈՎՀԱՆՆԷՍ՝ 4րդ Գոմբ., Բարօրաւ
ՄԻՍԱԲ ԳԱՎՈՒՆՃԵԱՆ՝ 5րդ Գոմբ., Սէրժ., Ատանացի
ՏԷՐ ՅԱԿՈԲԵԱՆ ՄԱՆՈՒԿ՝ 4րդ Գոմբ., Սէրժ., Ալպախանցի
ԹԱՎՈՒՔԵԱՆ ՄԻՍԱԲ՝ 4րդ Գոմբ., Սուէախացի
ԱՆԹՈՍԱՄԵԱՆ ՍԻՄՈՆ՝ 5րդ Գոմբ., Խարբերպցի
ԳԱՐԻԷԼԵԱՆ ՄԱՐՏԻՐՈՍ՝ 4րդ Գոմբ., Արաբկիրցի
ՊՈՒՂՈՒՏԵԱՆ ՊՈՂՈՍ՝ 4րդ Գոմբ., Ծովեցի
ԲԶԱՐԵԱՆ ՏԻԳՐԱՆ՝ 5րդ Գոմբ., Քէտապցի
ԱՍԼԱՆԵԱՆ ԱՐՇԱԿ՝ 4րդ Գոմբ., Սերասաացի
ՔԷՀԵԱՆԵԱՆ ՅԱԿՈԲ՝ 5րդ Գոմբ., Կեսարացի
ԳԱՍԱՊԵԱՆ ՍԱՐԳԻՄ՝ 4րդ Գոմբ., Արաբկիրցի
ՄՍՐԼԵԱՆ ԾԵՐՈՆ՝ 5րդ Գոմբ., Քէտապցի
ԱՄԵՐԻԿԱՆ ԱՐՇԱՄ՝ 5րդ Գոմբ., Սէրժ., Գղեցի
ՊԱՊԱՆԵԱՆ ՄԱՐՏԻՐՈՍ՝ 4րդ Գոմբ., Բարօրաւ, Զնքուչցի
ՄԵԼՔԻՍԵԳԵԿ ԶԱՆՕԵԱՆ՝ 5րդ Գոմբ., Զնքուչցի
ՊԵՏԻԿԱՆ ՅԱԿՈԲ՝ 5րդ Գոմբ., Այնթապցի
ՃԻՆԿԻՐԵԱՆ ՄԱՐՏԻՐՈՍ՝ 5րդ Գոմբ., Հիւսէյնիկցի
ԶԻՂՃԵԱՆ ԳՈՒՐԳԷՆ՝ 5րդ Գոմբ., Սէրժան Պօլսեցի
ՂՈՒԿԱՍԵԱՆ ՂՈՒԿԱՍ՝ 5րդ Գոմբ., Զմշկստապցի

ԾԱՆՕԹ.— Արարայի բարձունքը ճանգչող այս քանըմէկ հե-
րոսներէն գատ՝ Սեպտեմբեր 19ի մերոնց խոյանքին հետեւանով
վերջէն ունեցանք երկու մեռնալներ եւս՝ այլուր թաղուած՝ որոնց
անուաները՝ Արարայի մեր եօթանասունեակ մը վիրաւորներուն պատ-
ուացանկին մէջ արձանագրած ենք յաջորդական էջերու վրայ:

ԱՏԺԻՏԱՆ ՎԱՂԱՐՇԱԿ ՎԱՐԴԱՊԵՏ ԱՐՇԱԿՈՒՆԻ ՀՈԳԵՒՈՐ ՀՈՎԻՒ ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵԳԻՈՆԵՐ

1909ին Ասաջնորդն էր Զեյթունի, որ արհաւիրակոծ
Կիլիկիոյ հպարտ, անվկանդ, անմտաշելի գազաթը կը
մնար և որուն
սպաննական 'ա-
զազակը կը կա-
սեցնէր ջարդա-
բարներուն ա-
րիւնտս գաստա-
կը՝ Մարաշի սե-
մին վրայ:

Վազարչակ Վ.
իր կարիճ ծող-
վարդին քաջարի
հովին հանդի-
սացաւ այնտեւն:

Կիլիկեան ա՛-
ղէտէն յետոյ Ա-
մերիկա տարա-
գրուած կամովին,
իրեն վիճակուած
էրանդրատպանա-
կան հիւրընկալ
ափերէն վերա-
գանալ գալ ա-
մերիկահայ կա-
մաւորական ա-
ռաջին շարքե-
րուն մէջ, և ար-
ժանաւորու անձ-
նու էր aumônier ն
գանալ Հայկա-
կան Լեզլանին, զոր միշտ սրտասոցեց, հրահրեց, բո-
ցավառեց իր խօսքին եղբայրական ու հայրենաշունչ
ջերմութեամբը:



Ատփիւսան Վազարչակ Վ. հայ պատմութեան մէջ արձագանգող անուն մը պիտի մնայ, իբրև զինուորեալ հայ եկեղեցականը, իբրև նոր իմն Ղեւոնդ Երէց, որ Վարդանի ճեարն զիցազնական գերագոյն թափը օրննեց, և Արարայի բարձունքն ինկած մեր քանն-երեք աննման վկաներուն գերեզմանը կնքեց:

ՀԱՅԿԱԿԱՆ ԼԷԿԷՈՆԻ

ՀԵՐՈՍ - ՆԱՀԱՏԱԿՆԵՐՈՒՆ ԹԱՂՈՒՄԸ

1918 Սեպտ. 20ին, ժամը 17ին (կէս օրէ վերջ 5 ին) թիւ 26 դիրքին վրայ, աշակողմեան Ենթա-Հատուածի բոլոր զօրաց պատուիրակութիւններուն առջև, կատարուեցաւ թաղումը Բ. Վաշտի սպաննուած հայ աստիճանաւորներուն և զինուորներուն:

Ահաւաստիկ Արեւել. Լէգէոնի գործօն զօրախումբին հրամանատար Տեղակալ-Գնդապետ Բոմիէօի ձառը.

«Յանուն աշակողմեան Ենթա-Հատուածի բոլոր պետերուն, աստիճանաւորներուն և զինուորներուն՝ կողջունեմ երէկի կռուին մեր հայ մեռեալները:»

«Անոնք ամենքը ինկան այս դիրքին վրայ ուր քիչ առաջ եկանք յուզիչ ուխտագնացութիւն մը կատարել, ուր ողեցինք նաև, ազատագրուած անծայրածիր հորիզոնին առջև, յաղթանակին հրաշալի արգիւնքը:»

«Բ. Վաշտը այս դիրքին վրայ գրոհեց յանկարծական գեղեցիկ թափով մը. հոն կառչեցաւ մնաց տարափներուն տակ Արարայի՝ զոր Գերմանացիք թուրք զխմազրութեան զօրաւոր առանցքը դարձուցած էին ա՛յն հատուածին մէջ ուր խորտակուեցաւ անիկա:»

«Բ. Վաշտին գեղեցիկ կեցուածքը աւելի քան տասներկու ժամ, հակառակ իր կորուստներուն, թոյլատրեց իրագործել թշնամին կեցնելու պաշտօնը, որով անօգուտ դարձուց միւս վաշտին կռիւի մէջ մուտքը:»

«Երբեք ձեր ցեղին յամառութիւնը — որ վերապրեցուցած է ձեզ դարաւոր փորձութիւններու մէջէն — աւելի վե՛հ գործածութիւն մը ունեցած չէր:»

«Այս հողին վրայ, ուր գեռ երէկ ամենափոքրիկ ժէսթը մահ կը հրաւիրէր, մենք հպարտ սփոփանքն ունինք թաղելու ՉԱ հերոս Հայեր, ամենքն ալ ինկած առաջին շարքին վրայ, երեսնին թշնամիին, յօրինակ այլոց:»

«Ամենքն ալ արժանի են պատերազմի խաչին, ամենքն ալ պաշտպանները, սուրբերն են այլ եւս Արեւելեան Լէզէոնին:»

«Քնացէ՛ք ձեր փռօքին մէջ. դուք ճամբան բացիք Արդարութեան և Իրաւունքին՝ որոնք զարեւրէ ի վեր վտարուած էին այս չրջաններէն: Պիտի գիտնանք ձեզի արժանի ըլլալ, որպէսզի այս հատուցումը կատարեալ և տեւական ըլլայ:»

«Ատիկա կ'երզնո՛ւմ ձեր զամբանին վրայ, այս գերեզմանատան առջև զոր փռօքի յիշատակարանի մը պիտի վերածենք և պիտի կոչենք Արարայի Գերեզմանատունը՝ այս անունին մէջ միացնելու համար յիշատակը մեր մեռեալներուն, անոնց զոհարելութեան, անոնց յաղթանակին և այն հորիզոնին զոր այդ յաղթանակը կը բանայ իրենց հայրենակիցներուն ազգային բազմանքներուն առջև:»

Ահաւասիկ նաև Փարիթէն Ազանի ճառը, յանուն Բ. Վաչափ հրամանատարին.

«Բ. Վաչափ Լէզէոնականներ, յանձին ձեր կողջունեմ Արեւելեան Լէզէոնի առաջին սպաննուածները: Յանուն Վաչափն կը յայտնեմ ձեր նշխարներուն առջև մեր զգացած անկեղծ և խորունկ յուզումը:»

«Այս առտու, լուսբացին, երբ կ'այցելէի մարտազաշար ուր դուք ինկաք, հպարտ գոհունակութեամբ մը տեսայ թէ ամենքդ ալ զարնուած էիք կռուող հերոսներու գիրքին մէջ, հրացանը ձեռքին, երեսը ատեցեալ թշնամիին:»

«Ձեր քաջութիւնը գրուած է այս հողին վրայ ուր այժմ պիտի հանդէսիք. ան կ'երեւայ այս ապաստարաններուն մէջ զորս շինեցիք ահաբեկի թնդանութեամբ մը ներքև, զնոկակներու անձրեւի մը տակ զոր ձեր վրայ կը տեղայնն Արարայի գերման վաչաքերուն վարժ գնդաձիգները, լուսբերով ծակծկուած հողի մը

վրայ ձեր պատերազմական առարկաները կարգ կանոնով զետեղուած՝ ձեր պապարեամբ շարուած հոգալից պարկերու պատնէշին քով:»

«Ձեր քաջութիւնը խորհրդանշանն է ձեր ցեղին քաջութեան. ձեր երէկուան վարմունքը վերջնականապէս կ'ապացուցանէ հայ ցեղին արխարտութիւնը:»



Lt. - Colónel Romieu

Հրամանատար Հայկական Լեգեոնին

«Բախար ձեռնէ խուսափեցաւ և զուք չունեցաք յաղթանակին ուրախութիւնը. բայց անտանձան յաջողութիւնը դաշնակից զօրաց՝ որոնք նազարէթ հասած են, լայնօրէն լուծեց ձեր վրէժը, և այս յաղ-


թանակը մեզ կը մօտեցնէ Հայաստանի վերականգնումին: Ձեր զոհողութիւնը, ուրեմն անօգուտ եղած չէ և ձեր յիշատակը նուիրական պիտի մնայ ձեր զինակից եղբայրներուն համար:»

«Ձեր հէգ ազգականներուն, զորս ցառով պիտի համակէ ձեր մահուան շուրք, իմ վշտակցութիւնս կ'առաքեմ:»

«Բ. վաչախ լէզէնականներ, զուք լրագործեցիք լէզէնին կամաւորապէս արձանագրուելով ձեր կատարած զեղեցիկ զոհարելութիւնը՝ երբ հանդիպեցաք ամենաչքեզ մահուան՝ շարքերուն մէջ իրաւունքի և մարդկութեան պաշտպաններուն:»

«Երթա՛ք բարով:»

Փ Ա Ռ Ք Ի Բ Լ Ո Ւ Բ Ի Ե Վ Ը Ս Յ



ԱՐԱՐԱՅԻ ՀԵՐՈՍՆԵՐՈՒՆ ՔԱՂՈՒՄԸ
(Կուսանկարը հայրապետ Ծիար Բ. Մատթեհ)

ԲԱՐՁՈՒՆՔՆԵՐՈՒՆ ԿՈՌԻՈՂՆԵՐԸ

Անոնք ամենքն ալ Հայ Եկեղեցւոյ հաւատարիմ զաւակներն էին: Անմահ Պատարագի միջոցին, ի մանկութենէ անտի, քանիցս արտփած էր ուժգնապէս անոնց լանջքը, երբ պատարագամատոյց կրօնականը գոչած էր.

«Աւ գքոյդ ի քոյոց քեզ մատուցանեմք...», և դրպիրներուն զիլ և բամբ ձայներով խառն ասանեցուցիչ և վրդովիչ մեղեդին անոր պատասխանած էր բաներ որ զիրենք լացուցած էին:

Ահա ասոր համար է որ առողջ ու երջանիկ մեծցած, ահա ասոր համար է որ անոնց հոգիներուն մէջ հօծող քաղցրիկ երգ մը, իրենց մատաղ օրերուն ժամանակէն, անզազար մրմնջեց, մինչև իսկ իրենց քունին մէջ երբեմն, Աստուծոյ սէրը, առնի սէրը, հայրենիքի սէրը, աներկիւզ ուզգամտութեան և պարկեշտութեան սէրը. ահա ասոր համար է որ, պատանեկութեան միամիտ օրերէն երբ դուրս եկան, որոնց մէջ շատ յաճախ լսած էին տարտամ կերպով՝ բայց ցրտաւարտու աչքերնին մեծ մեծ բանալով՝ հայրենի երկրին վրայ չօքած ահաւելի աղէտքները, ուխտեցին ռիսերիմ և դաժան թշնամիին դէմ անմոռաց վրէժ և աննուաճ ստեղծութիւն:

Բայց երբ այդ անպութ հարուածները երկինքի լուսաորները ասանեցնելու աստիճան զառնացան և խտացան, այն ատեն անոնց ստեղծութիւնը հրդեհ մը եղաւ, որ վառեց բռնկեցուց անոնց էութիւնը, այն ատեն անոնց սրտին մէջ մոմուացող քէնը անծայրածիր մանչիւն մը դարձաւ, առիճներուն մանչիւնէն աւելի անեղապտ:

Եւ ատեանք ինչ որ բրին: Անպատում մոլեգնութեամբ հրդեհուած աշուրներնին դէպի վեր, կապոյար բարձրացուցին, անձայն, լուռ ու մունջ, անբարբառ

անմուռն աղօթք մը արձակեցին Յախտենականին, աղօթք մը որուն մէջ Մեծ Զոհին յիշատակին նուիրուած եկեղեցական արարողութեան սա բառերը կը խառնուէին. «Ըստ ամենայնի և յազազս ամենեցուն» և դեռ ուրիշ խօսքեր որ փուշէ պակը, եղէզնեամ մականը, լեղիով խառն քացախը կը յիշեցնեն, և կոզեկոշեն Աստուծոյ գառնուկը որ աշխարհի անիրաւութեանց և օրինազանցութեանց բեռին տակ կը ծռէ, կը կքէ իր փափուկ ողնայարը, կը ծռէ, կը կքէ, բայց չի սմբիր և երգուընցան և ըսին իրենք իրենց.

«Պիտի ըլլանք մեր երկնաւոր վարժապետին պէս: Մերիններուն սէրը մեզի մեծ ըրաւ: Ինչ որ մեր արինարրու թշնամիները ըրին մեզի՝ զմեզ փրկեց աննշան մնալու վտանգէն: Սովալլուկ առիւծներու պէս մոլած ենք մեր ոսոխները բզքտելու համար: Մե՞նք պիտի քարերուն պէս անշարժ մնանք մեզի ըրածներնէն վերջ. մե՞նք պիտի ծալլենք թեւերնիս և ամենէն անհաւասար պայքարին մէջ խկ նետուելու պիտի վարանինք այն դժոխքէն վերջը զոր մարդակերպ բանաւոր գազանները հոսեցին մեր մօր ծոցին մէջ: Կեանքին երե՞ս պիտի տանք մենք. մահուան երկի՞ւզը պիտի պաղեցնէ մեր կրակը: Հազար կեանք ալ ունենայինք, մինչև վերջինը մտադիր պիտի վառնէինք մեր սատակիչները սատկեցնելու համար: Մեր մայրերուն, մեր քոյրերուն երկինք բարձրացող վայնասունը կատաղութեամբ զրահաւորեց մեզի, և ապառաժներու պէս ենք հիմա, կենդանի սպառաժներու որ պիտի թափինք անոնց մէջտեղ և պիտի ճգմենք բոլոր ոխերիմ գլուխները, և պիտի մարենք անոնց անիծապարտ արեւը:»

* * *

Անոնց, մեր այդ դիւցազնական հարազատներուն քովը, կը շնչէր մանաւանդ նոր աշխարհի հիւսիսէն եկած կղերական մը, ի՞նչ կ'ըսեմ, փառաւոր զինուոր մը, որուն արուեցաւ մեզի տեսնալ խրոխտ ու հպարտ կերպարանը: Մհ այդ ուխտեալը, ո՞հ այդ արիւթեան և գոռ վրէժխնդրութեան մարմնացումը, խարազանը ա-

ջին մէջ փոխանակ խաչի, խարազանը զոր քալած ա-
տենը օղին մէջ դեանաճար կը մարակէր՝ կարծես ա-
նիծից ճնունդ կասափներու վրայ օրհասասփիւս հար-
ուածներ զահելով: Ա՛հ այդ երկնաւաք վրիժառու ի-
րաւարարի նմանոյ վարդապետը, որ այդ պատահասա-
րեր մարակովը հարածելու վաղած եկած էր մեր սրբ-
բազան Հայրենիքին սուճարին պատիւը կոխտուել յան-
դրցնոյ սրիկաները:

Ու անոր աչքերէն ժայթքոյ բոցերէն ա՛լ աւելի
կը բռնկէր մեր պաշտելի, մեր խնկելի հերոսներուն
հոգին: Ան էր անոնց սուաջնորդը, անոնց ճգնաւոր
Պետարտը, անոնց Ղեւոնդ երէցը, անոնց սէրը, անոնց
զմայլանքը:

Ո՛վ անձնուէր հայր, երիտասարդ որ փառքով ու
հպարտութեամբ գիտեցիր իրենց սարիքին թիւը ու-
նեցող պարուններու թումիլ ինալը, սուսթուր կոխ-
կըռաւած մեր նախնական երկրին վրէժը աջից մէջ
արփիածրաս բոցանշոյլ գրօշակ բարձրացնող ս՛վ խա-
չապկեաց զինուոր, ս՛րչափ գեղեցիկ եղար արդեօք, երբ
խոնարհեցար քու ինկած եղբայրներուդ ծագիկ հասակ-
ներուն վրայ և օրհնեցիր անոնց վերջին հանգրուանը:
Արդեօք ս՛րչափ հոգեխումջ հոգեզմայլ եղաւ քու հուսկ
ողջոյնդ այդ մեկնողներուն, երբ արաստանեցիր սա-
բառերը. «Դարձ. անձն իմ ի հանդիսս քո, զի Տէր
կոչեաց զքեզ:»

Ա՛հ, այո, Տէրը կանչեց զանոնք, և Տէրը կանչեց
ամէն անոնք որ, երկրիս շորս հովերուն, ինկան հողին
վրայ, չարչարուած Հայրենիքին հանդէպ իրենց կասա-
րած պարտքին և իրենց մատուցած պատարազին ու-
րախութեան ծագիկը շրթներուն վրայ, իրենց երազած
զափնին ճակատներուն վրայ սեղմելով, և գիրկերուն
վրայ սնկած տանելով անոյշ սէրը Մայր-Հայաստանին,
որ լալով պիտի փառարանէ անոնց ճնունդը յախտ-
նական պարծանքի լուսափայլ աշխարհին մէջ:

Օրհնեա՛լ ամենքդ ալ:

Յ. ՍԵՓԵԱՆ



ՏՕՔԹ. ԲՕԼԱՆ

Բժշկապետ Հայկական Արգենին

Ֆրանսայի հարաւեն է, Քուլուզցի, գերագանցապետ համակրելի, արցաւ ու ազնուամիտ այս զինուորական-բժիշկը, որ պատերի դարձած է մեր սղախներուն՝ ապացուցանելով անոնց թէ մարդ կրնայ իրենց օտար ըլլալ ցեղով՝ բայց սիրել իրենց հայրենանուէր անձնագոհութիւնը։ Տօքթ. Բօլան շանացած է հայերէն ստրկիլ իր հիւանդ զինուորները հասկնալու եւ արժանազելու եղբայրական հոգասարութեամբ մը։

ԱՐԱՐԱՅԻ ԲԱՐՁՈՒՆՔԷՆ

ԹԻԿՈՒՆՔԻ ԱԳՈՒՄԻՆԵՐԸ

1918 Սեպտեմբեր 19ի գրոհին առթիւ

Յաղթանակին «արօթէօզ»ովը բոցավառուած սա՛ մերձաւոր սաղմաճակատին վրայ, դաշնակից շանթարշաւարքերուն մէջ, Հայկական Լեզէոնին մեր ազաբք ողջունելու հպարտութիւնն ունինք այսօր, այլ մանաւանդ նախնական պարտականութիւնը՝ խոնարհելու փառքի դաշտին վրայ անսնցմէ ինկած առաջին նահատակներուն ու վիրաւորներուն առջև:

Արարայի բարձունքէն է որ կուգայ այս շնչատաղերն ինձի առն առող անտեղիտալի թելադրանքք:

Արարա՞... Ա՛հ, այո՛, բառախաղ մը չէ՛ ասիկա, և ամե՛նքդ ալ կրնաք քարաէսին վրայ կարմիր խաչով մը նշանակել խորհրդանշական այս անունը, որ 1918 Սեպտեմբեր 19ի արշալոյսէն ի վեր կ'անմահանայ հայկական տարեգրութիւններուն մէջ:

Դիպուածին խորհրդաւոր մէկ քմայքը ուզեց որ պաղեասինեան սաղմաճակատին վրայ մարտնչող Արարատի գուակներուն ձգած առաջին նահատակներուն աճիւնը ամփոփուի Արարայի բարձունքք:

Ի՛նչ աւելի հոյակապ դամբարան, ի՛նչ աւելի կուռ ու աղէխարչ տապանագիր՝ օտար հողի վրայ ինկած հայրենախնդիր Հայորդիներու համար:



Կիլիկիոյ ուխտուած հնչ սաղմիկները՝ դէպի Սուրիա առնուող հակաշահան թափին մէջ՝ Տաւրոսի ձամբան նեաուելու, կարելու անհամբեր խիղախումբ կը գնեն:

Ճէպէլ-Մուսա՛, ամուրացա՛ծ, այրխացա՛ծ լեռնալանջ, չե՞ս արոփեր արդէն, չե՞ս խաչտար վերստին, ի լուր հերոսներու գ թանաճայնին, որ կուգայ Միջերկրականի

հանդիպակաց ասիերէն... Զանձրացեր, քիչ մը ջգայնու-
տեր էին սպասումի ու հանդարտութեան մէջ... Բայց
երբ յարձակողականին շեփորը հնչեց, առիճներու պէս
խոյացան խրամասներէն դուրս, Ամերիկայէն ու աշ-
խարհի չորս ծագերէն եկած իրենց գինակից ընկերնե-
րուն հետ... Ապաքինման արձակուրդով հոս գալիք-
ներ կային՝ որոնք ազգամազաւէն բացակայելու ար-
ածնագրերը ետ առին իրենց հրամանատարներուն՝ երբ
խնայան թէ կոխը կը փրթէր անյապաղ... Ձեր եռա-
ցող արիւնին, ձեր մխացող վրէժին, ձեր սրտոս ու
անձնուրաց մտլեղնութեանը մատա՛ղ, հայ կամաւոր-
ներ՝...

Բայց ներեցէ՛ք ինձի որ պահ մը ձեռնէ անջատեմ՝
խանդաղատ ու շաղրութիւնս և՛ մեր բանաստեղծներուն
թողով Արարայի քերթուածը հրաշակերտելու հոգը՝
ածապարեմ բաժակս լեցնել զամանաթոյն գրկանքէն որ
կ'ըլլայ ձեզի ու կովկասի ձեր ուխտակից եղբայրնե-
րուն, սա՛ հանդիսաւոր վայրկեանին:

* * *

Թիկունքի ագուաններն են որ՝ Հայուն հերոսական
արիւնին հոտէն զայրացած՝ իրենց անհաշտ անողորմ
ատելութիւնը կը կանչեն վերատին:

Անո՛ մեր քթին տակ, մեր աչքին տաջև, ուրիշ-
ներ, նուազագոյն զոհողութեան ու սուսելեագոյն ծա-
նուցումի զամառներն, մեզի կը ճարտասորին զըր-
կել մեր սիրալի ողջակէզներուն, արխնազանց սր-
տարագներուն բարոյական զուտ արգիւնքէն, նուիրա-
կան, անխաղտելի շահէն, և մենք անձրկած, անկա-
րող կը մնանք մեր սուրբ գատին ու խնկելի մե-
սեղներուն յիշատակին դէմ թեթև սրտով գործուող այս
խուժումի անարդարութեան հանդէպ:

Արեւելեան Լէզեանը, գրեթէ ամբողջութեամբ հայ
կամաւորներէ կազմուած այս բանակը, փառքին ճամ-
բան կը նետուի: Մեր աղաքը, Ամերիկաներէն ու աշ-
խարհի չորս ծագերէն եկած, իրենց ամենի խրախուս-
ներովը, սքանչացում կ'առնեն իրենց Փրանսայի «շէֆ»
երուն և անգլիական հրամանատարութեան, իրենց ա-

ուաջին թափին մէջ խոյ հարիւրեակ մը վերաւոր ու մեռեալ ձգելով կրակի գիծերուն վրայ: Եւ ճի՛շդ այդ պահուն տեղական օտար մամուլը ո՛չ միայն համակրութեան ու յարգանքի գոյզն բառ մը, չիշատակութիւն մը խոյ շունի մեր սաղմական ճիգին համար, այլ կը պատահի նո՛յն խոյ որ ֆրանսաբարբառ թերթ մը, սուրիական փրոփականախին ծառայելու իր տարապայման եռանդին մէջ, Արեւելեան Լեզէոնը «Լիրանանցի և Սուրիացի կամաւորներէ» բազկացած հոշակէ, Լեզէոնէն անջատ սուրիական երկրապահ դասակի մը արկածով—թեթեօրէն—ակրղուած մէկ յիմնադեալին պարագան երկնատուր պատրուակ մը բռնելով իր սինակներուն մէջ՝ «Սուրիա ի պատուի» գրգրազին խորագրին տակ:

Եւ անո՛նք որ պարտականութիւնն տնին երկդիմութիւնը փարատելու, զայն կը հովանուորեն, կը վաւերացնեն, ու խուլօրէն կը նպատեն անոր աւելի նենդաժէա կազմակերպումին:

Օրհնեա՛լ ըլլայ, սակայն, բիրիցս օրհնեա՛լ, արգարակորով Ալաիօնի, փառապանած զատկը՝ Զօրավար Ալէնայի, որ իր հզօր ու անհերքելի վկայութեամբը շուշանար վանել, պտպանձեցնել ստակոխնչ ապստաներու ջախքը, և ապետական սխրալի ժեռթով մը Պատմութեան յանձնել Հայկական Լեզէոնին հոյակապ դերը՝ թրքախորձան գերազոյն յարձակողականին մէջ:

Մեծ Ազատարարը պիտի չի հանդուրժէր անշո՛ւշտ որ ուրացուէին իր քաջարի հայ զինուորները:

Բայց, անդին, տեաէ՛ք, յօանական երկդիմութիւններու խաֆած ու խառտորը, սկադեմական Լօթին է որ հինգ տարիէ ի վեր իր զսպուած մոլուցքը ցայգերգել կը ժպրհի սիրակցորդ իր թուրք բարեկամներուն հասցէին... Դաւլաթիոյ նաւալարներն ու Էյուպի «թէլլաք»ները հէշտանքէ օժգունեցնող ի՛նչ կողկողազին «սերէնատ»... Պաքուն իրենց աստուածային լանջքերով չորս ամիս շարունակ պաշտպանող և՛ ճակատնէն վարնուած՝ զիւցազնաբար ինկող մեր անզուգական Մուրասներն են որ «Ազխատէ»ի պանդոյր հեղինակին թրքապաշտ կաթոտ գեղումներուն պատրուակ կը հայթայթեն... Եւ բարիզեան նշանա-

ուր օրաթերթ մըն ալ որուն Մօրիս Պարէս կ'աշխատակցի՝ լօթիական այդ փոխունքը կը հիւրընկալէ անալլայլօրէն, մինչ նորէն ուղղամիտ Ալպիօնի մէկ ուրիշ նշանաւոր զաւակն է, Լօրտ Սէսիլ, որ՝ պատմական նամակով մը, կը ձգմէ, կը փոշխացնէ Պաքուի հայագաւ առասպելը։

Եւ ըսե՛լ թէ լուստես բարեկամներ՝ Արարայի հայ սխրագործութեան առթիւ՝ կը թելադրէին ինծի թախանձագին կոչով մը հրաւիրել Պ. Ժիւլիէն Վիօն հանդիսաւոր «բալինօսի»ներով արգարութիւն ընելու եւսպոյնին տակ մարանչոյ արիական ու արիւնազանգ Հայութեան։

Օ՛հ, «քաղաքակիրթ» մարդկութիւնը՝ հինգ տարիներու սա՛ անաւոր փորձութիւններէն ե՞տքն ալ մաքրագործուած, հոգեհորոգուած դուրս պիտի չի գար...

* * *

Թիկունքի ազատներէն քսամնած, ձեզի՛ կը դառնամ, կը յաւիտ վերատին, կոխին յորձանքներուն մէջէն մտածումիս ժպտող քաջարի Հայորդիներ, ձենէ շատերուն անունները տալու փափաք մը հազիւ զրապելով ներսիդիս... Գուք թնդանօթին որտէն ու զընդահներու շոցէն ուրիշ ձայն չէք լսեր այլեւս, ե ի՞նչ ազէկ ձեզի համար խուլ մնալ թիկունքի ճղճիմ ձիշերուն ու ճղոցներուն... Չե՛մ փորձուիր քաջալերանքի բառեր ուղղել ձեզի, չեմ հուստար նատուկու դիւրին օն-անդրարանութիւններուն... Չեր սրտերուն կրակը եթէ պէտք ունենար արծարծուելու, ստենէն բոցաշունչ խօսքերէն աւելի հրահրիչ պիտի գտնէիք դուք անբարբառ նայուածքներն այն եղբայրական զոհերուն որոնց պիտի հանդիպիք ձեր խոյանքի ճամբուն վրայ։

Փարեցէ՛ք անոնց, ահանջ զրէ՛ք անոնց Գողգոթային երկայնքը շարածգուած գերեզմաններուն — որոնց քովիկը թաղուելով որբ ու միմակ պիտի չի մնան ձեր շարքերէն ինկող հերոսներն ալ — ե ստէն անգամ որ ձեր կողքին արշաւող բրիտանացի խարտեաչ ու կարիճ աղաքը «Թիբէրէրի»ն երգեն, ձայնակցեցէ՛ք անոնց, յանկերգելով հոգեւին.

«Երկար չէ՛ ճամբան դէպի Կիլիկիա՛...»։



Հայկական Լեգեոնին հրամանատարը շքապատուած իր սպայակիցներն եւ սպաներն

ՀԱՅ ԿԱՄԱԽՈՐՆԵՐՈՒՆ



Այս իրիկուն, մեր զարաւոր Հաւասարին պարտաւած աչքերը ձեր ճաճանչազեղ ճակատներուն սեւեռած՝ սրբաշան սարսուռներու որտարնդոտտ արշաւը կ'զգանք մեր ամբած երակներուն մէջ, ո՛վ Հայ Կամքին հոյակապ զինուորներ:

Այս իրիկուն, մեր զառամած Յոյսին մարմրուն աչքերը, վաստակարեկ ու խառուորներու երկիւղածութեամբ, ձեր սրբատաշ բազուկներուն և արփիահրաշ կուրծքերուն կը քամենք, ո՛վ հայ փառքին անմահ ճարտարապետներ:

Այս իրիկուն, մեր սգաւորի յամառ Սիրոյն հաւատարիմ աչքերը կ'ուզենք փառքի պողոտաներուն, ուսկից զուք կ'անցնիք գետերու վեհափառութեամբ, կաթնածիրի մաքրութեամբ և առիւծներու անվհհերութեամբ, ո՛վ տառապակոծ Հայութեան վարդանայեալ զիւցազուններ:


Դ՛ուք, որ Հայրենիքի փրկութեան սեղանին վրայ պատարագուելու կը խոյանաք՝ մրրիկներու պէս արագ, գիտէ՞ք արդեօք որ ձեզի, ձեզի՛ համար այս գիշեր հեի հե կը ձերմկնան մարմարները՝ երկրիս ալքերուն մէջ, անհամբեր՝ լոյս արեւ տեսնելու և ձեր փառքովը զգեստաւորուելու:

Դ՛ուք, որ վրէժին օծումը կրեցիք, կրակով մկրտուեցաք, յաղթանակին խենթութեամբը զինովցաք, և Գազափարին մոլեռանդ պաշտամունքով մահը լացուցիք, մտածեցի՞ք երբէք որ ձեր արխնին արշալուսային կարմիրովը փառքի ծիրանի մը պիտի յօրինէիք սգաւոր Արարտաի մերկ ուսերուն:

Դ՛ուք, երջանի՛կ աստղերու ծնունդներ, օրհնեա՛լ մայրերու աչքի լոյսեր, Տառապանքի Հայրենիքին գեղածիժազ ջահեր, ի՞նչպէս, ի՞նչպէս յաջողեցաք տարիներով ձեր պանծալի կուրծքերուն տակ կրել վրէժի մարտագոռ փոթորկումները, անմայրածիր Սիրոյ խո-

րունի հրարուիւնները և գերասուրբ խառիֆներու շրջ-
 թալուած ջրվեժները:

Օրը հասաւ, նորածին սակեպարու տենչալի՛ օրը,



Խմբադասակեր Հայ Ա.Կ.Բ.Ռեալականներու
 Սեպտեմբրի Իրենց հաշիմ (Popote)

ուր ձեր փոխորիկները պայթեցան, ձեր հրարուիւնները
 ժայթքեցան, ջրվեժները խոյացան, և դուք, սրտզա-
 տին հեռւ եղբայրացած, շանթերու զաշնակցութեամբ

գօտեպնդուած, թնդանօթներու շարականներէն մազնիսացած, վասօզին խունկովը արբշխո, նպատակին միայն ակնապիչ՝ փայլակօրէն կարչաւէք դէպի փառքին յուսթի հորիզոնները, ձեր կրունկներուն հարուածներովը հայկուլ բունապետութեան դազազին կափարիչը գամեղէն: Համբո՛յր ձեր բարերար կրունկներուն:

Ո՛վ Գաղտփարի խնկելի գինուորներ, ո՛վ կամքի անեղաշուք մրբիկներ, ո՛վ խոշտանգուած Ազգին ստուածքնաիր հերոսներ, ո՛վ փառքի, բարութեան, գեղեցկութեան գմայլելի սահվիրաներ, ո՛վ հայ նսեհին սքանչազործ արարիչներ, մեզի, մեզի՛ ալ շնորհեցէք կաթիլ մը՝ ձեր վեհութենէն, շամանգազ մը՝ ձեր անսական կամքէն, կայծ մը՝ ձեր հրաշալի սիրտերուն ստորուշաններէն:

Ու ջրվէժօրէ՛ն կը յառաջանաք փառքին դաշտերուն վրայ. ձեր օծուած սուրերուն ու սուխներուն շկահունը, հայ հովիտներուն արծազանգի թեւերուն կառչած, փրկութեան ծնունդին աւետիսը կը փութացնէ տառապանքի ժողովուրդին. հին և նոր նահապակներուն հուստացեալ սակորները կը սարսամն, կը ցնծան. Արարատ, Մասիս, Տարոս կը խոյտան, Արաքս, Տրդրիս, Եփրատ պար կը բռնեն, Մեծ ու Փոքր Հայք, Կիլիկիա, Արասասանան կը ծափեն, կը կայթեն, կը հրճուին, կուլան կուլան՝ սգաւոր երանութեան արցունքներով թաթառն. . .


Եւ ո՛վ է ան, որ պիտի ժպրհէր խափան հանդիսանալ ձեր անտառացած կուրծքերուն ներդաշնակ ծրփանքներուն, ձեր հոգիներուն մէջ բիրեղացած գարաւոր վրէժին շղթայազերծումին, ձեր արփիահրաշ աչքերուն շանթարծակումին, ձեր արգարազործ սոքերուն անգառնալի վճիռին ու ձեր կամքին անդթօրէն հոյակապ նուաճումներուն: — Ո՛չ սք, և ոչ ինչ պիտի յանդրգնէր կասեցնել ձեր հրաշազործ ուժին ջրվէժները՝ իրենց յաղթական թաւալումներուն մէջ. . .

Յառա՛ջ, ուրեմն, ո՛վ Հայ կամքին շքեղ ու անսւոր կոհակներ. յառա՛ջ, ո՛վ երկիւղածօրէն երազուած արշալոյսներ, գեղածիծաղ կեանքի ամեհի հեղեղներ.

յառաջ, ո՞վ չփրկութեան սուրհանդակներ, ո՞վ եղեմագործ ճարտարապետներ, ո՞վ եղերարագդ ազգին բազաւոր անմահներ, յեզակարծօրէն սահմուկեցուցիչ ձեր

Խմբադասիւր շայ Լեզիոնակալաններու Արարայի նախընթացին

Ի ԶԻՆ



խոյանքներուն մէջ մրրիկներուն ու փայլակներուն հիացումը կորզելէն՝ յառաջ անընդհատ, յառաջ անվընդատ

Ու հեռուներէն խռժող ձեր քայլերգին սառսառ-
ները կը զղզղեն մեր էութիւնը, կը խենթեցնեն մեր
ջիղերը. ձեր վրէժխնդիր երիվարներուն ամբակներուն
դափիւնը թունդ կը հանէ մեր ծոյլ սիրտերը. անոնց
ասպանդակներուն դաշնաւոր շփոցը ժողատ բռնակա-
լութեան մահուան աւետիար կը զօղանջէ. ձեր վառօ-
գին բուրումնաւէտ ամպերուն մէջէն Նոր Յորուան փառ-
քի արեւին քառասմբակ խոյանքը կ'ընդնշմարենք...
Ու անդիէն Բաղդը, Փառքին հեռ ժամայիր, ձերմակ
ձիւ վրայ աշտանակուած, ոսկեղջիւրը ձեռքին մէջ,
ճառագայթի մը պէս կը համնի, վար կ'իջնէ ու ափ
կ'առնէ Հայոց Աշխարհին դուռը...

Լայնեղէ՛ք, տարածուեցէ՛ք, գեղեցկացէ՛ք, ո՛վ փառ-
քի պողոտաներ, արժանաւոր հանդիսաւարութեամբ ըն-
դունելու համար հայ կամքին հրեղէն հեղեղները: Աստ-
ղեր ու ժայռեր, վիհեր ու սարեր, դաշտեր ու հովիտ-
ներ, բարեւի՛ կեցէք կամքի հայկազուն հերոսներուն
առջև...

Ու խտերով ու երգումներով յուռթի այս գիշեր,
ուր կարեկից աստղերը հայ արտեւանութենքերը թրջող
արցունքներուն վերջին շիթերը համբելու են զբազած,
հայ մայրական կողերու մէջ հրճուպինօրէն կը խըլը-
տան սաղմերը, երկրի ալքերուն մէջ ժիրածիր կը ձեր-
մբկնան մարմարները, ու անհամբերութեան սարսուռ-
ներով կը քրանին, կը կարմրին պղինձները, օր սուսջ
լոյս արե գալով՝ ձեր խիզախումները գիւցազներգելու
և ձեր չքեղ անձերը յուէրժացնելու համար, ո՛վ «մա-
հապարտ» Ազգին անմահ հերոսները:

Ու ո՛րքան պիտի նուիրագործուի ձեր արիւնը՝ երբ
բոսորագեղ զրօշակի մը պէս փռուի Հայաստանի և Կի-
լիկիոյ յուսատրոսի կուրծքերուն վրայ. ու ո՛րքան պի-
պի գեղեցկանան վերապրողներու գ վէրքերուն սպինե-
րը, փառքի այն ծորակները, աստեղակերտ աչքերու և
չուշանափայլ ձեռքերու թաւշային հպումներուն ներ-
քե. ու ո՛րքան պերճախօս պիտի ըլլան հայ մայրերը,
երբ պատարագումներու գ վէպին շնորհալի հպարտու-
թիւնը սերունդէ սերունդ կրգեն ու պատգամեն. ու
ո՛րքան երանաւէտ պիտի ըլլան այն օրերը՝ երբ ա-

բոլոր մարմարին հեա, և աշուղը քերթողին ու նկարչին հեա մրցին ձեր փառքը մշանջենաւորելու համար. և ո՛րքան հպարտ պիտի զգայ օրհեղերքի Եհովան՝ երբ ձեզի՛ նման որսաներ ու շանթեր ունենայ իր հրամանին տակ...

Հայ կեանքին արխններէն ու հնոցներէն վահագնորէն ծնած, առիւծարար սնած, ճակատագրի պէս անարգել, կը յառաջանա՞ք ու դեռ պիտի յառաջանա՞ք՝ տառապանքի դանդիւնն ու կոտորանքը փարատելէն, ձեր գթած սոքերուն հեռքերէն Եղեմներ բուսցնելէն, ու ձեր աստեղզազեղ նայուածքներէն հրդեհի նոր համաստեղութիւններ կերտելէն: Յառա՞ջ, ուրեմն, յառա՞ջ, անդու՛ և անզոգար, յառա՞ջ, ո՛վ տառապակոծ Յեղիս կամքին վեհափառ ալիքներ:

Լանցե՛ք, տարածուեցե՛ք, գեղեցկացե՛ք, ո՛վ փառքի պոպոտաներ, արժանաւոր հանդիսաւորութեամբ ընդունելու համար Հայ կամքին հրեղէն հեղեղները: Ատաղներ ու ժայտեր, զաշտեր ու սարեր, ծառեր ու ծաղիկներ, շունչերնիդ բռնած՝ բարեւի՛ կեցե՛ք Հայ կամքին հոյակապ Ջահակիրներուն սաջև...:

Յ. Թ. ԳԱՅԱՅԱՆ

Ա. Ր Ա. Ր Ա.

ՄԻՆԻՐԱՆ Յ. ԱՃՏԷՐԵԱՆ

Արարա՛, գեղեցիկ բյուր, ես բնաւ ղեզ ղեզսած չէի, բայց կը խորհիմ քե դուն ղեզսած ու նսնչցած էիր զիս, քանի որ զիս կանչեցիք հոս, ղեզի, Ես հեռուներէն:

Քու կատարեղ ես կը նեմարեմ ծովը, անոր կոհակները դէպի հայրենիքիս արիւնհաներկ փուռները կը բաւալին:

Քու անունդ ո՛րքան կը նմանի մեր յաւիտեանական Արարա՛սի անունին: Իուն անոր մէկ սիրելի՛ն ես արդեօք կամ անոր հեռաւոր մէկ ազգակա՞նք:

Եւ Ես կը փափաքիմ, Արարա՛, խիստ Ես կը փափաքիմ հանգչիլ հոս, զիբերել քու բարձունքիդ վրայ ու ասկէ նայիլ աստղերուն. զիքեմ քե անոնք ճննդավայրիս երկիներէն է որ կուգան, իմ սիրելիներուս ժրպիտովը կը ժպտին հողակոյսիս, եւ հեզգնե՛ս կ'իջնեն վար, ծովուն կիսացող ալիքներուն մէջ, իրենց աչքին արցունքները ինձմէ պահելու:

ՇՈՎԱՍՊԱՅ ՏԻՐԱՆ ԹԷՔԷԵԱՆ

Պատերազմը մեզի բերաւ մտակցուց օտար երկինքի տակ ծնած և կրթութեամբ ու քաղաքացիութեամբ օտարացած, բայց հոգիով հարազատ մէկ քանի յանկուցիչ տիպարներ ալ որոնք՝ այլապէս՝ զույլ անձանօթ մնային մեզի և անհապորդ՝ ցեղին խորունկ համակրութիւններուն:

Ու վերին տասիձան սրտատուչ ու թերազրական պարագայ մը եղաւ անոնցր: — Իրենց մայրենիւեղուն կորսնցուցած այս Հայրեղիները, որոնք արեւմտեան մեծ ազգի մը բարբառն ու բարքերն իւրացուցեր էին, յանկարծ, իրենց ներսիզին կը կրէին խրոսովքն ու խանդազատումը ազգային զգացումին:

Արիւնին ձա՛յնն էր որ իրենց կը խօսէր, իրենց երակներուն, իրենց սրտին մէջէն:

Գահակից գինուորեալ շարքերուն մէջ իրենց պարտականութիւնը կատարելու շտապելով՝ անոնք կ'ուզէ որուէին իրենց հեռաւոր ու աղէտակոծ հայրենիքին ծառայելու ջերմեամեղ մտածումէն: Եւ ի՛նչ երանութիւն իրենց համար՝ երբ զխուածը կը նեաէր զբերենք մեր հայրենի սահմաններուն ու նպատակներուն մերձաւոր մարդերու մէջ:



Ասոնցմէ է Ֆրանսական ծովային սպայ Տիար Տիրան Թէքէեանը:

Միջերկրականի գաշնակից գլխաւոր յենակէտը՝ Բօր Սայիա՝ պատերազմին առաջին օրերէն պատեհութիւն պիտի ընծայէր իրեն հակիրճ երեւումներ ունենալու եզրպատահայ գաղութին մէջ ուր սղգականական կապեր ու ընկերական առնչութիւններ արձակուրդի իր օրերուն շահագրգռութիւնը կը կազմէին: Այսպէս, պատահարար նշմարած էինք Ֆրանսահայ ծովասպայի իր համակրելի «սիլուէթ»ը, եթէ տակաւին չէինք ընտելացած անոր:

Ճէպէլ-Մուսայի մեր հերոսական չորհազարեակին ազատման զգայացունց դէպքը, որուն մէջ սխրալի դեր մը վիճակուած էր իրեն, արտասահմանեան լայն շրջաններու յայտնեց, համբուեց իր անունը: Եզրպատահայ մամուլը խնամքով արձանագրեց գայն, աւանդելու համար յետոյ ժամանակակից հայ պատմութեան, որուն կը վերաբերէր սուէտեան գիւցազնադրուագը:

Մովսապայ Տիրան Թէքէեան ինքն իսկ յուշագրած է գայն, հայկական հերոսամարտին ձօնուած այս հատորին մէջ, ժուժկալ այլ ջերմեանդ սճով մը — գործողութեան մարդերու բնայատուկ — որ աւելի կը խրոսովէ քան ամենէն ազեխարչ քնարերգութիւնները:

Սուէտիացիներու փրկագործումով ապահովուած էր կորիզը Հայկական Լէզէոնին, որուն զոյառութեան ամենէն աւելի սատարողներէն եղաւ ծովասպայ Տիրան Թէքէեան, ինքնաստուերածումի մէջ յամառօրէն գործող փրօփականատիպի մը ազնիւ կիրքը, անվհատ կամաորութիւնը սաճարակրելով:

Ֆրանսահայ երիտասարդ հայրենասէրը խանդավառ լուստեսն մը ներկայացաւ միշտ՝ մեր ազգային ճակատագրին վերաբերմամբ:

Պատրանքի բաժին մը կա՞ր արդեօք այդ տարապայման լուստեսութեան մէջ:

Ինք ամենքէս աւելի բաղխեր, մաքառեր էր Լօթիներու, Ֆարէրներու մշակած, փայփայած չարիքին դէմ, ինչպէս նաև մօտէն հպումի եկեր հայասէր զմայլելի հոգիներու հետ...

Երանի՛ իր հաւատքն անխոցելի մնար յաւէտ:

ՆՈՒԻՐԱԿԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹԻՒՆ ՍԸ

(Ֆրանսերէն բնագրէն թարգմանուած - Թ. Է.)

Սեպտեմբեր 11 ին, Մովսիկալ Տառթիտ աիւ Ֆուր-
նէի այցէն և այն յուզիչ տեսակցութենէն ետք որ տե-
ղի ունեցած էր անոր և ձէպէլ-Մուսայի ապստամբնե-
րուն պատուիրակաց միջև գորս անհուն զպուշաորու-
թիւններով գացեր ծովափէն բերեր և իրեն ներկայա-
ցուցեր էի, փրկագործումը վճռուեցաւ:

Հրամանաւ ծովախալին և «Desaix» մարտանա-
ւուն պեա՝ Հրամանատար Վէրկօսի, որ գործողու-
թիւնները կը վարէր, ես նշանակուած էի ցամաք ել-
լելով ձեռնարկելու ձէպէլ-Մուսայի Հայոց պարպումին:

Յաջորդ առաուն ժամը 4 ին, մակոյկ մը զիս ցա-
մաք կը տանէր պաշտօնս ստանձնելու. բայց ծովը ա-
լեկոծ էր ինչպէս երբէք չէր եղած ցայն վայր, ու մեր
ափ առնելիք փոքրիկ գայլախազուած ծովեզրը անմեր-
ձենալի էր պարզապէս: Պայտարպէտ ամբոխ մը, ան-
համբեր, արդէն իսկ կ'եռուզեռար հոն, սպասելով իրա-
դարձութիւններուն: Ի զուր մեր դիւրաբեկ մակոյկը կը
փորձէր մօտենալ ծովափին. չըջակայ խորակներուն
զէմ փշրուող կոհակները գայն ետ կը մղէին և կը սպառ-
նային գայն խորտակել խութերուն վրայ: Լաստերը
գորս մեր մարտանաւէն ճարճրկած էինք և գորս ցա-
մաքին պարտանդել կը ձգնէինք, ամէն վայրկեան կը
ճարճատէին իրենց շուաններովը: Եւ հո՛ն էինք, ծո-
վուն ու ամբոխին գոռումներուն մէջտեղ, երեսնիս
չարունակ մտրակուած՝ մեր նաւակը գլոզ ալիքներու
ցօղատարափներէն, յամառելով սակայն ամէն պնով

կասչիլ ցամաքին և հոն ամենաշուտ պայմանավամբ մէջ
աեղաւորել փրկագործումի մեր միջոցները:

Յանկարծ ցամաքին վրայ, արտականոն շարժում
մը յառաջ եկաւ. կիներու և տղաքներու եռուզեռ
խառնապանծը աշեկոծուեցաւ դէպի այս ապա դէպի այն
կողմ: Տղամարդիկ, վազնիվալ, խոյացան դէպի լեռը:
Չաջներ որոշապէս կը համնէին մինչև մեզի. «Թուր-
քերը կը յարձակի՞ն կոր, Թուրքերը կը յարձակի՞ն
կոր...» Բուզէն կրխախկական էր, և կրնար եզերական
դասնալ: Ի՞նչ գիւրին ու անասնան թիրախ՝ պար-
արած ու անտղք Թուրքին համար՝ կիներու և մա-
նուկներու սա՛ խխա հօտը:

Ասանց պագարիւնս կորսնցնելու և գործողու-
թիւնը վարող բնկերներուս հետ համաձայն, անմիջա-
պէս կը բացուիմ, սրաւխար շոյեմակոյիկս հետ, երթալ
«Desaix»ի հրամանատարին խնայելու համար նոր ի-
րողութիւնը և իր հրահանգներն ասնելու:

Հրամանատար վէրիօս բմրոնեց և հանդարտօրէն
երեսեց կացութիւնը: Կազդուրիչ մը հրամցնել տուա
ինծի, և մինչ ես հանդերձներս կը փոխէի, վասնպի
մինչև ոսկորներս թրջած էի, անիկա մանրամասնեց
ինծի ձշգորոշ իր հրահանգները:

«Desaix»ն ձգելու վրայ էի, և Հրամանատարը մեզ
չրջապատող միւս մարտանուերուն հրամաններ կուտար
սպաննացուած Հայերը ազդուապէս պաշտպանելու՝ երբ
երկրորդ շոյեմակոյիկ մը «Desaix»ի սանդուխն ափ
կառնէր և մեզի կը ծանուցանէր թէ Հայերն անմի-
ջապէս ետ մղած էին Թուրքերը, և ամէն վտանգ ան-
ցած էր այլեւս:

Ասիկա նախամեծար էր, ի հարկէ, և շատ մը ան-
պատեհութեանց առաջքը կ'առնէր: Ես խեղոն փրկա-
գործումի վայրը կը վերադասնայի, թարմ ու կազդուր-
ւած, գործադրելու համար առաքելութիւնս սրուն ա-
սաջին մասը՝ ծովուն հետ՝ բաւական աշեկոծ եղած էր:

Մովը փոքր ինչ խաղաղեցաւ արդէն, արեւուն համ-
բարձումին հետ, և տակաւին չորս ժամուան ձիգեր-
յետոյ կրցանք վերջապէս ծովեզրը բռնել շատափայլ

տերու միջոցով զորս յաջողեր էինք գեշ-ազէկ տեղա-
ւորել:

Պարպուտի (evacuation) գործողութիւնը կրնար կա-
տնաւորուիլ սկզբի:

Եւ նախօրք պատուիրած էի հրաման տալ բոլոր
հայ մարտիկներուն իրենց բոլոր զիրքերը պահել մին-
չեւ վերջին սահմանաժամը. միայն անոնցմէ մէկ քա-
նիները պէտք էին գալ մեզի օգնելու ծովափին վրայ,
բայց ո՛չ մէկ ազամարդ պիտի նա մանէր կիներէն և
մանուկներէն առաջ: Ենթոյն կարգապահական այս մի-
ջոցին էր որ Թուրքերը այնքան շուտով ետ մղուեր
էին սուաւատան իրենց փորձին մէջ. շնորհիւ այդ
այն միջոցին էր ապա որ մենք ամենակատարեալ յաջո-
ղութիւն մը պիտի ունենայինք՝ հակառակ ծովուն մո-
լեզնութեան և ասոր մեզ ստիճած բոլոր զժուարու-
թիւններուն:

Յամաք ոտք գրածիս պէս կը գրազէի փախաա-
կաններու գիւղ առ գիւղ պարպուտը կարգաւորելով:
Վայրկեան մը չի կար կորանցնելիք, վասնզի ամէն բո-
ւակի Թուրքերը կրնային օգնագորք ստանալ և վերըս-
կըսիլ իրենց յարձակումը: Մէկ քանի ազատամըներու
և իմ քաջարի նաւազներու ընկերակցութեամբ՝ համ-
բերութեան յորդոր կը կարգույի ամէն կողմէ խածոյ
ամբոխին, ազահովցնելով որ խրաքանչիւրը պիտի
մեկնէր իր կարգին և թէ ամենքն ալ պիտի ազատ-
ուէին: Կիներն ու ձերտնիները ձեռքերս կը համբու-
րէին ու ոտքերս կը փաթթուէին: Ուրիշներ Ֆրան-
սերէն ու հայերէն կ'աղաղակէին. «Կեցցէ՛ Ֆրանսա», և
չուրջս կը փութկոտէին՝ հազար ու մէկ ազայական հար-
ցումներ ընելով ինձի. «Պէ՞տք է որ հետս առնեմ կա-
րպաս»... «Մարտանալին վրայ չուր ունի՞ք...» Վսեմ
ու խիստ հասկնալի անդիտակցութիւնն ազատնացող վը-
սանդին:

Բազմութեանն առջև այս հերոսական ընդվզող-
ներուն որոնք քաջութիւնն ունեցեր էին պայքարը
անձնատուութենէն նախընտրելու, և որոնք հիմա հո-
րիզոնին վրայ կը տեսնէին ազատամիտ ճամբան ու
նաւերը, ի՞նչպէս չի յուզուիլ: Ինձի թուեցաւ թէ զա-

նոնք փրկելու այս ստաքելութիւնը վաստնում էր ինծի խորհրդաւոր ճակատագրի մը կողմէ որ Ֆրանսացի սպայի իմ համազգեապիս սակ թունդ կը հանէր իմ մէջն ինչ որ կար խեղարեան և զգացումներ խորունկ, վեհանձն ու թերեւս սահաւական: Ֆրանսայի ձայնը, այդ մեծ ձայնը որ զիս համակ կազմած և օրօրած է, սիրտիս մէջ արձագանդ կուտար Հայաստանի սաստազակին ձայնին որ, ա՛ն, օրօրած էր սառնօք կրպներն իմ հեռաւոր ու հպարտ նախնիքներու:

Թէպէտ միշտ նեղուած ծովուն վիճակէն, սպասումի գործողութիւնը շարունակեցինք օրն ի բուն: Կարիճ նստազները կը չըջանակէին և լողալով կ'ընկերանային լատերուն որոնց վրայ կուտակուած ինքզինքնին կը բռնէին ճշմարիտ մարդկային ոգիոյզներ: Երբեմն լատսին մէկ ծայրը կը փշրուէր, մէկ քանի ձիւեր կը բարձրանային, մարդկային ոգիոյզը կը քաղուէր ծովուն մէջ: Բայց նստազները շուտով կը հասնէին ամէն ինչ կարգադրելու, մինչև չողեմակոյկները բերելով յաճախ իրենց ուսերուն վրայ խի, մեկնումին բոլոր ձամբողները:

Իրիկնամուտին՝ շուրջ 3000 հոգի պարպած էինք, կիներ, աղաքներ, ծերունիներ, սուսնց ամենողոյզն արկածի: Օրս պարսապ չէր սնցած: Կը մնար յաջորդ օրը՝ ԱՅ Սեպտեմբերին՝ պարպել գեռ գիւղի մը կիներն ու սղախները, սպա՛ս ամենէն վերջը՝ բոլոր ուսղմիկները: — Ասոնք չէին ուզեր բաժնուիլ իրենց սիրելի լեռներէն. անոնք մենէ կրկին խնդրած էին — ինչպէս Յոսիակալին հեռ իրենց սառչին տեսակցութեան միջոցին — զէնքեր՝ և սաղմոսթերք՝ կոխը շարունակելու համար մինչև ծայրը, բայց մենք ի վիճակի չէինք անմիջապէս իրենց օգնելու, և արդէն զանոնք պարպելու վերին հրամանը եկած էր: Այս հրամանը ցաւալիւօրէն սահմակեցուցած էր զիրենք, բայց պարսաւոր էին համակերպելու. անոր՝ թշնամիին զեմ ա՛լ մինակ մնալու սպառնալիքին տակ:

Ճէպէլ-Մուսայի ազատամբներուն պարպումը խկապէս ամենուղիղ փուլը կազմեց մեր գործողութիւններուն:

ՌԱԶՄԻԿՆԵՐՈՒՆ ՊԱՐՊՈՒՄԸ

Երբ կիներէն, ծերունիներէն ու ազաքներէն վերջինը նաւ դրուած էր, հայկական քսան զօրախումբերը՝ միաժամանակ ձգելով իրենց լեռնային դիրքերը՝ զանազան կողմերէ ծովափ եկան, և ես այն սամն աւտայ որ ձորերէն ծայր կուտային, խմբակ առ խմբակ, հուժկու և խրոխտ պատերազմիկներ, կուրծքերնին փամփուշտակալներով զարգարուած:

Յանկարծ, լեցուն հրացանածգութեան ազմուկ մը լսուեցաւ այդ ձորերէն մէկուն գրուէքէն, և երբ սեղեկութիւն կը հարցնէի անցած զարձածին մասին (մատնաորսապէս արգիլած ըլլալով հրազէնի սմէն ազմուկ թշնամիին ու չապրութիւնը շարժնցներու համար), ինձի պատասխանեցին թէ պատասարները այսպէս կ'ողջունէին իրենց պետը, և ես նշմարեցի զայն որ կը յառաջանար նայն պահուն ծալքերուն սակ ձերմակ ու կապտա գրօշակի մը, ֆրանսական գրօշակը որուն գոյներուն սակ ձէպէլ-Մուսայի ազատամբները՝ թուրքերուն դէմ իրենց պայքարը մղած էին, և որմէ՞ Ծովափային հրամաններուն համաձայն՝ կարմիր երկզը նանուած էր:

Ազատամբապետը Եսայի Եսպուպեանն էր, հանդարտաթեամբ ու պարզուկ արժանապետութեամբ հիանալի մարդ մը, ձախտար սեղմուած կերպստով մը որ ետեւէն ծոծրակը կը ծածկէր, ինչպէս Սասունի ազատամբները կը դրուէին, լանջքը՝ փամփուշտներով ախողձուն, նալուածքը՝ արտամ ու բռնկած միանդամայն: Փխախտի ներսներու սպալակոյտ մը կը հետեւէր իրեն, և ան յամբաքացի կը յառաջանար կամարին սակ հրացաններու գորս իր մարդիկը կը խաշածուէին իր գլխուն վերեւ, ամբողջ երկայնքն իր ձամբուն:

Եսպուպեանին մօտեցայ և անոր ձեռքը խանդազատազին սեղմելէ և իր քաջարի գիտաբութեան համար գինք չնորհաւորելէ վետոյ, պետերու հրամանները հազարեցի իրեն: Պէտք էր թողուլ ձէպէլ-Մուսան և չոյենաւ մանեւ անբարադ: Լեւր սնուաչապան էր այլեւ

և մեր մակոյկով երթեալները կրնային թշնամիին կրակին տակ իյնալ՝ եթէ ան ժամանակ ունենար ծովեզերքին մերձենալու :

— Թշնամին հո՛ն է, մի՛ վախնաք, վաս թուրքը հողին տակ մտած է ձեր սմբաձգութենէն ի վեր, երէկուան իր յարձակումը կեղծ ցոյց մըն էր, պատասխանեց ինձի Եազուպեան, բայց, կը տեսնէք, մենք չենք կրնար թեթև սրտով ձգել հեռանալ մեր սիրելի հայրենիքէն, այս սեղերէն որ մերն են դարերէ ի վեր, և ուր մենք ամբողջ յիսուն օր յազմակամօրէն պայքա-



Մայի Եազուպեան

կրակի տուեր էին բոլոր այն խափանիչ առարկաները զորս չի պիտի կրնային հեռերնին տանել և զորս չէին ուզեր թուրքերուն թողալ: Անկողին, վերանկ, ուտելիք, անտկան պիտոյքներ, ամէն ինչ հող խառնուած, չփոթուած էր կրակին մէջ, և բոցերը կը բարձրանային, կը բարձրանային միշտ ու ելի վեր: Ճէպէլ-Մուսայի սպասամբները հեռերնին ունէին նաև բաւական կարևոր արջառահօտ մը: Այս կենդանիները մեծ մասամբ գաշտանահարուած էին, բայց տակաին կային ողջ մնացածներ: Ապասամբները անեղ կերպով պաշարեցին զանոնք ծովափնեայ տարօրինակ հրդեհին

բեցանք թուով մենէ շատ աւելի ստար թշնամիի մը գէ՛մ... Ա՛հ, եթէ դուք թոյլ ապիք որ մենք կսիրը շարունակէինք...

Իրեն հակցուցի թէ անօգուտ էր թախանձել: Այն ստեն, ամենքն ալ, խմբապետ թէ գլխորդներ, վերջին հրածեչա մը ուզեցին իրենց սիրական լեռներուն:

Ծովափին վրայ ահագին խարոյկ մը կը վառէր արդէն: Փախատականները, նաև մտնելէ առաջ, հող զիգեր ու

մօտ, և անոնց միսն ալ ճարակ տուա զժոխային խարոյիին որ կը վառէր հոգ ինչպէս վաճճ ողջակէզ մը նոր ծնող ազատութեան մատուցուած . . .

Երբ Ճէպէլ-Մուսայի ազատամբներէն վերջինը նաւ մտաւ—աւելի եղերական ժխտի մը մէջ քան զորժողութեան սիկզբները, կենդանի այրուած անասուններու հանդիւններ, հրդեհուող ամէն տեսակ առարկաներու ճարճատու մներ և փոթորկոտ ծովուն անընդհատական գոռումն ամենուն վրայ — ես ալ՝ խ՛ կարգիս՝ ծովեզրը թողուցի:

Թանձր ծովի ամպ մը քիչ լեռոյ քօղարկուեցաւ նայուածքիս տուչե, և մինչ Ճէպէլ-Մուսայի կորիճ փախաստականները՝ իրենց վիրաւորները ժողուած՝ կը նաւորդէին արդէն դէպի Եգիպտոսի ասպնջական ցամաքը, մենք կը շարունակէինք, ասդին, մեր կանոնական ծովայածութիւնը:

ՏԻՐԱՆ ԹԷՔԷԿԱՆ


Գօմիսէր Ֆրանս. Ծով. Եշխանութեանց

Վ Ի Ր Ա Ի Ո Ր Ը

ԱՅՈՐՈՆ ՄԱԼԵԱՍԵԱՆԷ

Աչեհրուդ մէջ կը մարի յոյսը կեանքին,
Ու ազատներն ու անգոյրը անօրի
Եր սրբն վերն անագորոյն կառուցնին,
Արիւնիդ մէջ յոյս ծագիկ մը կը փրքի:
Պիտի մեռնիս մարմանդին մէջ գունագեղ
Վայրի խոտերն պիտի բլան բեզ դագաղ
Ու յամիկներն ու շուշաններն ալ անմեղ
Պիտ՝ զարդարեն վիրաւոր կուրծիդ անյապող:
Պիտի մեռնիս, ու ինկած տեղդ պիտ՝ կանգնի
Յուշարձանի մարմար կորոզ մը փաքբաճ
Որ տիրական ու յադր բազկով Վահագնի
Յոյց պիտի տայ դիւցազնուրեան վեհ նամբան:

ԵՐԿՆԵՐ ԵՐԿԻՆՔ ՈՒ ԵՐԿԻՐ



ՀԱՅԿԱԿԱՆ ԼԷԳԻՈՆՆԵ

Խնչու, այդ սուսուօտ, արևը աւելի վեհասիտա էր
և կարմիր:

Որովհետև, այդ սուսուօտ, Արարայի բարձունքին
վրայ, Հայ քաջերը արխն թափեցին, և Լոյսը յաղթեց
Սուսուօտին:

Խնչու, այդ սուսուօտ ծաղիկները աւելի թարմ
էին և ժպտուն:

Որովհետև, այդ սուսուօտ, Արարայի գազաթը Գե-
ղեցիկը ծածկեց Տղեղը, և Արարայի ցոյր իջաւ գեղեց-
կութեան ծաղիկներուն վրայ:

Խնչու, այդ սուսուօտ, թռչունները աւելի ուրախ
էին և իրենց երգը աւելի քաղցր:

Որովհետև, այդ սուսուօտ, Արարայի սարերուն վը-
րայ Աէրը խեղդեց Ատելութիւնը, և Արարայի զեփու-
սը զգուեց փետուրները թռչուններուն՝ որոնք կեր-
պեն միշտ սէրը:

Եւ ի՞նչու, այդ սուսուօտ, եկեղեցիին զանգակը կը
հնչէր աւելի բամբ և ներդաշնակ:

Որովհետև, այդ սուսուօտ, Արարա բարձրացաւ Բա-
րին և հոն սպաննեց Չարը:

Ողջո՞յն քեզ, ո՞վ փառաւոր Հայկական Լեգէոն, որ
պանծացուցիր հայկական խեղձ ազատութեան զրօ-
շակը, փոթորկեցիր սախկան և եւրօպական բարբա-
րատիւնները միացած, և, բոցավառ սասերով գրե-
ցիր 1918 Սեպտեմբեր 19 թուականը, որ Արարայի
երկինքէն՝ իրր արդարութեան նոր արև՝ ճառագայթեց
բոլոր ծովերուն և ցամաքներուն վրայ:

Փա՛ւք քեզի, ո՞վ հոյակապ Հայկական Լեգէոն, որ

ծնար Բիջերկրականի թագուհին ծոցէն, Ասազիկին պէս չնորհալի և վաճազին պէս անպարտելի, խոյա-
ցար ալիքներուն մէջ և ձեռքիդ բարձր բռնած կար-
միր խորհրդանշանովք պատուելով կապոյտ ծովուն ձեր-
մակ փրփուրները, յորձանք սուիր գեհնների պարխազ-
ներուն դէմ, որոնց կառեր, սաղալէլներու ամենէն
զգուելիները բանակը էին՝ ազգերու ամենէն ազնիւր:

Հովե՛ր, ողջոյն տարէ՛ք Հայոց քաջին, Անդրանի-
կին. ուրախ եղի՛ր, Մեծ Զօրավար, Հայկական Լէզէոնի
արոժիւններուն տակ ձանչեց, զզրգաց զժողովի թա-
գաւորութիւնը, անկէ աւերակ մը միայն կը մնայ
այսօր:

Ասազե՛ր, աւեախ տաէ՛ք Հայոց զիւցազնին, ան-
մահ Քեռիին. հրճաւէ՛, Մեծ Կամաւոր, Հայկական Լէ-
զէոնի մահացու հարուածներուն տակ Հիզրան փռուած
է արիւնլուայ, և անկէ գիակ մը միայն կը մնայ այսօր:

Հրեշտակներ՛ք, փառք ի բարձունա երգեցէ՛ք այսօր
երկնքին մէջ, որպէսզի հոն բնակող բխրաւոր անմեղ
հայ զոհերը իրենց մեղեգին խառնեն ձերինին և փառք,
փառք մատուցանեն վրէժի Ե՛տօլային, Արդարութեան
Աստուծոյն:

Ելի՛ր, ո՛վ հոգեհօ Հայ, ի՛նչու նստեր ես Նեղոսի
լալիան ակերտուն վրայ. շտապէ՛, ծունր գի՛ր երկիւ-
ղածօրէն և երկրպագէ՛ Արեւելքէն՝ օրարայի վրայէն
ժաղող Նոր Ասաղին առջև. քու Հայրենիքիդ աստղն է
ան, որ հիմա բարձրացաւ երկնքի կամարին վրայ և
հոն, ազատներու համաստեղութեան մէջ կը պահպայ
չլացուցիչ փայլով մը, և ան ա՛լ պիտի չի մարի յա-
ւիտեան:

Ելէ՛ք, ո՛վ Հայեր, որ ի ակիռս աշխարհի, ուխտի
երթանք Հայաստան, որովհետեւ մենք անոր սաազը
տեսանք Արարայի վրայէն. ոսկի, հալուէ և կնդրուկ
տանինք ընծայ մեր քաջերուն, Արարայի յաղթական-
ներուն:

Հայ կոյսե՛ր, թրթուացուցէ՛ք ձեր սուսիղները և
պարելով ընդ առաջ գացէ՛ք յաղթական նոր Գաւիթին,
որ իր ձեռքին մէջ բռնած է Քողխաթի տակաւին ա-

բիւնասոս գլուխը: Հայ ազջիկներ, վարդեր ցանեցէ՛ք
 Հայկին սաջի, գափնիներ հրահեցէ՛ք անոր ճակարին՝ որ
 կուգայ Բէլին սիրտը իր նիզակի ծայրին: Ալ յախ-
 եան սաստազանքը պիտի չի համարձակի մօտենալ ձեզի,
 Հայահիներ, գիցուհիներ, որ ցեղը ապրեցուցիք ձեր
 սրտին մէջ, ձեր հոգիին խորը, այլեւս անգամ մըն ալ
 ձեր անրիժ ճակատը պիտի չի խորշումէ՛ սուսայտանքը,
 որովհետեւ ա՛լ ան չի կայ: Չի լսեցի՞ք, ձեզի արժա-
 նի Հայկական Լէզէոնին քաջերը զայն թողեցին
 Արարայի վրայ:

Լուէ՛, սահայն, խ՛ն ահար գրիչ, ի՛նչպէս կը յան-
 գրցին քնարերգել Հայ Յողթանակը, Հայ Փառքը գե-
 րապոյն:

Արթնեցէ՛ք, Գողթան երգիչներ, բա՛ւ է որքան լը-
 սեցին ձեր քնարները. հնչեցուցէ՛ք անոնց սոսի լարե-
 րը, և թո՛ղ անոնք թրթուան՝

Երկներ երկինք ու երկիր
 Երկներ և ծով ծիրանի
 Եւ ի ծովուն չքնուզ կղզին Ասաղիկի
 Ընդ կիպրեայ սարեր բոց ելաներ
 Եւ ի բոցոյն Հայկական Լէզէոն վազեր
 Նա սիրտ՝ անհուն վիշտ ուներ
 Ազա թէ բոց ուներ վրէ՛ժ:


Ա. ԳԱՔԱՄԱՃՆԱՆ



ՍՈՒ-ԼԻԷՅՈՒՆԻՆ ՎՈՂԱՆ ԲՕՐԹՈՒՔԱՆԵԱՆ

Ազգային «վեթերան» գործիչին զատին է, հետևաբար՝ թանկ հայրենասիրական միջնուլորտի մէջ մեծցած շայ մը:

Մարտիրոսացի, ինչպէս Ծովաստայ Թէքէեանը և Առփխան Սահաթեանը, իր այս երկու համարադարձացիներէն ու եզրայրակիցներէն կը սարքերի մայրե-



նի լեզուի աւելի հմտութեամբ մը զոր ձեռք բերած է ի կովկաս, աշակերտելով առան մը Գէորգեան ձեռնարանին, Ֆրանսա վերագառնալով համալսարանական կրթութիւն ստանալէ առաջ:

Վկայեալ իրաւագէտ, Սու-լիէօթընան Բօրթուքաւեանի յատկանիշը կը կազմէ կանխահաս լրջութիւն մը որ յարգանք ա վստահութիւն կը հարկադրէ ի-

րեն հետ հպումի եկող համազօյներու, ինչպէս օտարներու:

Այս «ճանր սզուն» զգօն կեցումաժքը, խոհուն ու կշատար խօսքը յայտարար շեն ստիպն հողեկան կրակի պահատին:

Սու-լիէօթընան Բօրթուքաւեան ընդունակ է ամենազնիւ խանդավառութիւններուն:

Ես գմայլեցայ իր շեշտին սրտագին ու բոցավառ
գեղեցիկ թեննէն, երբ՝ Արարայի նախընթացին՝ առաջ-
նորդաւելով իբմէ Բամայիլայի տաղուտքին մէջ բա-
նակած Հայկական Լեզվանին ու զգելու երկրպատանայ Ազ-
գային Միութեան ողջօջնները՝ լսեցի զիս ծանուցա-
նոյ իր եզրայրտական ձայնը որ կը գոտար:

— Հո՛յ գին որներ... .

Ու հրարխային «արիջ» մը կ'ամբողջացնէր այս երկու
բառերը որոնք ամբողջ զգայացունց մարտակոչ մը
կ'արժէին ինծի համար իրենց արտաբերումը «թօն»ին
մէջ:

Սու - լիէօթընան Բօրթու քաղեան Հայկական Լեզվո-
նին անհունօրէն օգտակար եղած է, անոր սպայակոչ-
աին մէջ ներկայացնելով ցեղին խնայականութիւնն ու
նկարագրի ամուր քաակութիւնները: Ֆրանսացի սպա-
ները անվերապահ յարզանք ու համակրութիւն տա-
ծած են միշտ իր անձին նկատմամբ: Ես առիթ ունե-
ցայ լսելու Լեզվանին հրամանատարը, Փօլօնէլ Բօմիէօն,
որ հիացումով, գրեթէ խանդավառութեամբ կ'արտա-
բայտուէր իր մտայն:

Սու - լիէօթընան Բօրթու քաղեան, հակառակ իր
ստուերասէր համեատութեան, մին է այն հազուագիտ
ու թանկագին արժէքներէն որոնց ա՛յնքան պէտք պի-
տի ունենայ մեր հայրենի վերակազմութեան գործը:

Կ Բ Օ Շ Ա Յ Ի Ն

— >>> ◊ <<< —

Հայրենիքիս խորհրդանիւ եռագոյն
Այս իրիկուն դուն կ'անցնիս,
Պենագարդուած չհնազ կոյսի մը հանգոյն
Հորիզոնէն երազիս:

Ասուածացման պատմունանիդ մէջ գողցես
Դուն Անահիտն ըլլայիր,
Հայաստանի խորհրդանիւ բոցագես,
Կապոյս, ներմակ ու կարմիր:

Անահիտն ես, դիցունինն ես արդեն դուն
 Վահեվանեան մեհեանին,
 Մարմարիոնն քսիճններով կարկառուն՝
 Լի յոյսերովը ցեղին... :
 Պիտի բանի քեզ աղջիկը ամօթսամ,
 Ասեղնագործ, մեսափս,
 Ու դուն պիտի իր թելերուն մեջ դառնաս,
 Ո՞ն սիրահար մը գուցէ,
 Եւ երբ զքեզ ան լուռ զրգուէ, երբ ան լայ
 Քեզ սեղմելով իր կուրծքին,
 Անցեալի փառքն ու վառ յոյսերն ապագայ՝
 Թող գրկիդ մեջ համբուրուին :
 Եւ սակայն դուն զեղեցիկ ես աւելի,
 Երբ ընթանաս անվեհեր,
 Սուիններու ցոյներուն մէջ սխալի,
 Օղերուն մէջ սարուբեր :
 Առաջնն ինկած մարտիկներու տղանցքին,
 Առաջնորդես պիտի դուն,
 Ո՞ն դէպի ո՞ր արեալոյսները փառքին,
 Շարքերը հայ քաղերուն :
 Պիտի երբաս ամբողջ կարօքը Հայուն
 Ծայփերուդ մէջ սանելով,
 Եւ հայրենի երկինքին սակ հրմայուն՝
 Պիտի ծրփաս անվրդով :
 Ես կը տեսնեմ հորիզոնէն հեռաւոր,
 Գիշերուան մէջ անլուսին,
 Արարատը՝ հսկայ փետան դարաւոր՝
 Որ կ'սպասէ իր հարսին... :
 Թնդանօթի եւ քմբուկի ամպրոպներ
 Կը մըռնչեն, կ'որոտան,
 Ու կը հընչեն եկեղեցւոյ զանգակներ՝
 Լուրթ ամպերուն մէջ տատան :
 Տեսէ՛ք կուգայ Հայրենիքը եռագոյն,
 Հայրենիքը գեղանի,
 Ճամբայ՝ տուէ՛ք, շարքերուն մէջ լըռութի՛ւն՝
 Հայ Դրօտակն է որ կ'անցնի... :

Յ. ԱՂԱԶԱՐՄ

ՀԵՐՈՍՍ.ԿԱՆ ԻՍՐԱՅԷԼՈՐԴԻՆ

ՍՈՒ-ԼԻԷՑԹՐՆԱՆ ԺՕՁԷՖ ԱՐՏԻՓԻ

Գուրգուրոս խնամք մըն է գոր իր յիշատակութեանը կը բերեմ հոս, հայ քաջերցու փառասոր մահերն արձանադրոց այս էջերուն մէջ:

Անոնց հետ, անոնց կողքին անսլէհեր վազած ա-



տեն, անոնց պէս հերոսաբար ինկաւ այս զմայլելի Իսրայէլորդին, պողեատինեան բազդորոշ յարձակողականին մէջ, Արարայի բարձունքին վրայ:

Ժօզէֆ Արախիի եղբայրական խորհրդակուս անուն մըն է այլևս մեզի համար, և մենք շատ առիթներ պիտի ունենանք այդ անունը հիմնելու, վազը, հրէական ականջներու, սրունք յաճախ անտարբեր, երբեմն խուլ

մնացին, զժբազդարար, մեզի ու մեր եզերական ազգակներուն հանդէպ:

Փօզէֆ Արախթի արիւնք, Արարայի վրայ մեր ազոց արիւնին խառնուած, նման խեւալներու համար մաքառող երկու վազնձական ցեղերուն անտեսուած հաւմեբաշխութիւնք կ'ազեկոչէ, կը խորհրդանշէ:

Նոյնատիպ յոյսերու և յուսախարութիւններու մէջ տարութեր հայ և հրեայ ցեղերը ս'ըքան պէտք ունին իրենց ճակատապական հետապնդումներուն մէջ իրար հասկնալու և ձեռք տալու իրարու:

Փօզէֆ Արախթի Պէլլուի ծնած է 1895ին: Տասնրկեց տարեկանին Գիտութեանց Պատկառք, միշտ առաջինն հանդիսացած էր իր գասարանին: Երկրորդական ուսումն աւարտելէ յետոյ, իրաւագիտութեան «լիսանս» ի երրորդ տարւան ընթացքին, Պատերազմը վըրայ կը հասնէր: Իր Ֆրանսական հարստակութեան պատճառով 1914ի Գեղակեմերին՝ Պէլլուի էն արտաքսուած, ժամտաստեղէ կը բռնուէր, և զեռ ապաքինման մէջ խնդրամատոյց կ'ըլլար ճակատ մեկնելու: Անիկա վերջապէս Ֆրանսա զրկուելու բաղդատութիւնք կ'ունենար, և 15րդ Հեռեւակազօրաց զօրարանակին մէջ մտնելով մէկ քանի շարաթէն իր զինուորական կրթութիւնք կը լրացնէր: Տասնապետ, ապա յիսնապետ, անիկա մասնակից եղաւ իր զօրապտնդին բոլոր գործողութիւններուն: 1917 Մարտին Պաղեստին զրկուեցաւ, հայ կամուորներ մարդելու և աւելի յետոյ անոնց հետ կրուուելու համար ժառանգական թշնամիին զէմ: Իր մասնունէն քանի մը շարաթ տուած, «տալիօթրնան» ի տալիսանին բարձրացաւ: 1918 Սեպտեմբեր 19, ժամը 18ին, անիկա վրզէն մահացու կերպով վիրասորուած ինկուայն վայրկեանին, երբ իր զօրամասը կը մզէր գրոհին, որ իր հայրենի հողը պիտի ազատէր թուրք լուծէն: Ընդառանդնին ստացաւ Քաջերուն Պաշք, և ստաջարկըւեցաւ Պատուոյ Լէզէանի Պաշին համար ալ զոր սակայն իրեն ժամանակին յանձնել կարելի չէղաւ, վասնզի ան իր հոգին աւանդեց Սեպտեմբեր 21ին:

«Ատալիօթրնան» Փօզէֆ Արախթի իր բոլոր զինակից ընկերներուն, պետերուն ու զինուորներուն վշտահար համակրութիւնք տարաւ իրեն հետ:

ԼԻԷՕԹՇՆԱՆ ԼՈՒԻ ՇՇԼԻՆՔԷՐ

Յրանաական ճակատին վրայ անպատճ մը վիրաւոր ինկած էր արդէն, և այդ առթիւ «սու-լիւթընան» իր առաջին երիզն ստացած և պատերազմի զամենեզարդ խաչով շքանշանուած: Զօրավար Բէթէն ստորազրած էր բանակի օրակարգին մէջ իր փառաստար յիշատակութիւնը: Ապաքինման արձակուրդով նշարարու գանուած միջոցին՝ Կիպրոս զօրակոչուեցաւ, Արևելեան Լէզէնին մէջ հայ կրօնաորները մարդելու համար:

Մէկուկէս տարի մեր ազաքներուն հետ ազրելէ յետոյ, մասնակցեցաւ Արարայի գրոհին, ուր ծանրապէս վիրաւոր ինկաւ: Անկէ Լիւաի գիւտօրական հիւանդանոցը փոխադրուեցաւ յաջորդ օրը, և Քօլօնէլ ալ Բիւրաբ, Պապետին-Ստրիական Զօրարածնի հրամանատարը, անձամբ բնծայեց Պատ-



ույ Լէզէնի շքանշանը Լիւթընան Շրլինքերին: Իր հայ քաջերէն սիրուած և անոնց արժանի երխտասարդ գիւտօրական մըն է որուն անունը հաճուքով կարծանազրենք հաս, իր աննոպեղ պատկերին տարնիներ:

ԹԱՂՈՒՄԷՆ ՎԵՐՋՈ

Ընկերացո՛ւ՝ ՍԵՐԺԱՆ Ս. ԹՕՍՈՒՆԵԱՆԻՆ

Բնութիւնը իր ներգաճնակ խաղաղութիւնը կոր-
սրնցուցած է: Մաթրինի անուշ հասերուն, ճղրթիճներու
միօրինակ ձայնին յաճարգած է փառօրի խեղդիչ հոտը և
գնդակներու սճրաչունչ սուլումը: Չորս կողմերնեւ
սեղ ժայտեր, իրա մայրաւներ կը բարձրանան: Բնու-
թեան այս ծոցին մէջ ո՛չ մէկ գեղեցկութիւն կրցած է
բոցն գնել: Երկնքի աստղերը իրենց մերանոյշ տկ-
նարկները հոս միշտ ափսոսանքով կ'ուզղեն կարծեա:
Զգացող սիրտ մը, ժպտող շրթունք մը չէ գիտնարած
իրենց յուսատու, այս նոյն ժամքը:

Եւ մենք, խրամներու մէջ, ժայտերու ետին դարա-
նակալ, կը սպասենք: Ի՛նձ ու զձեռնակն գործ մը, յոյս
մը իրականացներու եկած ենք: Մահուան հետ պիտի
գտնեմարտինք, անոր խորհրդատու և զահանգիչ գաղա-
նիքին և մեր միջև եղած տարածութիւնը այլևս հա-
տած, լննցած է: Վախ չի կար սրտերնուս մէջ, ամենքս
ալ սրագարխնութեամբ սրտչուած վայրկեանին կը սպա-
սելինք անհամբեր: Պիտի կուտինք, ասանց բնիկիկելու
պիտի խղանանք թշնամի պտտնէշներուն վրայ՝ մեր
կատաղութեան սակ փռելով անանց գասածանի մար-
մինները: Գիտալ, խղճալ մեզ համար մահացու մեղք,
աննեւելի սճիր մը պիտի բլլար: Պէտք էր ջարդել,
պէտք էր ոչնչացնել այդ եղեւնի վիճած ձեռք: Արեւ-
ծաղարծաթեան մահացու պիտալն է զար պէտք է մեր
ձեռքով սրբազրենք: Դահն և մեղքածոր շրթունքները,
խածակ նայումքները, սրբաստարեր ու ճարտար բա-
զակները միայն իրաւունք ունին սպրկելու: Անոնք,
մեր վրէժի թիրախները, ո՛չ մէկ տարրական սրբու-
թեան չի խնայեցին: Եւրաքանչիւրը անպայման հայ
կոյսի մը սրտախովը կ'աւանգած՝ մեր գիտնայ ցցուած կը

կենայ: Մեր ոճախին գուլայ-գուլայ բարձրացող ծուխը մարեցին, մարագին գոները կրանկի վրայ բայ ձգեցին, գաշտին հովիւք, սրինգին քաղցրունակ խալը շրթանքին, ոչխարներու սարսափի նայումներուն սակ, մեռցուցին:

Փամերը կը սահին, թնդանոթները անդազար կը գտան, ուսմբերն ու գնդակները մեր գլուխներուն վրայէն գիտարներու պէս սարալով կ'անցնին: Մեր յարձակման վայրը երկրորդ Տարտանէլ մըն է. բոլոր հրամանատարն րը մեծ վաստոթեամբ խօսած են տնար անխորտակելի ամբոթեան մասին: Իր խօսքան փեշերուն վրայ արզէն անթխ գոհեր փռած, ոտքերը աւելնով ներկած է: Բայց այս բոլորին հետ մէկանց թուրք գորքը բոլորովին բարոյալքուած վիճակի մը ենթարկուած է: Անօթութեան, ծարասին միացած է անդլիական ձիարներու սարսափք: Մեր ձախ թեւին վրայ թշնամի գունդ մը հրացանները ձգած կը փախչի, մինչ սպանները վեցհարուածեաններու կրակին սակ կը պարսաւորեցնեն զայն ետ գտանալ, կուր շարանակել: Հայ գունդերուն գալը գիրենք ո՛ր աւելի մեծ և անաւոր անդոհ մը մտանած էր: Կոթկառի խրացուցիչ «վրժ-վրժ» ր իրենց ուզն ու ծուծը խելայեղ պակուցումով պաշարած էր:

Փամերը մը սահին, քայլ առ քայլ վճակրան բուռն կը հասնինք: Մտթն ա լուսը հալիս ձեզբուած գէպի ձոր իջնելու հրամանը կը արուի մեզի: Թշնամին Արարայի գաւթթափին վրայ, մեզմէ յիտուն քայլ հեռուորութեամբ ամբակուս ժայռերու ետին սպասանած, շարանակ կը կրակէ: Մինչև ձորը անչուկ պէտք է որ իջնենք: Մէզմէ շատեր, որպէպի ձայն չեւէ, կօշիկներնուն սակ լսթեր կը կապեն կամ բոլորովին կը բուսպիկան: Զգալչ. ամենափոքր շուկի մը սկանջնիս անկած, աչքերնիս շորս կողմ. կ'իջնենք: Ուրախ էինք, վերջապէս արիւնի փոխան արիւն պիտի թափէինք: Բոլոր խումբերը, վայրկեանին գերապոյն գիտակցութեամբը աւլի, կ'իջնեն: Եթէ թոյլ տային, բոլորովին պիտի անտեսէինք կարգ մը զգուշութիւններ, որ մեր

վրայ բռնութեան, ճնշումի սպգեցութիւն կը գործէին, և երգերով, պարերով գրո՛հ պիտի տայինք:

Չորին մէջն էինք, վճռական թափին համար ըստ-ուստ կը սպասէինք, երբ յարձակման հրամանը արուեցաւ: Հրացաններ, արագահարուստներ, թնդանոթներ իրարու խառնուած՝ կրակէ աշխարհ մը ձեւակերպեցին



Խմբադասակներ Հայ Ազգ.ճեմակախոսններու Մ.ճեմարիայի (Կփարոս) մէջ

մեր շուրջը: Ամէն կողմ լոյս ու ծուխ, ամէն կողմ պայթիւն, գոռում գոչում: Հազարաւոր զնդակներ մեր ըզըտրտիքը, մեր գլխուն վերեւ, սուլելով կը թռչէին: Չեւնասումբեր ժայռերու վրայ, մայցաւներու մէջ ահեղ զզրդիւնով կը պայթէին, իսկ մենք այդ վարհուրելի կրակին բոցերուն մէջ թաղուած կը մագլցէինք:

կը բարձրանայինք, կատղած, նաչքերնիս իրենց կոպիճ-
ներէն գուրս ինկած: Հեւալով, բաշերնիս լեռն ի վեր
թօթուելով կը սուրայինք: Մահը այլեւս մեզ հետ գործ
չունէր, անոր ահաւոր կերպարանքը, մեր վրայ դիւթիչ
զեզուհի մը սպառնութիւնը կը թողուր:

Պէ՛տք էր բարձրանալ, պէ՛տք էր խիզախել, Հայուն
պատիւը, Հայուն ասպետական ոգին անաղարտ ազաւ-
նիի սպիտակափառութեամբ հրապարակ նետելով: Ի-
տէալին արագավազ երիւթարն էինք, լեռներէ, ձորերէ,
սուսպարներէ պէ՛տք էր որ շարունակ, հեւասպառ կա-
տաղութեան կաթնաթոյր փրփուրը վազեցնելով սլա-
նայինք:

Մեզմէ իւրաքանչիւրը ուրիշ մտածում չունէր
բայց եթէ քայլ մը աւելի յառաջանալ, թշնամի մը
աւելի զգեանել: Հրաման ընել, ուղղութիւն տալ աւե-
լորդ էր. կրակել, սպաննել, յառաջանալ, երեք զազա-
փարներ որ մեր մտքին մէջ խարսխուած կը մնային:

Գծոխային կրակին մէջէն յանկարծ ձայն մը, վի-
րաւոր արծուիկի մը ձայնը, այերին մէջ տարածուելով
ալիք-ալիք յառաջացաւ ու մարեցաւ մեր սրտերուն մէջ:

— Ինկա՛յ, ազա՛ք, վրէ՛ժս... :

Առաջին նահատակ ճնկրեան Մարտիրոսի հուսկ
բանքն էր որ մեր սրտերուն մէջ ահաւոր սասանու-
մով մը թաղուեցաւ, իր հետ թաղելով և մեր խիզճերը:
Կովկասի անխորտակելիներէն էր որ վերջը մեզ միա-
ցաւ և՛ մարտիրոսի լուսավազը գլխուն՝ ինկաւ: Ին-
կա՛ւ, սակայն արդէն մենք շատ մը զոհեր մատուցած
էինք իր անաղարտ հոգւոյն սեղանին վրայ: Իր գե-
րեղմանը շատ մը գիտկներու գանկերովն արդէն զար-
գարուած էր, կը մնար կասարել իր վերջին կտակը որ
հերոսի խոջանքներ կուտար մեզի:

Յարձակման թափը ա՛լ աւելի սասակացուցինք:
Աքիլեան գուպարն էր որ կը մղէինք: Հոմերոս իր գե-
րեղմանին մէջէն նոյնիակ պիտի տրամէր այս կի-
սաստուածներու փառքը չի կարենալ երգելուն: Գնդա-
ցիր, ձեռնառումը՝ կարկուտի պէս կը տեղար. շատեր

այդ տեղատարափով պաշարուած, պաղարխնութեամբ
կը շարունակէին աւելի անողոք թափով պատասխանել:

Գիտկներու, հոգեվարքի հոնդիւններու մէջէն բարձ-
րացանք, թշնամին առջնինս փոշիի նման արորելով:
Փազաթը հասանք, արշալոյսը գրկերնուս մէջ. խուս-
րը վերջնականապէս տարտղնուած էր: Շարքերը նախ-
կին սեղմ վիճակին մէջ ճառագայթարձակ կերպարանք
մը ունէին: Չո՛հ շատ քիչ կամ աւելի ձիշղը բնաւ չէինք
տուած: Յաղթանակի անկապտելի դափնեպտակը արիւ-
նի մկրտութեամբ գնուած, սարուկի ժանգոտած չղթան
մենք մեր կարչնեղ բազուկներով փշրած՝ սոսիսն ե-
րեսին նեամա՞ծ էինք:

Յառաջացանք, արընթաց սուրացինք՝ կորագամակ
փախչող վատոգի թշնամիին ետեւէն: Արարան Արա-
րասի միւռոնով օժած էինք:

Կոնսակէն վիրաւոր բնա՛ւ չունեցանք. բոլորն ալ ի-
րենց լուսափայլ ճակատէն զարնուեցան: Ի՛նչ հրաշագեղ
տեսարան: Մեր նահատակներէն ոմանց ծիծաղը գեռ
չրթունքներնուն վրայ կը պտտէր, ուրիշ մը ծնկաչօք,
անմեղունակ նայուածքը երկնասլաց, հրացանը գիւրկը,
կողէն հոտոզ արիւնը կարմիր կայլակներու մէջ օղակ-
ուած կը մնար: Կարծես գեռ ողջ էր և կ'ուզէր իր բն-
կերներուն փառապսակին ետեւէն թռչիլ: Նախանձելի
մահ՝ ո՛չ ոք պրկում, մահուան ջգածիզ ցնցում չունե-
ցաւ: Լուսարօրը երեսով մեռան իրենց անուշիկ կեան-
քին վրէժը կաակելով խեղալանուէր արիւնի ընկեր-
ներուն: Հերոսական ձիգերով ինկան, մարտիրոսի թա-
ղումով թաղուեցան մեր միւս ընկերներուն կողմէ:
Մենք այդ սրբազան վայրկեանին ներկայ չի կրցանք
գանուիլ, մեր ընկերական պարաքին մէջ ակամայ թե-
րացանք: Անոնց համբուրելի նշխարները չի կրցանք
մեր վրէժով շողախուած արցունքով թրջել:

Երբ մեզ ալ հանգստի հրաման արուեցաւ, մեր ա-
ռաջին գործը եզաւ ալցելիւ այդ շիրիմները, կատարել
ընկերական անդանցառելի սարտականութիւնը: Հսկայ
հողակոյտի մը շուրջը ցրցքնուած էին իրենց արիւն-
լուայ լաթերը, գլխարկները: Թուղթեր, լուսանկար-

ներ, գերեզմանին քով քաղցրիկ յիշատակներու պէս կեցած, իրենց տէրերուն կը սպասէին կարծես: Նշանածի պատկերներ, կարօտի նամակներ, սրտի քնքաշ պատասանէր, սիրոյ այրող շունչով տոչորուած, կ'սպասեն: Սոսառմեներ, սրբազան երգումներ կային գրուած զորս իրենց արիւնով կէքեցին: Իրենց համեստ շիրիմը ծագկեպակներու, հերարձակ կոյսերու առջև էր գանուեր, բայց ամբողջ սոգ մը՝ երկիւզածութեամբ ծունկ չոքած՝ իրենց հոգակոյսը վրէժով կը թրջէր:

Հաւաքուեցանք, գլուխնիս բաց, աչքերնիս իրենց ցուրտ հոգին վրայ սեւեւած, երկիւզած լուծեամբ կը սպասէինք: Սունկի հոտ էր բարձրանար, իրենց սրբաները արդէն կը ծխային: Ազօթք չի մըմնջեցինք, մեր պատերուն ծնկաչոք մազթանքները չբրինք, այլ ամենքս մէկ, խորին յուզումով, երգեցինք երգը խաւացի աղջկան: Երգեցինք մեր սրաները այդ վրիժագոտ երգերուն թեւերուն տուած գրկեցինք գէպի վեր իրենց մաքրամաքուր հոգիները խնկարկելու: Երգեցինք և լացինք այն բոլոր տասապեալ զօները որ գարերու մէջ ունեցանք և սրանց վերջակէտը գրին այս խիզախ Հայորդիները: Երգը կոկորդնուս մէջ չորցաւ, խոր հեկեկանք մը եկաւ անոր յուզիչ վանկերը շարունակելու... Լացինք, որովհետեւ խաւացի աղջիկներու առինքնոյ աչքերը մեր կամքին չի յանձնեցին հայրենիքին գրօշակը: Լացինք, որովհետեւ մեր աչքերուն մէջ սրտեր չի բոցափառեցան: Մեր քայլերուն անեղ գոռոյթը անսպասի անեղրութեան մէջ արձագանակեց, մեր հրակայ կեցուածքին մատաղ եղող հոգիներ չի գանուեցան: Եւ մենք լացինք մեր մարտիրոսները, լացինք մեր հերոսները և բոլոր անձանութ գերեզմանները: Վերջապի խորհրդանոր ճառագայթներուն յանձնած մեր արտասուայի նալուածքները, համբուրեցինք հոգակոյսը և հեռացանք նոր հերոսներու շարանը շարունակելու: «Մեր Հայրենիք»ի աղեխարշ վանկերը չրթներնուս և այդ վերջալուսային վեհաչուք պատկերը մեր սրբաներուն մէջ, հեռացանք: Այդ երգը Արարայի հողվրախքին անբաժան ընկերը եղաւ: Այդ օրը, այդ վերջալոյսը,

այդ տարազնուած արխնլուայ լաթերը և թուղթերը մեր սրտին էն քնքուշ խորքին մէջ թաղուած կը մնան: Այդ երգը հայ կամաւորի սրտին մէջ Արարայի զուգորդուած է այլեւս:

Եւ եթէ հայրենի վերածաղկած դաշտերուն վրայ օր մը ականէք մէկը որ՝ այդ երգին ի լուր՝ «անծէլիւս»-եան երկիւղած ներամփոփումով գլուխը բացած կուլայ, զո՛ւք ալ խոնարհեցէք այդ հսկային առջև, որովհետեւ Արարայի յիշատակն է որ անոր աչքերուն կը պարզուի անոր մէջ անցեալ հերոսամարտին հոյակապ պատկերն է որ կը վերակենդանանայ:

* * *

Վազը, հերոս պատերու հերոս զաւակները, նուա-տարդեան խնդութեամբ օծուն, պիտի դան տօնել այդ օրը: Հայրենի գիւղերու կանաչագեղ ձամբաները անոնց երգերովը պիտի պակագարդուին: Կոյսեր, երիտասարդներ իրենց ուխտը պիտի դան ընել ազատութեան այդ մեհեանին առջև:

Հ. Քէմը, Բօր-Սայխա

ԶԱԲԱՐ ՄՅԱԽԿԱՆ

ԵԳԻՊՏԱՀԱՅ ԸՆՏՐԱՆԻԷՆ

ԱՏԺԻԻՏԱՆ ՀԱՅԿ ԱԶԱՏԵԱՆ

Իրեն պիտի բաւէր «միտին» հանդիսացած ըլլալ՝ եղիպտահայ մաւաւորական ընտրանիէն՝ վճռական թափով մը նետուող հայ կամաւորական անձնուրաց շարքերուն մէջ:

Այս խիզախ ընթացքը—ինչու ծածկել հիմա—ումանց կողմէ սկիզբաօրէն նկատուեցաւ, ինչպէս avatar մը, և տեղերնին հանդիսատեայ պարոններ փորձուեցան իրենց սահմակումը, իրենց կորանքը պարտկել հեղոտու չկամ վերազրու մնելով: Քանի՞ օր պիտի տեւէր կը հարցնէին անոնք, երիտասարդ իրաւագէտին այս նոր «արկածը»...

Մէթր Հայկ Ազատեան արժանաւոր յուսովրիպում
մը վերապահած էր այսպիսիներուն:

«Սիւլի» կեանքը եթէ մասնաւոր պարագայ մը, ու-
շագրաւ պատեհութիւն մը չէր բնծայած քաղաքացիա-
կան գերազանց ընդունակութիւններ գուշակել տալու
համար իր մէջ, գինւորական տիրոյթը գինք յայտ-



նագործեց ամենուս համար իրիւ սրտոտ խառնուածք
մը, կտրիճ հոգի մը, որ ցայն վայր չէր գտեր նուիր-
ուելու կուռք մը, վասնուելու պատրուակ մը և որ հի-
մա կը յորդէր, կը զեզուր, ինքնամատոյց, բոլորանուէր:

«Սիպարիթ»ի հովերով այս փափկակազմ երիտա-
սարգը, որ Ֆիզիքական քիչ կորով թափած ըլլալու չէր

զինք իրաւագիտութեան «Տօքթէօր»ի արտոգոսին հասցնող համալսարանական ուսման շրջանին, չգուտ ատուումութեամբ մը ճկեցաւ «բուսլի»ի խտաներէր կենցաղին:

Իրաւագիտական ու լեզուագիտական իր բացառիկ կարողութիւնները այս ընտիր զինուորին առջև գործունէութեան նոր ու լայն սապարէզ մը կը բանային, իրերու բնական բերումով մը:

Մէթր Ազատեան գերազանց միջնորդ մը կ'ըլլար Հայկական Լէզէոնի Ֆրանսական պաշտօնակոյտին և հայ շարքերուն միջև: Կարգապահական խնդիրներով պատերազմական տեսանիւն առջև հանուող կամուրներու պաշտպանութիւնը իրեն կը յանձնուէր յաճախ, և Եզիպտական Պառն-Պատարաններուն մօտ առեւտրական դասերով միայն զբաղած այս փաստարանը իր նոր դերին մէջ երեւան կը բերէր հազուադիւտ տաղանդ և խանդավառութեան ազնիւ ձիրքեր:

Մէթր Հայկ Ազատեան Հայկական Լէզէոնի մեր կամուրներուն պաշտելին զարծաւ, իրենց ծառայելու, իրենց ամէն կարիքին հասնելու պատրաստակամութեան մէջ զբաժնուողովը, տեսակ մը վեհանձն կիրքովը:

Իր «Լ.Ֆ»երը բարձրօրէն գնահատեցին, անշուշտ, այս զինուորեալ մտաւորականին ձեռնհասութիւնը որ ա՛յնքան օգտակար պիտի ըլլար իրենց զբաւուած երկիրներու կազմակերպութեան գործին մէջ: — Առժիտան Հայկ Ազատեան անոնցմէ է որոնք մեր օտար բարեկամներուն զրականապէս կ'ապացուցանեն հայ ցեղին արժանիքը, և կը վարժեցնեն զանոնք վստահութեամբ նայիլ մեզի, ինքնատիրացման մեր խոյանքին մէջ:

Պատերազմի քուրայէն անցած, զտուած, թրժուած ուժ մըն է ան, որ գտած է այլեւս իր արգասանդ ուզին որ եզիպտահայ լճացումէն անվերապահօրէն բացակայ՝ կոչուած է խիտան մը ըլլալ, իր ներշնչող օրինակովը, նորանոր հայրենանուէր կորովներ յարուցանելու Նեղոսի ափերուն վրայ երազող մեր մտաւորական ընտանիէն:

ՍԷՐԺԱՆ ԳՈՒՐԳԷՆ ԶԻԼՃԵԱՆ

1895ին ծնած է Պօլիս, Սամաթիա հայ թաղին մէջ, ուր Գնունիի, Անդրէասեանի և ընկերներուն ուսմբերը՝ տարի մը յետոյ՝ սարափեցուցած են իր միամ-



եայ երախայ օրօրոցը: 1912ին Ամերիկա գաղթած է, և իր ուշխմութեամբ ու աշխատասիրութեամբ բարեկէշիկ բանորի գիրք մը սպահնոված է իրեն:

Հայ կամաւորական շարժման առաջին մարտակոչին խիստարատ գրանրեցաւ անվարան էքելու մայրը, քոյրերն ու եղբայրները, և բարօրութեան ու սպազայի ամէն հաշիւ ոտքի տակ առնելով՝ վազեց հոն՝ ուր պարտականութեան ձայնը զինք կը կանչէր: Սեպտեմբեր 1919ի պատմական գրոհին, Հայկական Լեզէոնի գիւցազնական շարքերուն նախայորձակներէն մին եղաւ Սէրժան Գուրգէն

Զիլճեան, որ՝ իր անդխնայրելի վազքին մէջ մահազինութեն զարնուած ինկաւ ու թաղուեցաւ Արարայի վրայ՝ գազափարի իր կարիճ համարչներուն կողքին:

ԱՐԻՒՆՈՏ ԵՐԿԻՐ

Հայրենակցիս՝ Էլզաբեթանցի ՍէրժԱՆ ՄԱՆՈՒԿԻ
յիշատակին

Սրտերը արիւնոտ, սարերը արիւնոտ, սուրերը արիւնոտ...

Ընդ միշտ յիշողութեանս ամօրէն մէկիկ մէկիկ կուգան կ'անցնին հայկական գուլումներէն խօսող տըխուր գրուագներ: Ահա՛ կոկորդը, ձեռքերն ու ծիծերը վայրագօրէն յօշոտուած, կտրատուած Հայուհիներ և Ակուած ու բռնարարուած անթիւ աղջիկներ... Ծնողագուրկ փոքրիկներ, անեղ տեսարաններէն ու հրացաններու որտաագոչ պայթիւնէն շուարած, քարերու և պատերու տակ ամքած ու սքլած և նուազած մայրերնին կը փնտռեն... Մայրերը՝ կորուսած իրենց զուկըները, ազիտորմ՝ կոծանքներով, կը կանչեն... Ու երկնքի կամարները կը թնայան անտոնց վայրններէն: Տխուր խոհեր կը պատեն զիս և անթիւ խորհուրդներ կը զեռան զանկիս մէջ: Կը տարուիմ անցեալով, ու մտովի փոխադրուած մեր բարձրաբերձ, վիթխարի սարերուն վրայ, ուր երբեմն Յուլ և Ասիւծ իրարու յաջորդեցին, և ուր, ափսո՛ս, վերջին անգամ փայլեցաւ ու մայրամուտ եղաւ Հայուն արեւը, կը յիշեմ կիլիկեան եղեմական աշխարհին մէջ օրինակելի քաղաքակրթութեան մը, արծաթ գրականութեան մը և հայեցի գեղարուեստի մը վերածնունդը, օտարներուն աչքին անգամ նախանձելի:

Այդ երկրին հարագտա զուակն էր Էլզաբեթանցի Սէրժան Մանուկը: Յաճախ արիւն արցունքով կը յիշէր Զէյթունի հին փառքերը, և իր տեղահան հայրենակիցներուն սարաափելի մորթոտու մը Տէր-Զօրի և

Ռէսուլայնի սպանդանոցներուն մէջ: Ո՛ր որ նստէր, և որո՛ւ հետ որ խօսակցէր, վրէժ կը քարոզէր: Իր ասարախա ծնողքը Չէյթունի վէս ժայռերուն մէջ անտիական ծաղիկ հասակէն իրեն սորվեցուցած էին սուրին ու գէնքին երգը:

Վախը անձանօթ էր Մանուկին: Արարային առջև, կը հեզներ ան թշնամի ամբօթիւնները, վասն զի ինք Կիլիկիոյ ժայռերուն եղնիկն էր եղեր:

Եւ վճռական գրոհին, գնդակներու, ուռմբերու տեղատարափին մէջէն, սուխամերկ խոյացող ու պատահասի պէս թշնամիին վրայ յարձակող առաջին քաջերէն եղաւ:

Գիտէր Մանուկ որ մահը չի պիտի խնայէր իրեն, բայց ի՞նչ փոյթ, ինք մինակ չի պիտի հանդէր փառքի բլուրին վրայ: Մուսա-Լեւրան զոյգ մը հերոսները և Հայաստանի ու Կիլիկիոյ պաշտելիներէն ալ մաս մը իրեն հետ կողք կողքի պիտի ննջէին հոն յախտան: Եւ իրենցմէ ոչ-չառ հեռու՝ Սալթ գաւառակի Այնի-Սիւվէլան չէրքէզ գիւղին մէջ, տեղակալ Համաիի, հըրամանատար Պէտրիի ու միրալայ Էմիրզէի գրգումով 1918 Ապրիլ 5ին շարաշար մտրթուած 160 հայ տարագիրները, ինչպէս Անմանի ու շրջակայքի հազարաւոր նահատակները, իրենց շառ մօտիկ պիտի բլլային միշտ, ու Արարայի կատարէն փչող անդորրիչ հովերը պիտի օրօրէին յաւէս անապատի մեր բոլոր եղերարազդ մեռելներն ալ. . . :

ԳՐԻԳՈՐ Գ. ԳՈՒՏՈՒԼԵԱՆ

Բօր-Սայխա Հ. Քէմբ



ՈՒՐՏԻ ԿՈՒԳԱՄ

Մտերմիս՝ ՍէրժԱՆ ՄԱՆՈՒԿ ԻՆ

Հեռով՝ հերոս աւերուած Հայրենիքէն մեր դրժբախտ՝
Արարայի բարձունքը ընտրեցիր դուն գերեզման...

Ափ մը մոխիր ձեռքիս մեզ անխնայեան Հայրենեաց,
Արիւն-արցունք աչքերուս՝ ուխտի կուգամ քեզ այսօր...

Քեզ կը բերեմ օրհնենքը մեր պապերուն յաղթական՝
Մեր անարգուած մայրերուն համբոյրին հետ սիրակաթ.
Քեզ կը բերեմ անբառամ փունջ մը ծաղիկպերիսէն
Զոր խոտանգուած տոյրերդ հաւաքեցին արցունքով...

Դուն ո՛վ հոգի անձնուրաց, վրեժխնդիր նահասակ,
Քեզ կը բերեմ պատճառներէն իմ սրգաւոր հոգիիս՝
Որուն ա՛յնքան դուն մօտիկ մաքուր սիրովդ ապրեցար,
Ու գերեզմանդ բողոջի իբր Փառքի Յիսասակ...

ՕՆՆԻԿ ՄԱՀՏԷՍՅԱՆ

ԻՆՉՊԵՍ ԾՆԱԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵԳԵՈՆԵ

(Ձրանսերէն ընազրէն Թարգմանուած - Ծ. Հ.)

Ճէպէլ-Մուսայի Հայերը, զորս մենք փրկած էինք,
չէին կրցած թեթեւ սրտով թողուլ իրենց լեռներն ու
պապքարը անխճապարտ թուրքին դէմ:

Իրենց սիրտը կը յորդէր ատելութեամբ և վրէժով:
Ամէն օր, իրենցմէ պատուիրակութիւններ կ'ընդունէի,
որոնք կուգային ինձի պարզել զորձողութեան արկա-
ծալի յատակագծեր: Իմ պետերս զիրաւ ըմբռնեցին
թէ կարելի չէր ամբողջ այդ կտրիճ երիտասարդութիւ-
նը ձգել որ Բօր-Սայխաի «քէմը» ինձէջ, աւազին վրայ,
անհամբերօրէն դափրէ: Բօր-Սայխաի Ծովային Սպա-
յակոյտը անոնցմով շահադրդուեցաւ և քիչ յետոյ ըս-

կրտաւ աալ անոնցմէ փափաքողներուն զինուորական մասնաւոր կրթութիւն մը, Գաղթականներու «Քէմը»ին մէջ իսկ : Հրամանատար Պրնուա ա՛ՆԱգի, «Ժօրէկի-պէրի» ի հրամանատարը, որ ստանձնած էր սազմակրթական այս պաշտօնը, իր ճշմարտապէս Փրանսական սմբողջ կորովը զրաւ ստուարացնելու զինուորագրուողներու թիւը և անոնց մէջ զօրացնելու մարտական կրթանքը :

Ես օգնական նշանակուեցայ Հրամանատար Պրնուա ա՛ՆԱգիի, վարելու համար այդ շարժումը, որ անակընկալօրէն արգիւնաւէաւ եղաւ :

Քիչ ժամանակէն, ամբողջ գումարտակ մը կատարելապէս կրթուած էր, շնորհիւ նորագիրներու եռանդին, և պատրաստ էր ի հարկին գործողութեան մէջ մտնելու : Այն ատեն է որ զրուեցաւ հարցը ամբողջ այդ ջերմեռանդ և զինավարժ երիտասարդութեան օգտագործումին :

Ճէպէլ-Մուսայի Հայերուն Գումարտակը կորիզն եղաւ Լէզէոնին : Հայերը շատ բան կը պարտին առնական կորովին այդ հայրենակիցներուն որոնք նախ զիացան իրենց երկրին մէջ Թուրքերը պարտութեան մատնել, և յետոյ կազմակերպուիլ մեծ հայրենասիրութեամբ ու կարգապահութեամբ :

Հրամանատար Ռօմիէօ Փարիզէն եկաւ «միաօն» ունենալով ձեռք ատնել ո՛չ միայն Ճէպէլ-Մուսայի փախըստականներուն մէջ արդէն ստեղծուած շարժումը, այլ եզրիպատի հայկական շարժումը որ՝ Յրանսայի կողմէ Ճէպէլ-Մուսայի երիտասարդութեան արուած զինուորական աջակցութենէն : քաջալերուած՝ կը յայնապործըւէր սազմական աւելի լայն համեմատութիւններ առնելու երաշխիքներով :

Ծովակալութիւնը, որ ցայն վայր Հրամանատար Պրնուա ա՛ՆԱգիի միջոցով զբաղած էր Հայկական զինուորական հարցով, իր «միաօն»ը կը փոխանցէր Բանակին, Հրամանատար Ռօմիէօին որ առ այս եկած էր մասնաւորապէս Փարիզէն : Ես այն ատեն Ծովակալութեան Սպայակոյտին կողմէ Հրամանարատ Ռօմիէօի «միաօն»ին

կցուեցայ: ձեպէլ-Մուսայի Հայերը՝ տեսնելով որ իրենց
բազմանքները աստիճանաբար կ'իրագործուէին՝ առա-
ջինները եղան պատասխանելու մեր նոր կոչին: Վեց
հարիւրի չափ համաւորներ արձանագրուեցան, և Մովս-
կալութեան կողմէ մարդուած սկզբնական գումարտա-
կը լայնօրէն կրկնապատկուեցաւ: Եզիպտահայոց հա-
մար կացութիւնը աւելի փափուկ էր: Ես կրնայի խմ
պետերուս առջև երաշխաւոր ներկայանալ ձեպէլ-Մու-
սայի երիտասարդութեան համար: Ես զայն պէտք եղա-
ծին չափ կը ճանչնայի անմոտանալի այն օրէն ի վեր,
ուր ինձի տրուած էր իր փրկագործումին աստարել:
Բայց եզիպտահայ երիտասարդութեան համար չէի կըր-
նար այնքան անպիրապահօրէն հուսադրելներ տալ:

Չիս կ'ահարեկէին մանաւանդ կուտակցական նա-
խանձորդութիւնները, որոնցմով Հրամանատար Ռօմի-
էօն ալ մեծապէս մտահոգուած էր: Ասէն բանէ առաջ,
և քանի որ հիմա հայ ազգ. շարժում մըն էր որ կը ծը-
նէր Պրանսայի հովանիին տակ, պէտք էր հայ կուտակ-
ցութիւններու միաբանութիւնը իրագործել, աւելի ա-
պահովապէս և անոնց հետ համաձայն աշխատելու հա-
մար: Ես բաւական ծանօթ էի եզիպտոսի ինչպէս այ-
լուրի Հայոց հայրենասիրութեան: Վայրկեանը հանգի-
սաւոր էր: Բարձր-Հայքը թրքական լուծէն ազատագր-
ուած էր արդէն ուսս յազթական զօրաց կողմէ. հայկա-
կան կազմակերպուած և տարամերժօրէն ազգային գոր-
ծողութեան անասնման տենչանք մը կը ցնցէր բոլոր
սրտերը. միջնորդաբար նպաստաւոր էր: Բարեկամներ
ինէ խնդրեցին ինքս իսկ փորձել, հայ ծագումով Քրան-
սացի սպայի հանգամանքովս, յառաջ բերելու այդ
միաբանութիւնը, վստահ թէ պիտի յաջողէի: Հակառակ
այդ մասին ունեցած խմ ալ վստահութեանս, կը նախ-
ընտրէի սակայն ձեռնուզան մնալ չափազանց ուղղակի
զեր մը կատարելէ: Ես զինուորական մըն էի ամէն բա-
նէ առաջ, լաւ արամադրուած և յստակատես պետ մը
ունէի, և սպահով էի թէ ոչ կամ կանուխ այդ միա-
բանութիւնը պիտի իրագործուէր: Մենք թզթակցու-
թեան մէջ էինք եզիպտահայ զանազան կազմակերպու-

թեանց հետ որոնց մէջ բաւական բարեկամներ և վրասահելի յարարերու թիւններ ունէի: Անհատապէս բոլոր Հայերն ալ համաձայն էին Ազգային Միութեան անհրաժեշտութեան մասին՝ զինուորական նոր ծնող շարժումին հանդէպ զոր Ֆրանսան ինքնամատոյց կ'ըլլար վարելու ամենուն ալ կարծիքովը այսպէս էր կացութիւնը: Օր մը համարձակեցայ ըսել. «Հրամանատարդ իմ, հայկական միութիւնը պիտի կատարուի, անիկա պիտի կատարուի Ֆրանսայի անունով. պահանջեցէ՛ք զայն, այդ անունով, և դուք զայն ձեռք պիտի բերէք:»

Հրամանատարը գրեց, և՛ ինչպէս նախագացուած հրաշքով մը՝ կուսակցութիւններու միութիւնը կնքուած էր Եգիպտոսի մէջ քանի մը օր յետոյ: Զինուորագրութեան յանձնախումբեր հաստատուեցան Փահիրէ և Ազեքսանդրիա: Ծէպէլ-Մուսայի մեր նորագիրներուն հետ Ա. Վաչախ մը զօրաթիւը արդէն սպահովուած էր Արեւելեան Լեզէոնին:

Պաշտօն ունենալով Բօր-Սայխաի մէջ զինուորագրութեան բարոյական և քաղաքական հսկողութիւնը կատարելու, Արեւելեան Լեզէոնին Կիպրոս փոխադրութենէն յետոյ, ես մեծ հրճուանքն ունեցայ տեսնելու գալուստը ամերիկահայ մեր հիանալի կամաւորներուն զօրս երբէք բաւական զոված չպիտի կրնամ ըլլալ:

Ֆրանսայի Օտար Լեզէոնին կարիճ վերապրողները և Միջագետքի ու Պաղեստինի ազատագրուած զինուորական հայ զերինները եկան բոլորն ալ ստուարացնել Հայկական Լեզէոնին շարքերը: Անիկա ալլեւ լաւ հաստատուած ուժ մըն էր, որով հպարտ կրնային ըլլալ Լեզէոնին պետերն ու Հայերը: Բոլոր այդ պատուական ազաքը զօրս այնքան կը սիրեմ, ու որոնց՝ միջոցներուս ներած չափով՝ դադրած չեմ օգտակար ըլլալէ, զիս լուսագոյնս վարձատրած են սկիզբի շրջանին իմ ճիգերուս ու նեղութեանցս փոխարէն, և անհամբերօրէն բաղձացուած այս ժամուս՝ երբ անոնք մեծագոյն բերկրանքն ունին Ռուբինեանց ազատագրուած հողին վրայ կոխելու, իմ մտածումս աւելի քան երբէք անոնց

հետ է: Անհատները հաշուի չեն առնուիլ խոչալին հան-
դէպ: Երբ մարդ զինուորական է և կամուտը, միակ գո-
հունակութիւնը զոր կրնայ ունենալ՝ կատարուած պար-
տականութեան զգացումն է:

ՏԻՐԱՆ ԹԷԲԷԱՆ

Գովիսէր Ֆրանս. Ծով. Իշխանութեան

1919 Յունվար



ԱՂԱՂԱԿ ՄԸ ՏԷՐ ԶՕՐԷՆ

ՅԱՂԲԱՆԱԿԻՆ ԴՐՕՇԱԿԸ

Սիրելի Պարթեւեան,

Անակնկալ մը պիտի ըլլայ իմ ձայնս, որ Զօրէն՝
այս մեծ գահճատունէն՝ կը հասնի Ձեզի: Երկու տարի
առաջ իբր մահապարտ զէպի անտպատ կը նետուէի
Պօլսէն, բայց մահուանս ճամբուն վրայ, բախտը օգնեց
և խառնուեցայ աքսորականներու ախար կարաւանին:
Այլ անունով հասայ մինչեւ Համամ, ուր զինուորա-
գրուեցայ բնօրէն և որպէս աստղճագործ զրկուեցայ
զէպի Տէր Զօր:

Ողջ եմ հիմա, այս ահաւոր ջարդատան մէջ, ուր
հարիւր յիսուն հազար Հայեր ինկան: Այդ նահատակ-
ներու բեկորներէն կը մնայ միայն հազիւ հազար հինգ
հարիւր հոգի, հոս հոն ցիր ցան, մեծ մասամբ կին:

Բախտը կարծես զիսու մով հոս նետեց զիս ու ողջ
պահեց. թերեւս ակամատես ընելու համար ջարդի ե-
ղեռնափայրերուն:

Հոս հաղիւ թէ թուրք ոճրագործ բռնութիւնը հե-
ռացաւ այն ճամբայէն ուր Հայուն սոկորներու կոչար
կը քնանայ, « Որբախնամ » մը կազմուեցաւ և հաւա-
քեց ջարդի խլեակները որոնց թիւը վաթսունի կը
հասնի այսօր, Այդ կենդանի պատմութիւնները կ'ըս-
տանան օրական քիչ մը անունդ բայց մերկութիւննին
չէ պատասպարուած դեռ : Ի՞նչով կարելի էր հոգալ այդ-
քանը երբ հոս ամէն Հայ որը ու հացակարօս է այսօր :

Եթէ անմիջական օգնութիւն չը հասնի, դժբախտա-
բար, վերահաս ճմուռ կը սպառնայ տանիլ այդ հեղ բե-
կորներէն շատերը :

Հոս, սիրելի Պարթեւեան, աքսորանքիս մէջ թէև
անհունօրէն տառապեցայ, բայց տառապանքս քնարս
արթնցուց : Պատրաստեցի « Դէպի Անապատ » անուն
երկս ուր Հայ Տարագրութիւնը կուրամ իրը ականատես
վկայ : — Դո՛ւք սակայն հոս ըլլալու էիք, Պարթեւեան,
վէրքերու մօտ՝ երգելու և անմահանալու համար :

Տակաւին օրինաւոր վարչութիւն մը չի հասաւ Զօր :
Ի՞նչ լուր Հայաստանէն. տակաւին մութին մէջն եմ
Մայր- Հայրենիքին մասին :

Բայց, Պարթեւեան, տառջին առիթով, ա՛խ, չի մոռ-
նայիք գրկել ինձի հոս, Զօրի մէջ, հայ ջարդուածնե-
րու սոկորներուն վրայ, Հայ Յաղթական Դրօշակը որպէս
ընծայ նահապահներուն : Անոնք, իրենց աւագներուն
տակէն, հաւատացէ՛ք որ պիտի ժպտէին :

Համբոյրներով Զերդ

ՍԱՀԱԿ ՄԵՍՐՈՊ



ՇԻԹ ՄԸ ԱՐՑՈՒՆՔ՝ ԻՄ ԹԱՂԱՐԻՍ



Եղբորս՝ ՄԱՐՏԻՐՈՍ ՏԷՐ-ՊԱՐՐԻԷԼԵԱՆԻ յիշատակին

Սիրելի Պարթևեւեան,

Թոյլ տուէք որ շիթ մը արցունք ալ ևս ցօղեմ՝ Ձեր «Արարա»ին մէջ որ կոչուած է՝ ԲԼԼԿԱԼ ցեղիս հերոս նահատակներուն ձօնուած սխրալի բուրաստան մը, և որուն մէկ անկիւնը թագար մը ունիք անշուշտ իմ բերելիք թարչամած, այլ անմեռ ծաղիկիս համար:

Եղբորս յիշատակին է ան: — Մարտիրոս ՏԷՐ - Պարրիէլեան, ծնեալ Սենյրդի, հազիւ քսանվեց զարուհներ բռնորած, Հայրենի գիւղին վարժարանէն ելլելէ յետոյ, քանի մը տարի գեղջկական դպրոցներու ծառայեր է իր ք. ուսուցիչ: Օտմ. Սահմանադրութեան վաղորդայնին՝ Պոլիս կուգայ, և, շատերու պէս յուսաւր է պ'կանցնի Ատիս-Ապաստան, ուր հազիւ կրուուան մը ապահոված էր իրեն, երբ կը պայթի ճահմաշարհային պատերազմը:



Կովկասի ճակատը բռնկած էր: Անդրանիկի ու Քեռիի գունդերուն քաջադարձութիւնները կը խանդա-

վառէին Արտասահմանի Հայութիւնը, և արձագանգ տալով մինչև Եթովպիա, անկէ ալ ութնեակ մը կրտսրիճներ ձամբայ կ'իյնային, երթալ միանալու հայրենի սահմաններէն ներս խոժոց իրենց սաղմիկ եզրայրներուն:

Ատոնցմէ մին էր հարագատա:

Պուլկար սայթաքումը, սակայն, կը գոցէր յանկարձ Պալքաններէն դէպի Կովկաս ձամբան: Ու մեր ամենի ուխտաւորները կը ստիպուէին իրենց ներսիցին անթեղել վրէժին կրակը մինչև Հայկական Լեզէոնին կազմութիւնը, որ չուշացաւ:

Քանիցս փորձեր էի ետ կեցնել եզրայրս կամուրջական անձնագոհութեան ձամբէն, ինքզինք վերապահելու համար ուրիշ նուիրումի մը, վաղուան հայրենի վերականգնումին: Բազմանգամ ու կոտորուած ընտանիքի մը միակ առողջ մնացորդը, մեր օձախին վերաշինման միակ յոյան էր Մարտիրոս...: Պահ մը յուսացի թէ կը համակերպէր իմ տեսակէտիս: Բայց օր մը անսայ թէ մեկնած էր հո՞ն, ուր սրտոտ Հայրդիները ժամադիր էին, և ուր ողջակէզի նոր սեղան մը պիտի սարքէր սպասութեան անյազ բագինին առջև...:

Իր վերջին երկտողին մէջ, վրէժի ծարան էր որ կը խօսէր, «Սիրելի՛ եզրայր, գիշերն ի բուն անձայն անշշուկ քալեցինք: Հիմա թշնամիին դէմ յանդիման ենք: Ակումներնից կճրտելով, վայրկեան առ վայրկեան կրակի մկրտութեան կը սպասենք»...:

1918 Սեպտեմբեր 19ի դիւցազնամարտին հոյակապ գրուազն է որ կը կերտուէր քանի մը օր վերջը: Գրժոխածին էնվէրներու անխորտակելի դաւանած վերջին պատուարը՝ Արարան կը փշրուէր մեր վրէժինդիր մարտիկներուն կատաղի գրոհին տակ...: Տաճիկ սճրաղանգ բռնակալութեան մեծաշառաչ փլուզումն էր որ տեղի կ'ունենար...: Փա՛նք մեր նահատակներուն:

«Արարա»դ, սիրելի Պարթեւեան, պիտի յուշածուն ըլլայ երախտագէտ Հայուն, որպէսզի՝ վազը՝ նագովրեցիին գերեզմանին մօտ՝ ուրի՛շ զամբարան մըն ալ կառուցուի եզրօրս հետ հանդչող քաննեակ հերոսներուն վրայ՝ որոնք սահմիրաներն եզան հայ սպասու գրութեան:

Աղի քանդորիս

ՈՍՏԱՆԻԿ ՏԷՐ-ԳԱՐԲԻԷԼԵԱՆ

ԱՐԱՐԱՅԻ

ԿՈՒԻԻԻՆ ՎԻՐԱԻՈՐՈՒԱԾ ՀԱՅ ԶԵՆԻՈՐՆԵՐԸ
(19 Սեպտեմբեր 1919)

- Աւետեան Յարութիւն, 6 գում., Մալաթիա Ամերիկահայ
Աթանիկեան Արթաքի, 4 գում., Կ. Պօլիս, Գահիրէէն
Առաքելեան Ղուկաս, 4 գում., Բալու, Ամերիկահայ
Բառլեղեան Կարապետ, 4 գում., Տիգրանակերտ, Գահիրէ
Բուլուքեան Սարգիս, 4 գում., Բերրի, Ամերիկահայ
Բայթօնճեան Յուսիկ, 5 գում., Մեղրէ »
Գասպարեան Յովհաննէս, 6 գում., Մալաթիա »
Գաբրիէլեան Հայկազն, 6 գում., Պարբերդ »
Գասպարեան Եղիս, 4 գում., Պարբերդ »
Գարամանեան Սարգիս, 6 գում., Սուէախա
Գլըլճեան Լեւոն, 4 գում., Սուէախա
Գարաեան Աբրահամ, 5 գում., Գահիրէէն
Դաւիթեան Արմենակ, 5 գում., Չմշկածայ Ամերիկահայ
Դանիէլեան Մանասէ, 5 գում., Քէսսպ »
Եկաւեան Կարապետ, 5 գում., Արարկիր »
Երլտըճեան Տիգրան, 5 գում., Տիգրանակերտ »
Եղնիկեան Եղնիկ, 4 գում., Արարկիր, Գահիրէէն
Եղիաեան Արթիւն, 4 գում., Երզնկա, Ամերիկահայ
Զիկզիկեան Միքայէլ, 5 գում., Լյէրէկ »
Էկինեան Եսդուպ, 5 գում., Չնքուշ »
Թասլաքճեան Պետրոս, 4 գում., Սուէախա
Թեւոնեան Յովհաննէս, 6 գում., Չնքուշ, Ամերիկահայ
Թաշճեան Յակոբ 2 գում., Տիգրանակերտ »
Թօփալեան Ստեփան, 6 գում., Սեբաստիա »
Թըրըզճեան Պօղոս, 5 գում., Չնքուշ (վերջէն մեռած)
Սոստիկեան Թովմաս, 6 գում., Սուէախա
Սէրպէկեան Գէորգ, 4 գում., Պարբերդ, Ամերիկահայ
Սանդատեան Մեսիա, 5 գում., Կիւրին »
Կարապետեան Լեւոն, 5 գում., Պարբերդ »
Կարապետեան Պետրոս, 4 գում., Սեբաստիա »
Հանէսեան Ճօրճ, 5 գում., Սուէախա

Հածինեան Մինաս, 4 զօմ, Կեսարիա, Ամերիկահայ
 ձերմակեան Սիրական, 4 զօմ, Մարզպան »
 Մաղօեան Մովսէս: 5 զօմ, Խարբերդ »
 Մարաշեան Սարգիս, 5 զօմ, Կիւրին »
 Մինասեան Նշան, 4 զօմ, Խարբերդ »
 Մուրատեան Յակոբ, 4 զօմ, Կեսարիա »
 Մանանեան Կարապետ, 5 զօմ, Թօմարզա »
 Մեռեան Կարապետ, 3 զօմ, Իզմիր, Գահիրէն
 Մաթիկեան Մեարոպ, 4 զօմ, Խարբերդ, Ամերիկահայ
 Մէթիթեան Պեարոս 4 զօմ,
 Յակոբեան Մերոն, ճ. ի, Կեսարիա, Ամերիկահայ
 Յովսէփեան Վահրամ, 5 զօմ, Քէսասպ »
 Ներսէսեան Յակոբ, 4 զօմ, Խարբերդ »
 Ներսէսեան Աննքերիմ, 5 զօմ, Սերաստիա »
 Շաղօեան Յակոբ, 5 զօմ, Էլէրէկ »
 Շալձեան Յակոբ, 5 զօմ, Կեսարիա »
 Չիւրիոնց Արամ, 6 զօմ, Քէսասպ »
 Պօղոսեան Բօլ, 5 զօմ, Քէսասպ »
 Պետեան Կարապետ, 4 զօմ, Պրուսա, զերի կամաւոր
 Պէրպլերեան Ղուկաս, 6 զօմ, Խարբերդ Ամերիկահայ
 Պէրպլերեան Տիգրան, ճ. ի, 2 սաթ, Տիգրնկրա. »
 Պեարոսեան Պարսամ, 4 զօմ, Խարբերդ »
 Պէպրոսեան Աստիկ, 4 զօմ, Էլէրէկ »
 Պարիիրձեան Արմենակ, 5 զօմ, Կիւրին »
 Պալձեան Գեորգ, ճ. ի, Խօտսաթօ, Գահիրէն
 Սաղարձեան Ովսիա, 5 զօմ, Քէսասպ ¶ »
 Սարգիսեան Սաչատուր, 5 զօմ, Կ. Պօլիս, Գահիրէն
 Սաչաքլեան Յովնաննէս, 4 զօմ, Մալաթիա, Ամերիկահայ
 Սիոսեան Յովնաննէս, 6 զօմ, Քղի »
 Սողոմոնեան Եսայի, 5 զօմ, Քէսասպ »
 Տէրաբերեան Նիկողոս† 5 զօմ, (վերջէն մեռած) »
 Քէրէկեան Նազարէթ, 4 զօմ, Ատանա, զերի կամաւոր
 Քէնտիրեան Ահարոն, 6 զօմ, Խարբերդ, Ամերիկահայ
 Քէսէձեան Վահան, 4 զօմ, Կ. Պօլիս, Գահիրէն
 Քըստիկեան Եսայի, 6 զօմ, Քղի, Ամերիկահայ
 Օսկանեան Աւետիս, 6 զօմ, Խարբերդ »
 Յէրարեան Պեարոս, 5 զօմ, Խարբերդ ¶ »

ԱՐԱՐԱ

Ընկերոջս՝ Ն. ԸՆԹԵՍՆԻԿ

Շատ ընտանի, օ՛, շատ սիրուած, տենչացուած,
Անունի մ'ան հնչխնն ունի քաղցրալուր.
Անով լեցուած հոգիս խմին այս գիշեր,
Լոյս տեսիլքի մը մէջէն
Մեծ Աւօտին կը ժպտի:

Արարա՛ . . .

Օտար հոգի մ'ալքերէն

Դուն վեր ցըցուած, ո՛վ կոթող,

Գու կողերէդ փառքի պայծառ ջրվիժում
Մ'ականակիտ ազրխւներու ջուրին պէս,
Վար կը յորդի, վա՛ր մեր հոգին հայրենի
Արխնողոզ դաշտերուն մէջ (ուր երբեմն
Ահեղ վրէժը Ոճիրին պլլուած
Իբրև եղիճ ուռձացաւ)

Ուողելու հո՛ն հունան արդէն ծիւ տուած
Այրատութեան մեր Երազին դարաւոր . . . :

Արարա՛ . . .

Մինչև երէկ, դեռ կոյտ մ'էիր դուն անշուք.

Անանուն կոյտ մը հոգի.

Օձերու բոյն, կարիճներու թաղբասոց.

Ծիւ մը ծաղիկ չէր բուսներ լերկ կուրծքիդ՝ ուր
կը թառէին յաճախ ձերուկ բազէներ
Մազիլներնուն արխնն հոգիդ սրբելու . . . :

Դարեր անցան գազաթէզ՝

Սառերն իրենց թափելով.

Դուն մնացիր միշտ մոռցուած, միշտ անշուք

Բըլուրը հէք, ուր հրէուհին սիրատարի,

Երբեմն միայն, ժամադիր,

Բիթթումին տակ խորհրդալոյս ասողերուն

Իր սիրածին սպասեց . . . :

Օր մ'ալ յանկարծ, անեղ եթևունք մ'զգացիր
Կողերուդ տակ, — յղի էիր ոճիրով —
Գալարուեցար, թոթուուեցար, գուացիր
Երկինքն ի վեր ծանր ու մախանք թքնելով·
Եւ արոյրի մրրկումի մ'ընդմէջէն,
Գուն աշխարհի պատգամեցիր, պատմեցիր
Հուսկ յաղթանակը Չարին՝
Ընդդէմ հպարտ Արդարութեան, որ հեռուէն,
Թէև դանդաղ ալլ հաստատ
Եկած էր հո'ն, ոտքիդ առջև ու դրած
Վլանն իր լայն, որուն տակ
Կը դարբնուէր մեծ Յաղթանակը վաղուան՝
Սալին վրայ վրէժին . . . :

— Դուն հեւացիր, փոթորկեցար, մռնչեցիր,
Շանթեր թռան կուրծքէդ վեր·
Եղեանը պահ մ'ինքզինք կարծեց սպահով,
Կուրծքիդ պեղուած տիտներուն մէջ մ'թին . . . :

Հրաման մ' — «Յառա՛ջ . . .» — մութին մէջ
Սրափողերն ահարկու,
Լեռնէ ի լեռ, հորիզոնէ հորիզոն,
Մարտին գու երգն հնչեցին . . . :

— Կախն էր այդ զիւցազուններ հրաշուի,
Հոյսատեսիլ, կանգնազեղ,
Սուրերն իրենց ամեհօրէն ճօճելով՝
Կուրծքիդ ծուար եղեանին դէմ վազեցին . . .

Օ՛, վազեցին,
Սէզ կտրիճներն իմ ցեղիս,
Աչքերուն մէջ թարթելով
Կայծերն ամբողջ դժողքին,
Ի՛տիտաներնուն մէջ կամօշտ
Պածած վրէժն ահարկու . . .

Պարտակուեցան ռազմագիծերն անառիկ
Թորգոմական Վիշապին
Պուժումին տակ ամեհի
Եւ խաժամուժն անանուն,
Մէկ հարուածով՝ սրուն ուժգին զարնուած .

Գանդաշեց ու նըկնեցաւ .
Եւ Պարաութեան ճամբաներուն երկայնքին
Գերեզմաններ փորեց ան . . .
Գերեզմաններ , գերեզմաններ զաշտերուն
Մէջ , ուր ան մերթ գերեզմանել էր փործեր
Ամբողջ մեր ցեղը ազնիս :

Արարա՛ . . .

Ա՛հ , դուն տեսար , դուն տեսար
Պառնուրդը մեծ , վայրագնարը չիտ կատաղի ,
Սուին սուինի , ճակատ ճակատի , կուրծ կուրծքի ,
Պառնուրդն անեղ սատակիչ
Մորեզնտփառ հայ ճեարին .

— Որուն ի տես աշխարհի բազը իրենց
Չեաքին բոնող , ուժին հսկայ սապեաներն
Չմայլանքէ ազշտութեամ՝

Արձակեցին քառսին մէջ արիւնի
Իրաւունքի մեծ «Եղիցի»ն աստուածեան . . . :
Ու լոյս եղաւ , հրաշափոյր , ցոլափառ .

Ազատութեան լոյսն ազու ,
Դարերու մութ խաւարին մէջ գալարուող
Մեր աննրման աշխարհին . . . :

Օ՛ , դուն տեսար , մրրկաթափ , մահափիւռ
Անոնց արշաւը վայրագ ,

Որ իր որսին վրայ վազող վագրին պէս .
Կապարի յորդ հեղեղներուն ընդմէջէն՝
Անցա՛ն , անցա՛ն քու բարձունքէդ , Արարա՛ ,
Արարատին ձայն տալով :

.
Հիմա , ո՛վ բլուր , մտածումիս մէջէն դուն ,
Փառքի փողփող լոյսի մը պէս կը յառնես . . .
Քու ծոցիդ մէջ կը տեսնեմ՝

Քրտաներեք վկաներու դիւցազուն
Հասակներն յաղթ . որ կը պառկին ժպտապին
Յուքերուն գէմ աստղերուն ,
Դափնիներով պատանքուած . . .

— Քտաներեք վկաներ ,

Որոնք մահուան աչքերուն
Մէջ շեշտակի նայեցան,
Ու գեռ շինեա՞ծ՝ քու բարձունքէդ դիտեցին
Ամպածրբար հպարտ լեռներն հայրենի
Որոնց արդէն կատարներէն կը ցաթէր
Ազատութեան վարդահեղեղ Արշալոյսն . . .

Հո՛ն են անոնք, խաղաղօրէն քընայած
Կուրծքիդ պեղուած փոսերուն մէջ մենաուր,
Փոսեր՝ որոնք յորդ ազրիւրներ կը դառնան
— Փառքի վճիռ ազրիւրներ —

Որոնց մէջ օր մը աշնան,
Հայ Նեմէսիսն իր գածան սուրը ջրեց . . . :
Հո՛ն են, հո՛ն են հայրենիքի կուրծքէն վեր
Թեւած զեփիւռ մը գըթոս,
Կուգայ յաւերժ օրօրել,
Մօր մը նման խանդակաթ .
Յաղթական նինջը անոնց,
Մինչ քու սև հոգի ուռուած՝
Անոնց կարծիր արբունէն՝
Կը ծըլի վարդ ու շուշա՛ն . .

Դո՛ւն, Արարա՛, դիցարնակ ս՛վ բլուր,
Ուխտատեղի խորան մըն ես ա՛լ հիմա,
Ուր Հայ Մտածումն հայ Հոգին
Բարեպաշտիկ երկիւզած
Կուգայ յաւէա ծնրադրել,
Եւ ոյժքերէդ՝ զերթ վարդի հոյզ գուրս մղող՝
Անմահութիւնը բմպել . . . :

Արարա՛ . . . —

Ես հայ զաւակ, երբեմն ցառոս պուէա մ՛հէք,
Այսօր քնարիս լախան թելերը փշրած,
Անոր կուրծքին նովնոր լարեր պրկեցի
Մեծ Փիւնիկի մ՛աղիքներէն սլորած —
Քեզի կուգամ, Մահարձանիդ ոտքին տակ ;
Հայրենիքիս Յարութեան երգն երգելու . . . :

ՕՐ. ԱՐԱՔՍԻ ՓԱՓԱԶԵԱՆ

Հայկական Լեզենի Ազաքինարանին ցաղգուրիչ ծախար. անձնուէր հիւանդապահուհին Օր. Արաքսի Փափազեան՝ Գարբուշ Հերեանի—Չէլթունի այգ սիրուն



ու փաղանցուկ հաստատութեան անուշին—աջ թևը եղած է սկիզբէն մինչև վերջը:

Օր. Փափազեան հիւանդապահուհի իր ուսումն ստացած է Ֆրանսական կարմիր-կաշի (Union des Femmes de France) Գահիրէի մասնաճիւղին մէջ:

ԳԱԲՕՐԱԼ ՌՈՒԲԵՆ ՇԵՐԵԱՆ

Ամերիկայէն կը ճանչնամ՝ զինքը: — Երիտասարդ տարիքին՝ ծերունիի մը հանգարտութիւնն ունէր: Երբ մենք կը բռնկէինք, կը բորբոքէինք. Հերեան խաղաղիկ, չափաւոր ոգևորութիւն մը, պազարին շահա-



դրգութիւն մը հաղիւ ցոյց կուտար՝ ազատագրական մեր ջղածգական մաքառումներուն հանդէպ:

Կը սպասէր, կարծես, որ իր մազերն աղէբեկէին՝ որպէսզի պտտիկար իր հոգւոյն մէջ անթեղուած հրաբուխը:

Իր ալեհեր երիտասարդութիւնը, հայրենասիրական

խանդավառութեան ու պայքարող կորովի տեսակետէն, գլեց անցաւ մեր ապերասան պատանութիւնը:

Հերեան զիս սահմակեցուց, կամաւորական գործիչի ու կամաւորի դերին մէջ. ամերիկահայ ոգորումներէս տասը տարի յետոյ, Նեղոսի ամերուն վրայ՝ ուր եկած էր միանալու Նիւ-Եօրքէն իր ճամբայ հանած արիական տղաքներուն:

Համակ ջիգ, եռանդ, անձնուիրութիւն, «պիպնեմէն» ի ու խոէւլիսթի այս համեատ այլ անգուղական տիպարը պիտի գմայլեցնէր մեզի, և հրատուրէր իր օտար «չէֆ»երը:

Հայկական Լէզէոնին Հրամանատարութիւնը անպայման վատանութեան ապացոյցներ տուաւ իրեն՝ որոնք տխրողներէ աւելի կարժեն:

Մեր կամաւորները զրկանքի ու տաժանքի իրենց կեանքին մէջ մեծ եղբօր մը անվերապահ հողածութիւնը գտան միշտ անոր մօտ: Ամենուն հասնող, Հերեան ամենուն սիրելին պիտի դառնար իրաւամբ:

Ունայնամիտ ու ձեռապաշտ եգիպտահայը իրմով չանցաւ ամերիկահայ լուսպոյն նկարագիրը, չխիչիտակ նպատակին դիմող կարուկ, գործունեայ, սրտոտ գործիչը: Զէլթունի Ապաքինարանը իրմով դարձաւ ազգային համակրութեան վառարան մը:

Իր պարզ ու զուարթ խօսքը եգիպտահայ բեմերէն թունդ հանեց թմրած խզմտանքներ, և վտանձեմ որ Սուրիոյ մեր տարագիր եգրայրներուն ալ կրցաւ ջամբել սրտասպնդումը որուն ա՛յնքան կարօտ էին անոնք:

Կամաւորին, տարագիրին, որրին, այրիին վիշտերուն ու կարիքներուն ընդատաջ վազող այս պատուական Հայը այն հազուագիւտ երախտաւորներէն է որոնց անունը տառապանքի աշիքներու մէջէն պիտի հնչէ բերնէ բերան. խանդաղատագին ու չնորհապարտ արտաբայատութիւններով օծուն:

Փարօրա՛լ Հերեան, Սուրիա գտնուի՛ս հիմա թէ կիլիկիա, գիտե՛մ որ դուլ ու դադար չունիս քու սըխրալի բոլորանուիրումիդ մէջ: Քալէ՛, շտապէ՛, քու արցունքոտ ժպիտիդ կազդոյրը տանելու մեր ցաւակին վերապրողներուն որոնցմով հայրենի մեր վերածնունդը կ'երկնուի: Ես գլխարկս կը հանե՛մ քու անխոնջ հետապնդումիդ. քու նուիրական ուխտիդ, քու անլքելի մուրատիդ առջև...:

Մովսապայ Թէքէեանին և Սու-էիէօթընան Բորթաբաղեանին հետ՝ Մարտէլլի հայ գաղութին կը պարտինք Ասրիբան վահէ Սաաթճեանը, երիտասարդ զինուորականի ու մտաւորական անձնուէրի զմայլելի զէմք մը:

Ֆրանսական սազմանճակատէն — ուր կրակի մը կը բառ թիւնն ստացած և դատան կռիւներու մէջ թըրծուած էր արդէն — Եգիպտոս ժամանելուն՝ շատերու հետ բազմըն ունեցայ իրիկուն մը իր ներկայութիւնը վայելելու Ազգ. Սրահին մէջ՝ ուր ընդունելութիւն մը անդի կուննար ի պատիւ իրեն, ինչպէս նաև վազարչակ վարգապետին, Ռուբէն Հերեանին ու Ճիմ Զանբաղեանին:



ԱՍԻՐԱՆ ՎԱՅԷ ՍԱԱԹՃԵԱՆ

Ասրիբան Սաաթճեան, այդ իրիկուն, իր կարգին, խօսք սուս բեմէն, և իր կտրիճ շեշտերովը, իր սրբատոս ու սազմաշունչ յայտարարութիւններովն ա՛յնպիսի խորունկ ու հոգեցունց տպաւորութիւն մը թա-

զուց ներկաներուն վրայ, որ իր անակնկալ երեւումը
անմտամտայի հմայք մը եղաւ ամենուն համար:

Մարտէլլի Հայ Ազգ. Միութեան պատուական աս-



ԾՈՎԱՍԴԱՅ ՏՐԻԱՆ ԹԷՔԷԵԱՆ

աննապեաին այս ամենա-
պատուական գաւազը հա-
մակրելի երեւոյթ մը չէր
միայն: Անիկա իր խօս-
քերուն մարզը, իր խօս-
քերն իսկ գործքով գերա-
զանցող ճշմարիտ հերոս
մը հանդիսացաւ:

Արարացի կռիւին՝ իր
պաշտելի կատաղութեան
ականատանները յուզուած
հիացումով մը խօսեցան
իր մասին: Ասրիբան Վահէ,
Սասիճեան՝ իր լեզէնա-
կաններուն գլուխն ան
ցած՝ գրոհէ գրոհ անաջ-
նորդեց զանոնք: Ճակա-
տէն թիկնեօրէն զարնը-
ւած, անիկա կռիւը շարու-
նակեց ու ելի ամենի թա-
փով: Եւ զուք իր անունը
չի տեսաք միրաւորներու
ցանկին մէջ: Հերոսարար
թափուած քիչ մը արիւնի
համար՝ վահէին պէս քա-
ջերը չեն գիճանիր կանոց
առնել...:

Ասրիբան Սասիճեան
այնքան քաջարի գինուո-
րական մընէ որքան խնաս-
տուն ու արժանուոր հայ-
րենասէր մը: Վերջին պա-
հուն հաճոյքով կը լսեմ թէ
Սասիճեան չահած է Սու-
կիէօթընանի աստիճանը:

Տեսիլքի մը պէս յան-
կուցիչ այս Հայտրդիին
քայլերուն ես կը հետե-
ւիմ մտովի անհուն համա-
կրութեամբ ու խանդա-
զասագին հաւատքով...:

“ԿԱՄԱԻՈՐՆԵՐՈՒ ՀԱՅՐԻԿԻՆ,, ՇՈՒՐՋԸ

Իրենք են, մեր պատուական սղաքը, որ այդ սիրալիր մակդիրը առին Եգիպտահայերուն ամենէն խանդավառին՝ Տիար Հրանտ Ազատեանին:

Արձախուրդով Գահիրէ եկող մեր գրեթէ բոլոր լէզէոնականները, որոնք միշտ զուրգուրտ ազապատանքով մը շրջապատուեցան, ազէ՛, ա՛յնքան գրկաբացուկաթողին ընդունելութիւն մը գտան ամէն անգամ Ազատեան բարեկամէս, որ զայն ինքնաբերաբար իրենց «հայրիկը» կոչեցին — իրաւա՛մբ:

Հէլիօքօլիօի Ազատեան յարկը իրենց տունը եզաւուր իրենք անվրէպ գտան, վայելեցին սրտագին սասնջահանութիւն մը, որ շարունակութիւնն ու լրացումն էր կարծես բանակին մէջ Սերժան Հայկ Ազատեանի իրենց նկատմամբ տածած եզրայրական հոգածութեան:

Յարակից խմբապատկերին մէջ «կամաւորներուն Հայրիկը» շրջապատողներն են՝ իր աջ կողմը նըստած՝ «Ատփուտան Ճիւղ Չանքալեան», որ Ամերիկեան Բանակին մէջ «Քէրթրնի» սասիճան ունեցող գինուորական մըն է, Հայկական Լէզէոնին կամաւորագրուած: Չանքալեան ամերիկահայ ռազմիկի ուշադրու գէմք մըն է, և՛ Պատերազմին սկիզբը՝ մասնակցած է կովկասեան մեր կամաւորական շարժումին՝ իբրև խմբապետ գործելով Վանի ու այլ շրջաններու մէջ: — Խմբապատկերին վրայ Ատփուտան Չանքալեանի ետին կեցած կամաւորը՝ Գաբօրալ Գարակէօղեան, գարձեալ ամերիկահայ ընտիր զինուորական մըն է՝ Ամերիկեան Բանակին մէջ ծառայած և «Քէրթրնի» սասիճանին տիրացած:

Խմբապատկերը «կամաւորներու Հայրիկին» ձախ կողմը նստած ցոյց կուտայ Հայկական Լէզէոնին Ա. Վաշտին օժանդակ-բժիշկ «Տր. Յարութիւն Բալանձեանը, Ա-

մատիացի Պէլրութի Բժշկական Համալսարանէն, Սուէ-
զի ջրանցքի պատերազմին Անգլիացւոց կողմէ գերի
բռնուած: 1916 Դեկտեմբերին կամուրջազրուած, Տր-



Բայանձեան մասնակցեցաւ Արարայի ճակատամարտին,
և անձնուիրարար ինձանց մեր վիրաւորներն ու կր-
սիւն յետոյ, արշաւանքի ընթացքին «Կսիր էսրանեօլէ

բռնուող լեզեւնականները: Տր. Բալանձեան ներկա-
յիս բժիշկ նշանակուած է Տէօրթ - Եօլի:

Սմբարապետիւրը Տր. Բալանձեանի ետև կանգնած
ցոյց կուտայ Տր. Ա. «Ազատեանը», Տխար Հրանտ Ազատ-
եանի անդրանիկ սրբին, եղիպտանայ յայտնի քիմիազե-
տը՝ որ Հալիպիան լեզեւնի Հրամանատարութեան
բարձրագնանաւան արժանացաւ իր գիտական թան-
կազին աջակցութիւնը ի սպաս զնեւով Զէյթունի Ա-
պաքինարանին՝ ախտազննական անհրաժեշտ վերլու-



Գաբօրալ ձօրձ թափանեան
« Գեքքրն » Ամերիկեան Բանակին մեզ

Տու մեներն անձնու իրարար կատարելու յանձնառութեամբ:
 Տր. Ա. Ազատեանի ազնիւ ոգևորութիւնը՝ հայ կամա-
 ւորութեան հանդէպ՝ ծանօթ է բոլոր անոնց որոնք Ա-
 պաքինարանին ստեղծած համակրութեան միջոցորտին
 մէջ կամ մօտ սպրեցան:—Ու շնորհապարս զգացումով
 մըն է որ հոս պարտք կը սեպեմ յիշատակել թէ մ.՝ ծ մա-
 սամբ յարգելի Տօքթորին կը պարտիմ՝ այս յուշարձանին
 կերտման մէջ հայթայթումը այն պատկերներուն ու-
 րոնք հայ կամաւորութեան համբուրելի զինագծութիւնը
 կը ներկայացնեն հոս:



Ա պաքինարանի (Չէքոսէ) պարտէզին մէջ ապաքինող
 հայ կամաւորներու խմբապատկեր մը

Վ Ա Հ Ե

(ՆՈՐԱՎԷՊ)

ԹՈՍԷՆՆԻԿԻՆ

Ա.

Պօլտայ ՅՅի մեծ շարդէն մագապուր՝ Նազիկ Հանրա՝
Թուրքերու երկիրը չուած էր, իր հեա առնելով ամուս-
նոյն միակ կենդանի ժառանգութիւնը՝ վահէն:

Հազիւ այն ստեն հինգ տարու կար վահէ, ու իր
մանկտկան յիշողութեան մէջ տարտամ հետք մը լոկ
ձգած էր հայկական ահապանդին մահապոյժ գօղանչը:

Բան մը սակայն լաւ տպաւորուած էր մաքին մէջ
իրենց խուճաղային փախուտին ստեն երբ մօրկանը
հարցուցած էր թէ ո՞ւր կ'երթային այսպէս յանկարծ,
և թէ ի՞նչու հայրիկը միտտին չէր գար, մայրը կըտ-
րուկ ու գառն շեշտով մը կշտամբած էր զինքը:

— Դուէ՛, հայրիկ չի՛ կայ այլեւս... Թուրքերը սպան-
նեցին հայրիկդ... Շատ մի՛ խօսիր... Շտապե՛նք փախ-
չի՛նք այս երկրէն, որ Թուրքը մեզ ալ չսպաննէ...

Վահէ անմտունջ հետեւած էր մօրը, ու ձամբան
ա՛լ չէր համարձակած ո՛ր և է հարցում ուղղել անոր:

Տարիներ վերջը միայն իրազեկ եղաւ իր հօրը
սպաննութեան եղերական պարագաներուն, զորս մայրը
պատմեց հեռեւեալ սարսուղին մանրամասնութիւն-
ներով:

— Հայրդ երկաթագործ էր. Ղաւթիոյ մէջ փոք-
րիկ գորբնոց մը ունէր՝ ուր անձամբ կը կուէր երկա-
թը, Ալիին՝ տաննեակ տարիներէ ի վեր հաւատարմօ-
րէն իրեն սպասարկող գործաւորին օգնութեամբ: Պա-
ղազ կեանք մը ունէինք. հօրդ ձակաին քրախնքին

արդար վաստակը կը բաւէր մեր համեստ պէտքերուն գոհացում տալու... Դէպքին օրը տարարազդ հայրիկը՝ անցած-զարձածէն անտեղեակ՝ զարձեալ հնոցին առջև, առլին վրայ, իր սովորական աշխատանքով կը պարագի եղեր, երբ դուրսը ջարդարար խուժանը կեա-վութեներուն արիւնը կը խմէր, և իր մոլեգին գոռով գոչումներով՝ զարհուրելի գեհննի մը կերպարանքը կու-տար Մայրաքաղաքին ամենահոծ կեղրոններուն... Փախչելու ժամանակ իսկ չէր ունեցեր հայրիկդ. Ալի, իր «Տաւատարիմ» քանուորը, կանխելով թուրք շնալայ-ւերուն գիշատիչ ակործակը, ձեռքի կուանը իր վարպե, արին գլխուն կիջեցնէ զայն ցրեխ-ցրեխ ընելով ու վա-տարար, «Թրքարար», յօշոտելով այն կեանքը, որ տասը տարիներ զինքը կերակրած էր...

Վահէ խմանալով այս խուժուժ պատմութիւնը խո-րապէս ցնցուած էր բայց, այս անգամ առանց անարե-կումի, այլ ցասումի՝, ընդվզումի՝ ու վրէժի՝ խուլ զգա-ցումով մը:

Բ.

Նազիկ Հանըմ հազիւ ոտքը դրած Փարաւոններու երկիրը, երկու ծանր կարիքներու առջև գտեր էր ինք-զինքը. նախ՝ իրենց սպրուտտին հայթայթումը, և երկ-րորդ՝ իր զաւակին կրթութիւնը: Ամուսինին մահովը անօգնական մնացած այրին չէր գեղեւած երբէք այդ կրկնակ կարեաց յանձանձումին մէջ: Իր կողակցին չարքաշութենէն և աշխատասիրութենէն բան փոխան-ցուած էր իրեն. Երիտասարդ կնոջ մը համար այլապէս ամօթալի կը սեպէր «Աղքատախնամ»ներու գուններուն առջև մուրացիկ կեցուածքներ առնել, արցունքներ ու խեղձութիւն կեղծել ու գթահրաւէր, երկարապատում պատմութիւններով նպատարնալ գիրքերը ապահովելու ջանալ: Ո՛չ, ազաւոր այս ծեքծեքումները խտուրէ-ին իրեն համար: Իր յեղակարծ այրիացումովը զգա-ցած վիշտը թէև պահ մը սպառած ըլլալ կը թուէր իր մէջ բարոյական ու մարմնական ամէն կորով, սակայն

վահէին ներկայութիւնը, անոր հանգէպ ունեցած իր անհուն սէրն ու իր պարտականութեանց զիտակցութիւնը կը խթանէին զինք, և կը ներշնչէին իրեն բաւականաչափ ուժ, կարծօրէն տանելու համար տաժանքի բաժինը որ իրեն կը հարկադրուէր:

Նազիկ Հանրմի հայրը Պօլիս շրջուն փերեզակ ըլլալով իր բազմազան տպաբներուն կարգին լաչակներ (եազմա) կը ծախէր: Նազիկ — այն ատեն զեռ ոչ հանրմ — սորված էր լաչակներուն եզերքը գոյնզգոյն դերձաններով ծոպեր ու երիզներ հիւսել, որոնք առուելապէս յարգի կ'ընծայէին զանոնք: Այս գործը իր փնտած գրազու մներուն մէջ ամենալարմաւը դասելով, որոշեց անով պարապիլ ու այդ սուաջագրութեամբ քաղաքին մէջ փնտուեց ու գտաւ լաչակի ու շղարշի հայ վաճառականներ ու անոնցմէ գործ ուզեց: Այս վերջինները շատ չի դժուարացան հետը, ու մանաւանդ իմանալով իր կեանքի տխուր դրուագները, խոտաացան շարունակ գործ հայթայթել իրեն:

Իր հոգերուն կարեւորագոյնը՝ հացի խնդիրը՝ կարգադրելէ վերջը, Նազիկ Հանրմ, սգակիր լռիկ կսկիծով վեհօրէն բեռնուոր, իր զաւկին սպազան սպառաստելու գերագոյն նախանձախնդրութեամբ, փութաց անմիջապէս զիմել ուր որ անկ է, զայն ազգային վարժարան ձրխարար ընդունել տալու համար: Իր խընրանքը սիրով ընդունուեցաւ, ու փոքրիկն վահէ յաջորդ առաւօտունէ խկ գպրոց յաճախել սկսաւ, իր մըտաւոր անունը ստանալու համար:

Այսպէս իր երկրորդ պարտականութեան կատարումին մէջ ալ յաջողած ըլլալու սրտի անբաւ գոհունակութեամբ, Նազիկ Հանրմ փարեցաւ մայրական իր տաժանելիօրէն քաղցր լուծին:

Ու տարիները սահեցան... :

Գ.

Համաշխարհային Պատերազմը շղթայազերծուած էր տարիէ մը ի վեր: Հայութիւնը՝ իրր «եօթներորդ զինակից»՝ վճռած էր Գաշնակիցներու կողքին կռուիլ,

իր գուսակներուն արիւնը գոհարեւելով Իրաւունքի, Ար-
զարութեան ու Ազատութեան սուրբ գասին: Արտա-
ասնմանի բոլոր հայաշատ կեդրոններէն Հայութիւնը
կամուտրական ինքնամատոյց շարքերով կը սուա-
րացնէր Արեւելեան— խնա՛ Հայկական — Լէզէոնին գու-
մարտակները:

Վահէ, 23 տարեկան սուղկ երիտասարդ մըն էր:
Ազգային վարժարանին դասընթացքը յաջողապէս ա-
ւարտելով՝ վաճառականական ասպարէզը ընդգրկած, և
իր մօրը զօրաւոր նկատել մը հանդիսացած էր: Տարի-
ներէ ի վեր արդար ու զսպուած իր վրէժին յաղեցման
համար աւելի պատեհ առիթ մը անհնար էր իրեն ա-
կրնկալել: Այն արիւնկակ թուրքերը որ իր ցեղին վը-
րայ մահ ու աւեր պիտած էին շարունակ, որ իրեն պէս
շատերը որբացուցած էին, որ կիներ այրիացուցած,
կոյսեր լլկած, ծերունիներ խողխողած, մանուկներ բըս-
նաբարած ու միլիոնաւոր շէնչող օձախներ անթեղած
էին մոխիրներու ներքեւ, հայ երիտասարդ գաստակներու
խիզախ հարուածին, հայ վրիժառու գնդակներու մահա-
սիրու սարափին տակ պէ՛տք էին վերջապէս քաւել
իրենց անքաւելի ոճիրները...

Վահէ փոփաքած էր անմիջապէս միանալ հայ կա-
մուտրական գունդերուն, բայց իր մէջ երկու տարբեր ու
ներհակ զգացումներ սկսած էին իրարու բազմիւլ ու գի-
րար շէզոքացնել: Այդ զգացումները փոխն ի փոխ յաղ-
թական՝ գծուար կացութեան մը կը մտանէին զինքը:
Ի՞նչպէս լքէր իր մայրը, տարիներու բեռին տակ կէսած,
վիշտերու ահագին բրգացումին տակ ընկճուած, ու վեր-
ջին հանդրուսնին մօտեցած իր հէ՛ք մայրիկը որ զին-
քը մինչև այդ տարիքը հասցնելու համար՝ ստժանք-
ներուն ամենատաժանելին կրած էր, գիշեր-ցորեկ ա-
սեղին նուրբ ծայրին վրայ սպասելով աշքերուն լոյսը,
մինչև որ սեւնար, սղոսանար, մուպլէրան, մինչև որ
մասները թմրէին, կարկամէին շորաբեկ հացի մը ի
խնդիր, զինքը կերակրելու, մեծցնելու, իր որբութիւ-
նը իրեն չզրացնելու ազնիս, անձնուրաց, մայրական
հնճուքով: Չէ՛, անհնարին կը թուէր այդ բաժանումը,

թերեւս յախտե՛նախան այդ բաժանումը իր մօրմէն:

Աւ մինչ Վահէ այս մասձումներով կը տարուէր, իր հոգւոյն նայուածքներն ուրի՛շ տեսարաններու կը սեւեռուէին: Աչքերու լոյսէն զօրաւոր լոյս մը կայ, արեւին լոյսը, արեւին լոյսէն զօրաւոր լոյս մըն ալ կայ, երեւակայութեան լոյսը: Առաջինը մինչև հորիզոնը կը տեսնէ. երկրորդը՝ աշխարհիս կէսը, խկ երրորդը՝ ամբողջ աիեղերքը... երեւակայութիւնը անարդել կը թեւածէ ամենուրեք, կ'այցելէ բռնաւորին պալատը, ինչպէս բանտարկեալին նկուզը, զազանին որջը՝ ինչպէս թռչունին բոյնը, և կը տեսնէ ամէն բան, ամբա, բըշտութիւնն ու հեղութիւնը, հայածանքն ու թշուառութիւնը, վայրագութիւնն ու անմեղութիւնը: Ի՞նչ կը պարզուէր Վահէի խռովեալ երեւակայութեան առջև... Թուրք ստահակները տարտարոսի մը կերպարանքը առած էին մեր Հնաշխարհիկ հայրենիքին... Հայուն զաւակները կը կոչկոծուէին, հայ երգիքները փլատակներու տակ կը ծածկուէին, ու ոճրագործները կը յամառէին Հայութիւնն անճիտելու իրենց դիւային մոլեգնութեանը մէջ: Տեղահանութիւն, զանգուածային տարագրումներ, դէպի սպանդանոց, դէպի անապատ, զոհերուն անվերջ կարաւանները, կախազաններ՝ որոնց վրայ հայ կորիճներ կը ճօճէին, եաթագաններ՝ մերկ ու ահագեցիկ՝ որոնք օդին մէջ մանուկներու փոցտուած զլուխներ կը բարձրացնէին... Կոյսեր՝ որ գետերը կը նետուէին պատիւնին փրկելու համար, այրիներ՝ ու թուրք յելուզակներու ցոփութենէն չազարտուելու համար անգունգներն ի վար կը զահավթուէին, ու դիակներ՝, դիակներ՝, չորս կողմ անթաղ դիակներ՝ լեռներու, ձորակներու, մարդերու, անձաններու մէջ... Արեան լճակներ ամէն տեղ, արեան գետակներ ամէն ուղղութեամբ... Ահա՛ թէ ի՞նչ զարհուրելի բաներ կը տողանցնէին Վահէի երեւակայութեան առաջէն: Օ՛հ, անկարելի էր՝ էր այս մզձաւանջին տակ ստատամիլ այլևս... «Ի գէ՛ն, ի վրէ՛ժ», կը գոչէր իրեն ներքին հզօր ձայն մը, որուն բոմբիւնին մէջ պահ մը կը նուա-

դէին սիրոյ և պարտականութեան ուրիշ ազու հրծ-
ծիւնները:

Վահէ մտասուեաւման այսպիսի գերազըրզիւ բազէի
մը մէջ իր որոշումը տալով կատարուած իրողութեան
մը առջև գտնուելու և ա՛լ փորձութեան չի մատ-
նուելու համար՝ աներկբայ ու անվիհներ զխնց ձեռնհաս
մարմնոյն մօտ, ու վճարար ստորագր` ց կամուորա-
կան իր յանձնառագիրը:

Գ.

Հայկական Լէզէոնի գումարականներուն հրամայ-
ուած էր մասնակցիլ Պագեստինի անգլիական արշա-
ւանքներուն: Հայ կարիճներուն վիճակուած էր գրա-
ւումը Արարա բլուրին, որուն բնական անտօիկ գիր-
քերն անհզօրէն ամրացնելով՝ Թրքօ-Փերմաններն իրենց
զխնագրութեան առանցքն ըրած էին զայն: Հայ կարիճ-
ներուն խանդավառութիւնը աննկարագրելի էր. սրտեր-
նին կը արտփէր իրենց զգաւած վրէժխնդրութեան մօ-
տալուա յագեցումին վստահութենէն: Վերջապէս առի-
թը պիտի արուէր իրենց սպացուցանելու թէ Հայր քաջ
է, թէ գիտէ կուտիլ զիւցալնարար, և թէ միջոցներն ըն-
ձեռուին իրեն և թէ հոն՝ ուր օտար ամենայնզուգն
զինուորն իսկ պիտի գեղեւէր, հայ սագմիկը առիւծի
պէս կը խոյանայ, խիզախօրէն մահը անգոտնելով:

Վահէ զինուորական մարզանքներուն մէջ ցուցադ-
րած աշխուժութեան ու ճարպիկութեան շնորհիւ «գա-
բօրայ»ի առաիճանին բարձրացած էր, ինքն ալ պիտի
մասնակցէր Արարայի գրոհին: Աքանչելի բարոյականով
մը օժտուած՝ Գաբօրայ Վահէ իր աներկեալ արիասրբ-
տութեամբ մասնաւոր խրախոյս կը ներշնչէր իր մար-
տիկներուն: Փրոհէն առաջ զոյգ մը սրտասպնդիչ խօսք
ուզգեց անոնց.

— Տղա՛ք, գերագոյն ժամը հասած է, Մայր Հայ-
րենիքն ու հանուր աշխարհ մեզ կը գիտեն ակնապիչ,
արժեցնե՛նք մեր արիւնը ու գիտնա՛նք կուտիլ քաջա-
բա՛ր, հայարա՛ր...

Յանկարծ սրտիկները կը ննչեն, արչաւանքի հը-
րամանը պտտադամներով:

— Օ՛հ, յառա՛ջ, ազա՛ք, յայտ՛ւրդ մեր վրէժին...

Ու վաճէի ձայնը կը խեղդուի թնդանօթներու ս-
րտին, գնդակներու սոլլին, սուսբերու պայթիւնին



ՍԵՐՃԱՆ ԳԷՈՐԳ ՏԷՐ-ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ
Գանիրէի Տ. Յարութիւն Ա. Բճնյ. Յակոբեանի Պոռը

մէջ, ու հայ կամաւորները արծիւներու պէս կը սլա-
նան Արարայի բարձունքն ի վեր, դէպի որջերը գայլ-
ապգի Տաճիկներուն...

Ե.

Յազժութեան շեփոններուն անտառոր հնչիւննե-
րը երբ արձագանգեցին Արարայի արաւաններէն ու
Կարմիր-Պաշխի հիւանդապահներ անմիջապէս լծուեցան
իրենց մարդասիրական գործին, հարկ եղած խնամքը
ջամբելու համար վիրաւորներուն, վահէ՛ երեք Թուր-
քերու ջախջախում զանկերուն սարնիթեր՝ ինկած գրա-
նրեցաւ, գիտէն ծանրապէս վիրաւոր և ուշակորոյս:

Շարժուն հիւանդանոց մը փոխադրեցին զինք, որ
սակաւին կենդանութեան նշաններ կուտար, առանց
սակայն վերահաս մահուրնէ ազատելու յոյսը ներշնչե-
լու: Արիւնը աշնքան առատ էր հոսած, որ ամբողջ զի-
շերը անհնարին եղաւ զինքը սթափեցնել: Իր սենդա-
զին զառանցանքին մէջ սակաւին կը շարունակէր կը-
սիւր անարդ թշնամիին գէմ:

Արշալոյսին մօտ բանդազուշանքը զազրած էր, ու
ժամ մը հանդիսա քնանալէ վերջը, վահէ յանկարծ աշ-
քերը կը վերարննար ու սառած ակնարկը չորս գին կը
յածէր, սողանքով մը՝ որ կ'ունենայ ամէն հիւանդ եր-
կար նուազումէ մը սթափած ստին, երբ ինքզինքը
սլոյտը փոխադրուած կը գտնէ: Իր սնարին վերերը
ձիւնասպիտակ սիլուէթ մը կանգնած էր, Կարմիր-Պա-
շխի ձերմակ տիկին մը, որ մայրօրէն կը հակէր իր վրայ:
Ճիւղ մ'ըբաւ շարժելու համար, բայց անկարելի եղաւ.
կարծես անկողինին բեւեռած էին զինք վիրակապերու
ամբողջիկ կաշկանդումին մէջ անգամաւրածուած էր:
Պահ մը, անմտունչ, մահճակալին վրայ սախասարարած,
փլշած վիճակի մէջ մնալէ ետքը՝ հո՛ճեց.

— Քոյր իմ, խնդրեմ, լսէք, ի՞նչ ունիմ,.

Օրհնասականն էր որ՝ անդրաշխարհի սեռէն ներս
մտնելէ սառա՛լ՝ պահ մը ետին կը փորձէ դառնալ, հուսկ
ակնարկ մը նեւեռու այն կեանքին որ կը խուսափի
իրմէ:

— Հանդիստ բրէք, Գարօրա՛ւ, մանաւանդ մի՛ յուզուիք... Պարտականութիւնիդ կատարեցիք, արիարար կուեցաք, վիրաւորուեցաք Հայրենիքին համար, ի՛նչ հարատւ թիւն, ի՛նչ քաղցր անձնագոհում, հանգիստ բրէք...

Սպիտակ աիկինը յայտնօրէն զսպուած յուզմունքով մը կը ջանար խրախուսել Վահէն, անուշ ու սրբտապնդիչ շեշտ մը զնելով իր խօսքերուն մէջ, որոնք սովորանիի մը պէս կը կակղէին Գարօրալին կոտտացող վէրքը:

— Այո՛, այո՛, կը զգամ, յարեց Վահէ մեղմօրէն, վիրաւորուած եմ, շարժելու անկարող և ուժասպառ... Կը զգամ թէ հրածեշտի վայրկեանը հասած է թէ կեանքը խոյս կուտայ ինձմէ... Մայրի՛կ, անուշ մայրիկ, սո՛ւր ես... Մայրիկս հոս չէ՞, կանչեցէ՛ք զինքը, քո՛յր իմ... Կոկորդոս կը սեղմուի, հասի՛ր, մայրի՛կ, շունչս հասա՛ւ, Վահէն չի կայ ա՛լ, Վահէն ձամբօրդ է, հայրիկին մօտիկը կ'երթայ... Մի՛ լար, մայրի՛կ, քու ծոցէդ կը բաժնուիմ Մայր Հայաստանի ծոցը հանգչելու համար... Մեր արեան պէտք ունէր Հայրենիքը՝ վերընծիւզելու համար... Մեր մահը անոր կեանք պիտի տայ... Մխիթարուէ՛, մայրի՛կ, քնքո՛ւշ մայրիկ, գրկէ՛ զիս, վերջին անգամ մըն ալ գրկէ՛ զիս, մնաս բարո՛վ, մնաս բարո՛վ...:

Հէլվան, 15 Յունիս. 1919

ԳԷՈՐԳ ՊՕԶԱՃԵԱՆ



Հայկական Լեզեոնին ձօնուած այս հրատարակութեան մէջ ուշագրաւ պակաս մըն է, անշուշտ, իր պատկերին չգոյութիւնը, և ամենէն առաջ հեղինակը կը ցառի որ իրեն անկարելի եղաւ ճարել Սու-Լիէօթրնան Շիշմանեանին մէկ լուսանկարը՝ փորագրական «բլիշէ»ի վարածուելու յարմար:—Այս ակամայ թերացումէն կը մխիթարուիս՝ մտածելով որ ներկայ յուշագիրքը՝ լաւագոյն պայմաններու մէջ՝ կրնայ ձոխացեալ և ամբողջացեալ լոյս տեսնել վերստին, պանծացնելու համար մեր քաջերուն հայրենանուածման հոյակապ գործը:

Սու-Լիէօթրնան Շիշմանեան Հայկական Լեզեոնին ամենէն ապմագեղ հայ սպան է, երիտասարդ «շէֆ»ի մը բոլոր յատկութիւններով օժտուած: Կորովի ու խանգավառ խառնուածքով մը, իր ետեւէն քաշող-տանող մագնիսութեամբ ակադէուն զինուորականի հիանալի ու հազուագիւտ ախպար մըն է ան, ամերիկեան անալլայլ գրութեանցիին տակ հայկական զսպուած հարուխ մը:

Սու-Լիէօթրնան Շիշմանեանի դերը շատ կարեւոր եղած է մեր կամաւորներուն ընկերական կեանքին մէջ, իրբեւ բարոյական կանոնաւորող, ներգաշնակող ազգակ մը, որ արդար խռովքները կ'անդորրէ ընդվզող դժգոհութիւնները կը չափաւորէ, առանց կամքերը ջրլատելու, և որ վճռական բոպէներու պատշաճ կեցուածքը գիտէ միշտ թելադրել:

Ամերիկայի Գալիֆօրնիա օրհնեալ նահանգին մէջ մեծցած, կրթուած, իրաւագիտական տապարեզն ընդգրկած, պատերազմին սկիզբը Փրանսական ապմածակատ կը մեկնէր իբրեւ ամերիկեան կամաւոր: Հոն իր ապացոյցները տալէ և առաջին երկրները շահելէ յետոյ, Շիշմանեան Հայկական Լեզեոնին կը գրկուէր մասնաւոր կարգադրութեամբ մը:

Սու-Լիէօթրնան Շիշմանեան մեր լեզեոնականնե-

րուն պաշտած կուռքերէն մին եղաւ ու կը մնայ մինչեւ այսօր: Ռազմակրթմանքի, սպասուծի ու սամանքի շրջանին անոնց եղբայրական սուսջնորդը, սրացաւ խորհրդատուն, կարեկից հոգատարը զանուեցաւ միշտ:

Ու Արարայի կրակին մէջ անոնց հետ նետուեցաւ համերական ամենօրեան մը, կատաղի խառնուրդէն զուրս գալով անլթար՝ կիւրկիտոյ հայ բանակին սիներէն մին հանգիստնալու համար վազը...:

ՀԱՅՈՒՅԻԻՆ ՏՐԻՏՈՒՐԸ

Խանդավառագին յուզումով մը կը հրատարակենք յետագայ սիրուն երկտողը զոր մեզի ուղղած է դեռատի այլ տաղանդաւոր զրագիտուհին, յարակից շատ գեղեցիկ քերթուածին հետ, որուն մէկ ամբողջացուցիչ մասն կը կազմէ ան՝ իր պարունակած գգացումին նրբութեամբն ու իր հիւսուած բին զոլորութեամբը: (Ծ. Է.)

... Տէ՛ր

Դողդոջ ու երկխոսած քայլերով կը մօտենամ» Արարա» յի մահարձանին զոր Դուք կը կանգնէք վարպետի Ձեր ոսկի մուրձովը:

Գար մըն ալ ես փափաքեցայ բերել Ձեզ, անտաշ քար մը, զոր, անտարակոյս յղկելէ վերջը, պիտի ուզէք անկին մը զեռեղել:

Արարան, Փառքի այդ Բլուրը, հայ արձանագործի մը մարմարներէն զրկուած, հայ գրագէտին մտածումովը պէտք էր անմահանար դռնէ: Եւ ո՞վ Ձենէ աւելի ձեռնհաս էր մտածումի այդ անմահ կոթողը կերտելու:

Մանդավառօրէն կը չտրհաւորեմ Ձեզ, Ձեր այդ դժուարին ձեռնարկին համար, և յաջողութիւն կը մտաթիւմ սրտանց:

Ամենախորին յարգանք
ՄԱՐԻ Յ. ՉԱՅԼԱՔԵԱՆ

Փ Ա Ռ Ք Ի Բ Լ ՈՒ Ր Ը

Հողն է շաղուած անմահութեան աւիտով,
 Հո՛ն կը ծլին էսրվայտներ ակնաքով,
 Արեւոյտն հոն՝ կ'իջնէ ծիրանն իր հազնիլ
 Ու կողերէն փառքը կաքիլ առ կաքիլ

Կը բորի վար, նանանչն ինչպէս նեղուն
 Գարնան պայծառ այգաբրթիռ արեւուն:
 Ու կասարին կը յածի Յոյսը շրթեղ
 Նազելավառ կոյսի մը պէս արփագեղ:

Բլուր մ'է ան, երբեմն անեւի մոռցրեւած,
 Յաղթանակի Կոթող մ'այսօր յուսամած,
 Ուր ապագան եւ մութ անցեալն անարկու
 Զուարթօրէն կը գրկուին իրարու:

Բլուր մը ան, որուն անուներ պզտիկ
 Յաւերժին մեջ մե՛նք մեր աւեամբ գրեցի՛նք
 Քրտան եւ մէկ հայ կտրիններ կը պառկին,
 Հո՛ն, իր ծոցը, զգուսնի՛ն տակ յուսնակին:
 Անո՛նք էին, — անվախ նեք Քորզովեան, —
 Որ մահուան դէմ ասուածօրէն խոյացան,
 Եւ հո՛ն ինկան — սակայն Ոնիրը զարկած
 Մրէն խորունկ — հո՛ն զընկեցին փառապանծ
 Եւ ազոյնն յաղթ... Ի՛նչ հոգ էք օր մ'անի
 Մտաւցումի սուտերներով ծածկըլի,
 Քանի զո՛ւն կաս ու կը մնաս, ո՛վ բլուր
 Անմեռ վկայ հայ կաշուրեան մահասուր:

Քեզի կուգամ, քնարս գրկած այս գիշեր,
 Ռ՛վ վեհ կոթող, ո՛վ Արար, ո՛վ սուրբ լեռ,
 Մահարձանիդ առջեւ ի ծունը. երկիւղած
 Քոյր հոգիիս թափել պաշտումն խորագգած:
 Մինչ բարձունքեդ դէպ Արարաւ կամարուող
 Ծիրաներփիկ ծիածանէն յոյս-փողփող
 Լաւերուն վեայ հէ՛ք քնարիս սօսախեայ,
 Յոյսով ժպտուն փառքի նանանչ մը կ'իյնայ:

ԳԱՐՕՐԱԼ ՅՈՎՀԱՆՆԷՍ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ

Յովհաննէս Գոյումճեան, ընկ Պանարմացի, ծը-
նած է 1893ին: Իր նախնական կրթութիւնը կ'առա-



նայ իր ծննդավայրի սղզ. վարժարանին մէջ: 1912ին,
այն օրերուն, երբ արտագաղթը տեսակ մը անհրաժեշ-

տութիւն դարձած էր գաւառացի Հայուն համար, Յովհաննէս Փահիրէ կուգայ, ուր գանազան զբազումներ կը հետապնդէ, ու ի միջի այլոց կը սորվի նաև «սգումբա» շինել ի հաշիւ կառավարութեան: Ապա Մաթնոսեան Սիկաուէթի Գործարանին մէջ աշխատաւոր կը դառնայ:

1913ին «Արարատ» մարմնամարզական ակումբին կանդամակցի ու մեծ ընդունակութիւններ ցոյց կուտայ քաջ մարզիկ մը գառնալու: Կը վայելէ անխախտ ընկերներուն ամենուն ալ համակրանքն ու սէրը: Կուգային վերջապէս պատմական մեծ օրերը. կամաւորական շարժումը ծայր կուտար Եգիպտոսի մէջ: Յովհաննէս, ի բնէ եռանդուն ու ջերմ սպգասէր, առաջին կամաւոր արձանագրութիւններէն կ'ըլլայ, և 1916ին կը մեկնի Կիպրոս իր սրտի և գէնքի ընկերներուն հետ: Զինուորական իր ծառայութիւնները գնահատուեցան. շարքաշ և եռանդուն՝ ան շուտով սասնապետութեան աստիճան ստացաւ՝ համակրանքը վայելելով իր պետերուն, որոնք հաճոյքով գիտեցին, որքան իր կազմեղ հասակը, նոյնքան և «կամաւոր» հայ սաղմիկի մը իր համբերատար ու բոլորանուէր կեցուածքը:

1918 Սեպտեմբեր 19ին կը մասնակցի Արարայի հերոսամարտին, ու առաջին անգամ ոտքէն կը վիրաւորուի. առ ոչինչ համարելով իր վէրքը՝ Յովհաննէս քաջարար կը շարունակէ կռիւր, ու կ'ստանայ երկբորոգ վէրք մըն ալ. բայց մահը հերոսին փառքն է. «Ես կ'երթամ հալլենիքիս ու իմ սիրելիներուս արդար վրէժը լուծելու համար», բռած էր ան իր մաերիմներուն, ուստի մղուած վճռական կռուին մէջ կ'ուղէ ձեռք բերել այդ փառքը ու երբորոգ անգամ ըլլալով խառնուրդին մէջ կը նեակ ինքզինքը, և տեղացոյ գնդակներու տարափին տակ կ'իջնայ կորիճին փառքին ու իր պաշտած Հայրենիքին համար:



Գեղեցիկ վերջալոյսով մը գայինք դիմաորելու Արարայի մեր վիրաւորներէն անոնք որ Լիւտէն Բօր-Սայիտ կը փոխադրուէին:

Տեղոյս փոքրաթիւ հայութիւնը՝ նաւանասոյց խնուած սրաստորոփ հպարտութեամբ կը սպասէր անոնց:

Հպարտ այլ մտտասոնձ կը զգայինք միանգամայն, ու լուս կը դիտէինք Միջերկրականի կապոյտ ալիքները, մասձեղով Արարային ուր ահաւոր եղեր էր բազխումը... Ի՞նչ վիճակի մէջ պիտի գրտնէինք մեր վիրաւորները:

Եւ ահա՛ մայրամուտի բեկբեկ ու տձգոյն լոյսին մէջ, հեռուէն, կ'ուրուագծուի կարմիր-Սաչի ձերմակ շոգենաւը որուն վրայ են փառքով գրոշմբւած մեր սպաքը:

Շոգենաւը մեզմօրէն կը մօտենայ քարափին, և բրիտանական զեղաղէմ սպայ մը առաջին անգամ ցամաք կիջնէ հրահանգներ սալու կարմիր-Սաչի ֆրանսացի ու անգլիացի բժիշկներուն ու սպասարկու զինուորներուն որոնք եկած են մեր վիրաւորներն առնելու:

Մեծ զուշտիթեամբ պատգարակին վրայ կը գնեն հայ զինուորներէն մէկը որ կարեզէր խոցուած է... Յուզուած ու վեհերոս կը մօտենամ գգեանուած հերոս տղուն... Ան կը ժպտի ինձի. ծանօթ մըն է... Իր ժըպիտին մէջ ցեղիս հուշոյն գեղեցիկութիւնը կը տեսնեմ, ու անով կ'արբեմամ պահ մը:

Այդ ժպիտէն քաջալերուած, ձեռքս կ'երկարեմ ողջագուրելու համար վիրաւոր բարեկամս... Օ՛հ, չեմ կըր-



Տիկ. Մ. Մարտան

յամ ծածկոցին տակ նշմարել թէ աջ թեւը բոլորովին կորսնցուցած է, իսկ ձախը՝ ծանրորէն փաստած... Երկիւզած, կը ծնրադրեմ անոր մօտ, գլուխը կ'առնեմ եզրայրական բաղուկիս մէջ, և ձակաար կը համբուրեմ երախտագէտ զգացումով:



Պ. Ն. Գօգարլեան

ու պատգարակներով կը փոխադրեն կարմիր-Սաշի ինքնաշարժ կառքերուն մէջ: Ո՛չ ոք ընկձուած է անոնցմէ. բնդհակառակը, անոնք գոհունակ ու սրտագին շնչատով մը կը խօսին մեզի: Ու մանք նոյն իսկ կը կատակեն, Տաճիկներուն ահարեկումը ծաղրելով: Ուրիշներ իրենց կարկամած բռունցքները կ'երկարեն՝ չի յագեցած վրէժի մը զայրոյթէն ծամածուելով:

Յաջորդաբար եկան Արարայի բոլոր վիրաւորները, ու խնամուեցան Բօր-Սայտի Ֆրանսական զինուորական հիւանդանոցին մէջ:

Բացի իշխանութեանց **Պ. Աստու Թագաւորեան** խնամքէն, անոնք շրջապատուեցան տեղոյս մեր փոք-



Հայրենիքիս լուսադեմ հերոսն է որ գրկիս մէջ ունիմ, ու ինձի նշնագէտ կը թուի թէ քովս թառած են լուսեղէն հրեշտակներ՝ զարնրած Հայրոցին իրենց թեւերուն մէջ պարուրելու, օրորելու եկած:

Ո՛չ մէկ հառաչ, ո՛չ մէկ հծծիւն, ո՛չ մէկ աւազանք... Բոլոր վիրաւորները մէկիկ մէկիկ կ'իջեցնեն շոգենտուէն,

բիկ այլ սրտոս գաղութին սաքուկ գուրգուրանքովը:

Տեղոյս Հայ Հիւանդ Կամուսրին Անամքի մարմինը, զոր կը ներկայացնէին Տիկին Մ. Մասրաֆի և Պ. Պ. Ա. Աթանասեան ու Ն. Թօքաթլեան, իր կարեւրին բրտ հոգսոյ մանր կարիքները մեր վիրաւորներուն:

Սիկարէթ, «սխաքիւի» և այս կարգի նուէրներ հայթայթելու համար լայն օժանդակութիւն բերին Փահրէի «Հայ-Վի-Չին Ֆօնտը» և պատահական անձեր ու հաստատութիւններ՝ Եգիպտոսի զանազան կողմերէն:

Հայ Ազգ. Միութեան Բօր-Սայխաի գործակալութիւնն ալ — զոր Պ. Ն. Թօքաթ և այս ասղերը գրողը խղճմտօրէն վարեցին — անձնուիրութեան իր բաժնին մէջ չի թերացաւ՝ ինչպէս բոլոր անցորդ կամուսրներն՝ նոյնպէս և մանաւանդ վիրաւորներուն նկատմամբ:

Բօր-Սայխա

Ա.ՏՈՒՄ ԹԱԳԻՈՐԵԱՆ



ԱՆԴՐԱՆԻԿ

Հայ կամաւորութեան փառքին նուիրուած ո՛րք է
երկ անկատար պիտի ըլլար՝ եթէ իր էջերէն բացակայ
մնար անոր անունը, եթէ իր ծոցէն չի ձառագայթէր
անոր խրոխտ ու պայծառ գիմաստուերը:

— Անդրանիկ . . .

Անուն մը, որ նախ անկարելիին ապաստաներուն
գէտ հայ ընդգլու մին յամառ ու ամեհի կոծումը նշանա-
կեց:

Անդրանիկ ֆէտային եղաւ, ամէն բանէ ստաջ,
սպերատան հայուկը, որ մնացլ փոթորիկներուն
մէջէն վեր կը բարձրանայ, ատապաւնքի ու արցունքի
հոխորներէն վեր, ասրերու կատարներուն վրայ հնչեցնե-
լու, որտացնելու համար վարը քաշկռտուող սարուկ-
ներուն բողբը: Մրրկահատն պէս թելագրական, ա-
նիկա համակերպութեան ամոյն ուխտաւորներուն կը
ներչնէր բժրոտ խիզախումներու կամէութիւնը, ու
ցեղին զարերով ինկած բարոյականը կը բարձրացնէր՝
զայն ազատ լեռներն ի վեր քաշելով, առինքներով, զո-
հերու շլացած աչքերուն ասջե գառնալով շանթ ու
պատուհաս՝ բնութեան ու կեղեքումի ուժերուն զըլ-
խուն . . . Փիրայը, Ծառուկեան, Մինաս Օղլու, Ազրիբ
Սերոբ, Քեռի, Գէորգ-Չապուշ և ուրիշներ ա՛յնքան
հրաշալի շահասակութիւններէ ետքը՝ որ մը ոտիսին
ձեռքն ինկեր էին . . . Անդրանիկ մնացեր էր անխոցելի,
անձեռնուներթի, և ատո՛վ իսկ աւելի խորհրդաւորօրէն
ուանդավիպային հանգիստացեր . . . Ասպետական շրջոշե-
ներու համանիշ, ամնձակոտար երթվարումներու խոր-
հրդանշան զարձեր էր այլևս Անդրանիկ՝ որուն՝ 1904ին՝

հազար կրակի մէջէն՝ Սասունէն վան ոստումը, և նարեկի ու Ազիթամարի հանգրուաններէն դէպի Պարսկաստան անվթար անցքը՝ մատ խածնել տուեր էին ամենուն...

Շագին-Փարահխարցի զարիւղ ազան տարիներէ ի վեր կ'երգուէր արգէն, երբ 1908ի հայ-թրքական անիւծապարտ զիրկընդխառնումը տեղի ունեցաւ... «Հուրրի-էթ»եան բոլոր խեղաչեղ համախմբումները, բոլոր հանգէսներն ու կամարները զղրկացին «Անգրանիկը քաջ իր քնկերներով»ին մարտազու համերգումներովը... Ի՛նքը մինակ հո՛ն չէր, հո՛ն չեղաւ երբէք, լսելու համար իր փառքին տարփողումը, իրեն ձօնուած սպառնալից, որ ա՛լ իր սիրալի երազին թաղման մահաքայլերովը թրւեցաւ իրեն՝ ամբողջ այդ խարկանքի ու խաղբութեան շրջանին:

— Անգրանի՛կ...

Ատուածացումի հրաւերները կը տեղային իր հասցէին, արբշիտ ու ջերմեանդ ամբոխներէ՝ ուսամբարձընդունելութեան ու փառաւորումի առիթներ կը սպասէին իրեն նշանաւոր քարափներու վրայ, քաղաքներ կ'անձկային ալէկոծուիլ իր այցին շնորհարեր երանութեամբը... Բայց Անգրանիկ վիթօշի ու Բուրգերուն ստորտաները կ'ապաստանէր մենաւոր, ինքնատուերածումի հեռաւոր ճամբաներուն մէջ կը մխրձուէր, խոյս տալու համար Համբալին պատրիչ խայծերէն ու թախանձանքներէն: Մեկուսի, քէնտաած, վիրաւոր, անիկա լուս Մեղադրանքը կ'ըլլար՝ քնկերական կասկածելի ողբերութիւններու, յոգնած անձնատուութիւններու, ողորմելի վրիպումներու հանդէպ... Գաժանօրէն, յամաւօրէն անմասնակից մեր ցաւազար լուստեսութիւններուն ու բռնապրօսիկ տօնակատարութեանց, Անգրանիկ կամովին խեղեղձուի կ'ենթարկէր ինքզինք, կը հրաժարէր հայրենիք մը որ Հայուն վաղուան գերեզմանը պիտի ըլլար, ինչպէս երէկուան սպանդանոցն էր եղեր, կը մերժէր իր բաժինը «ազատութենէ» մը՝ սուտի և կեղծիքի վրայ լաստակերտուած... «Օսմանցիութեան», «սահմանադրութեան», «օրի-

նականութեան», «համերաշխութեան» սին անուններով կուխին իրաւունքէն զրկուած սազմիկը՝ ա՛լ մասնուած ցեղին Խի՛ղճն էր սր չի՛ ներեր, չի՛ մոռնար...

— Անդրանի՛կ...

Ատանա՛ն է ջարդուեր, կիլիկիա՛ն արխնով ներկուեր...

— Անդրանի՛կ...

Իթթիհասար Սելանիկի մէջ Հայուն մուխը մտրել է վճռեր... Անմեղներու կախազանները կը ճօճին Սիհունի քարուքանդ ափերուն վրայ... Հասան-Պէյլիի նորաչէն եկեղեցին վար կ'աւնուի ձէմալեան «եղբայրական» հրամանով... Ճամբա՛յ առէք Պապիկեանին... Յետոյ՝ անո՛ր գազազին... Յետոյ՝ լուծի՛ւն, լուծի՛ւն, լուծի՛ւն...

— Անդրանի՛կ...

Հայ յեղափոխական երիտասարդութիւնն է ձեռք առեր այլուրութեան, այլասերումին ճամբան... Փամու, զպրոցի բակերը ազգամիջեան պատերա՛զմ կայ մղուելիք, մինչ քիւրտ ու տաճիկ հուզիահարները կը զարնեն հայ գիւղացին, կը լլկեն անոր պատիւը, կը թալլեն անոր վաստակը...

— Անդրանի՛կ, Անդրանի՛կ...

Կեցի՛ր, հոգի՛ ջան, «օրինական» հոգի վրայ ենք կանգնած, «քաղաքական» գործունէութիւն, «մէսուս»ական ընտրութիւններ ունինք կատարելիք...

— Անդրանի՛կ, Անդրանի՛կ, Անդրանի՛կ...

Ողջո՛յն քեզի, ո՛վ կայծակնաշող ազգանշան վրէժ-խնդիր զարթօնքի, ո՛վ խնկելի գործ-աւրող, տօն-խան-գարող, որ՝ հայասպան «ազատութեան» զինարրունք-ներէն, համբ հիասթափութիւններէն, խղճմտանքի վատ-ոգի սակարկութիւններէն յետոյ, կուգաս առաջին կատարի գրգիռը նետել սելանիկեան ոճրագար ջուլիբին... Նայեցէ՛ք, նայեցէ՛ք «Մահուան Գունդին» ահաւոր ուրուականն է որ կ'իջնէ Պալքաններուն մշուշին մէջէն... Կիլիկիոյ փոխ-վրէժն է որ կը լուծուի թրակիոյ կարմրած գաշաերուն վրայ... Էտիրնէի իրենց

անյալս փոսերուն մէջէն Պետօ Պուլկարացիին և կր-
տիւի ու կախազանի իր ընկերներուն աճիւնն է որ կը
խայտա՛յ հրձուագին.

— Սուրիդ մատա՛ղ, Անդրանի՛կ . . .

Ու նորէն մարմնացումն եղար զո՛ւն վերարծարծը-
ւած հայ յոյսերուն . . . Չա՛յնը որ հնչեց ապամահաւէր,
ու միաւորեց—մինչև անդրատլանտեան հեռուներէն—
Թորգոմի արխանի վայրավատին ճեղք՝ զայն առաջ-
նորդելու համար Տիլմանի ու Պիթլիսի սքանչելի նը-
ւածումներուն, որոնց մտքովեան նենգութիւնը կուր-
օրէն դաւաճանել շտապ՛ց . . .

—Անդրանի՛կ, պահապան հրեշտա՛կ փախտուական
հայութեան . . .

Ու, միջոց մը, մեր փառաւոր պարտութեան հը-
պարտութիւնը կազմելէ յետոյ, Բոմանօֆներու խորաա-
կումին ու Պօլէզիֆներու զատալքութեան վազորդայ-
նին, գերագոյն սլայքարին նշանաբանը, մեր սաղմիկ
կորսիւներուն միացման կարգախօսը, գրօշակ-անունն
եղար զո՛ւն, ս՛վ օրհնեալ սպարապետ հայկական նոր
Աւարայրին:

Իսկ հիմա, հայ հոգիին ազազա՛կն ևս զո՛ւն, բա՛նք
որ կը համադրէ բոլոր վրէժները, բոլոր յուսահատ հեճ-
կըլտանքները, բոլոր յուսավատ կատաղութիւնները.

—Անդրանի՛կ . . . :



ԳՕԼՕՆԷԼ ՊՐԷՄՕՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿՈՌԱՎԱՐԻՉ ԿԵԼԻԿԻՈՅ



«Ըստ՛ի բոլոր Հայերուն. Քրանսան երբէ՛ք միտք չունի Հայասանն ու Կիլիկիան իր «գօլօնի»ն դարձնելու կամ «քօթէքօրա»ն ընելու: Մենք միայն այդ երկիրները կազմելու եւ Հայոց յանձնելու համար հոս կուզանք:»

ԳՕԼՕՆԷԼ ՊՐԷՄՕՆ

«Յուսարեր», 20 Փետրվար 1919

Բօր-Սայիա, 22 Փետրվար 1919

. . . Տէր,

Կ'ըմանամ թէ Արարայի հերոս-նահատակներուն յիշատակը յուերժայնելու համար սկսած էք երկ մը պարտատել, յոյժ գոպելի ձեռնարկ՝ որուն համար յաջողութիւն կը մտայթեմ:

Առաջին անգամ գէպի կիպրոս մեկնող կամուսնուրական խումբին մէջ ինձ նման զժբազգ մօր մը երկու զուակները կային: Ներփակ զրկուած լուսանկարին կայնուկ երկու գէմքերն են: Մեծս, Իսկէնաէր Թաալազեան, մինչև հիմա իր նուրական պարտականութեան գլուխն է: Իսկ պզտիկս, Միսաք Թաալազեան, Արարայի պատույզ գաշտին վրայ նահատակ ինկա՝ թշնամի սաւառնակէ նետուած սուսրէ մը զարնուելով իր ընկերոջ՝ Սարգիս Տիլիկեանի հետ որ իր ծնողաց մէկ հատիկ զուակն էր, ա՛ն ալ... Մեր «Քէմը»էն այս երկու նահատակները կան միայն:



Միսաք Թաալազեան

Վերև զժբազգ մայր մըն եմ, ըսի: Այո՛, զժբազգ եմ, վասնզի Ատանայի ջարդին էրիկս և ամենէն քաջ զուակս զո՛ս սուած եմ, ինչպէս նաև աշխարհուեր պատերազմի ընթացքին՝ մեծ որդիս ալ տարազրութեան մէջ մեռած է իր ընտանիքին հետ:

Արդէն վրէժ լուծելու համար էր որ Իսկէնաէրս

ու Միասքս կառի գաշա նետուեցան և վերջինը նա-
հատակուեցաւ: Թէև անհուն կակիժ մըն է ինձի հա-
մար Միասքիս կորուստը, բայց՝ միւս կողմէ՝ չափա-
զանց ուրախ եմ որ կեանքը իր ազգին ի սպաս գրաւ:
Որդիս իմս բլլաւէ աւելի ազգի՛նն էր:

Հիմա, մէկ որդի մնաց ինձի, ան ալ Կիլիկիան գը-
րաւոյ Հայ Լէզէնին շարքերուն մէջ է տակաւին: Իր
կինն ու զաւակները զիս շրջապատած են հոս, սպա-
սելով միշտ իրենց հօր գալստեան...:

Ընդունեցէք յարգանքներս և բարեաներս:

Սուէտոյ Հածի-Հապիպի զիւղէն
ԱՅՐԻ ՏԻԿԻՆ ԻՆՃԷ ԹԱՍԼԱԳԵԱՆ

ԱՐԱՐԱՅԻ ՎԻՐԱԻՈՐՆԵՐԷՆ ԿԱՄԱՒՈՐ ԿԱՐԱՊԵՏ Խ. ԵԿԱԻԵԱՆ

Բնիկ Արարկիրցի, ծնած 1890ին, իր նախնական
ուսումն առած է տեղւոյն սպզային վարժարանին մէջ:

Կանուխէն կորանցու-
ցած է հայրը, որ զո՛հ
գացած է 95ի ջարդե-
րուն: — Երախոյ սա-
րիքէն վրէժի ուխտը-
ւած մը՝ ինչպէս կը
տեսնէք: Հազիւ պա-
տանի, պանդխտու-
թեան գաւազանը ձեռք
առած է, և նախ Պոլիս
յետոյ Եգիպտոս ժա-
մանակ մը մնալէ ետքը
մեկնած է Սմերիկա:

Կամաւոր արձանու-
գրուողներու առաջին-
ներէն մին եղած է Ե-
կաւեան, և Արարայի
պատմական կախին ալ՝
հերոսարար մարտնչե-
լով՝ քանի մը տեղէն

վիրաւորուած է: Կամաւոր Կարապետ Եկաւեան ալժ մ՝
կը զանուի Կիլիկիա, իր պարտականութեան գլուխը:



ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵԳԵՈՆԻՆ

ԿԻՂԻԿԻՍ, ՄՈՒՏՔԸ



«Դեպի Անթուրա».— Պէշրութէն կը մեկնինք Լիրանան: Հոն կ'այցելենք Անթուրայի վանքը, ուր հաւաքուած են 500ի չափ հայ որրեր:

Օ՛, պիտի չի մոռնամ կրրեք այդ որը... Երբ վանք ելլելու համար լերան կողմն ի վեր կը մազլցինք, ահա՛, վանքին պատշգամէն հարխրաւոր մինինիկ բազուկներ մեզի կ'երկարին՝ ողջադուրումի և համբոյրի կարօտագին սրտազեղումով մը, մինչ ուրիշներ, աւելի մեծեր, մայրակորոյս կոնկաձագերու պէս, վանքէն զուրս գէպի մեզ կը վազեն, զիմուորելու իրենց ազատարար եղբայրները: Յուզումի ի՞նչ անբացատրելի վայրկեաններ էին՝ երբ այդ անուշիկ ձագուկները եկան մեզ փաթթուիլ, մեզ գրկել՝ «Ազրա՛ր, ազրա՛ր» ձայնելով... Բառերը անզօր են վայրկեանին աղեխարչ վսեմութիւնը բացատրելու: Անոնք, այդ տանջուած հրեշտակները, փոթորիկին մէջէն բերուած հաւաքուած էին հոն, մեր աշխարհին ամէն կողմերէն...


Վերջապէս վանքին սուջուն ենք: Սանգավատութիւնը աննկարագրելի է. հարխրաւոր պտըրիկ ձեռքեր իրարու կը բազխին, ու մատաղ կուրծքերէ փրթող «Կեցցէ՛ Հայաստան» աղաղակը կը խառնուի անվերջ ծափահարութեանց:

Ու մենք արգէն իրարու մէջ ենք, հայ զինուորը և հայ որրը, իրարու խառնուած: Ամենքը հայրենակից մը, ծանօթ մը, ազգական մը կը փնտռեն մեր մէջ: Ահա՛ պզտիկ հինգ տարեկան Պարտիզակցի անուշիկ աղեկ մը. «Դո՛ւք գացէք, Թուրքերը բոլորն ալ սատկեցուցէք, որ մենք ազատինք: Մենք պիտի մեծնանք, ու ձեր սա՛ աղուորիկ լաթերը պիտի հագնինք, զինուոր ըլլանք. այն ատեն դուք հանգիստ կ'ընէք ու մենք կ'երթանք թշնամիին գէմ...»

Բան մը չեմ ուզեր, չեմ կրնար աւելցնել անոր
խօսքերուն, որոնց մէջ չէ՞ք տեսներ Հայուն անընկ-
ճելի, անպարտելի ոգին:

Ահա՛ աննման գեղեցկութեամբ սղջնակ մը, Սամ-
տնցի: Ան համաքաղաքացի մը կը փնտռէ չի գաներ,

Հայկական Լեզոնից գրաւած գերմանական «օրօնները»



ու յուսահատ անկիւն մը մեկուսանալով կ'սկսի լսել:
կը մօտենամ իրեն, և արցունքը սրբելով՝ «Ես Սամ-
տնցի եմ», կ'ըսեմ: Աչքերը վեր կ'առնէ, չի հաւատար,
ու արցունքը կը սահի լուս իր թարմ լեցուն այտերէն
վար...

Կերակուրի ժամն է:

Մենք մեր զինուորի մախազները կը քակենք: Մեր սրտահատոր երկեսն որրերը շրջանակ կազմած, ծալապատիկ գեանին վրայ կը նստին մեզի հետ: — Այդ տեսարանը ինձի կը յիշեցնէ Հայաստանի «հոգու հայ» ը կամ «պատարագի տուն»ը: — Ո՞ր զինուորն է որ ա՛լ կրնայ իր հայը չի բաժնել կամ ամբողջը չի արամազրել իր անուշիկ փոքրիկ սեղանակիցին:

Մեկնումի ժամը...

Բաժանում... Ամենուն ղէմքին վրայ մեր հոգիները խոսվակոծող յուզումը: Պզտիկները մեզի կը դիտեն արտամ, միզերնին ծուռ, արտասուաթոր: Ի՞նչպէս բաժնուիլ... Բայց պէտք է մեկնել: Հսկառակ անօրէնութեան արզելքին՝ պզտիկները մենէ առաջ ճամբայ ելած են: Դժուարաւ կրնանք զանոնք կեցնել:

Դէմի լեռն ի վեր կը մագլցինք: Անոնք կէս ժամուան ճամբայ մեզի են հեռուեր... Դիմացէն կը տեսնենք զանոնք: Պումը խումը ծառերուն սակ կեցած կ'երգեն ու թաթիկներնին օգին մէջ մեզի ետ կը կանչեն... Հէք տառապած հրեշտակներ՝ որոնք կը կարծեն թէ իրենց պաղատանքները պիտի զօրեն հակազդել զինուորական անողոք օրէնքին՝ որ մեզ կը քշէ կը տանի պարտականութեան գերբուկ ճամբաներէն:

Կը յորդորենք զիրենք ետ գառնալ, վանքը, խոտանալով նորէն գալ իրենց: Չեն հաւատար, կը մնան հոն՝ երբ արդէն մենք լերան գագաթն ենք, ու կը լըսենք գեռ իրենց սխուր երգերուն արձագանգը, որուն մէջէն ցեղին վաղուան հոգին կը խօսի:

Երկու օրուան այս արշաւէն ետքը, կը դառնանք Պէյրութ, բերելով մեզ հետ սպրուած անմոռանալի վայրկեաններու խորունկ յուզումը:

«Դէպի Կիլիկիա».— Դեկտ. 15ն է: Հրաման մը, ու նա կը լեցուինք: Դէպի Կիլիկիա... Ոգևորութիւնը անհուն է և քնդհանուր, 19ին առաջաբ մեր նաւը կը խարսխէ Մերսինի առջև: Քաղաքը մշուշներու մէջ գեռ մահուան ու սարսափի թմբիբը կ'ազրի կար-

ձեռն: Արևածաղին շոգեմակոյիները արդէն ծովուն վրայ են զոյգ առ զոյգ, որոնք դէպի նաւամատոյց կուգրբին: Ուրախութեան երգերը օգը կը թնոյացնեն: Նաւամատոյցին վրայ հազիւ ցանցատ թիւով Հայեր կան: Դեռ Հայութիւնը արիւնի անաւոր մղձաւանջին տակ է:



Հայ Աւելանակումներուն երկրորդ մասը

Լուրը կայծակի արագութեամբ կը տարածուի քաղաքին մէջ: Ու անա՛ մահուան թմբիբէն արթնցող ամբողջ ցաւատանջ ամբոխ մը, այր, կին, տղայ, աղջիկ, ձեր ու պառտա, նաւամատոյց կը խանութին: Օ՛ր, խորապէս յուզիչ է այդ պահուն անոնց դէմքին վրայ թրվուացող

ժողովար: Անոնք չեն խօսիր, կը հեծկլտան միայն, կ'ար-
ատառեն, ու բախտ թեան արցունքը որուն մէջ գուն
կը տեսնես ամբողջ ասրատն խանդավառութիւնը որ
զանոնք կը զգայուէ, կը վերածնէ: Երբ մարդ մը կը գրա-
նուի իր մտածումին սահմանները կարող անցնող ե-
րևոյթի մը առջև, ա'լ ան կը զազրի ըլլալէ մտեղէն
մարդը, չնչաւոր էակը, և կը գառնայ զինք յաճախող
անտահման երազին մէկ մտքը, որ չի խօսիր, չի կրնար
խօսիլ, այլ կը ապաստուի, ու Մերսինի հայ ժողո-
վուրդը, ի սես հայ զինուորներուն, կ'ապրէր վերա-
ցումի, արբշտանքի այդ գերազանց ու ատաւածային
պահը: Ապշահար վերացումի այդ անբացատրելի վայր-
կեաններուն կը յաջորդեն ուշաբերումի, ձայնի, ազմո-
կի, ծափերու երկարածիզ վայրկեանները:

Մերեր, կիներ, լաւագին ու արատաւաթոր, մեզի
կը մօտենան. «Ախ, ձեր ոտքերուն զուրպահն, կարիճ
ազաքներ, ազաարար հրեշտակներ, ս'ը բէք չորս տա-
րիէ ի վեր, չորս տարիէ՝ որուն ընթացքին մենք ա-
րիւն փոխեցինք, մահը ապրեցանք իր գեհեհային սա-
րողջ զարհուրանքովը»:

Եօթներորդ գումարտակը և գնդացիքի գումարտակ
մը հոն ձգելով երկու օր վերջը, ամառն Չօրն, մենք
մեկնեցանք Տարսն-Ատանոյ: Տարսնեցիները արդէն
գիտէին թէ հայ զինուորներ պիտի գան: Տարսնի կա-
շարանը կը ծփայ քաղաքին խանուղ հայութեան ու
տեղացի հետաքրքիրներու բազմութեամբ: Մեր ժամա-
նումը տեղի կ'ունենայ ամենախանդավառ ցոյցերու և
ծափողջոյններու մէջ: Հայկական մարտագոտ երգերը
կը թնդացնեն մթնոլորտը, ու հալարաւոր ձեւքեր
գէպի մեզ կ'երկարին, մեր վակոններուն կատաչելու,
մեզ գրկելու, չապսեղով կատախումբին՝ որ արդէն
պիտի կանց տանէ: Տարսն կը ձգենք երկու գո-
մարտակներ ու մենք կ'արշաւենք գէպի Ատանա, ուր
պիտի ապրէինք խանդավառութեան ու արբշտանքի
անտահման վայրկեանները:

Կաշարանը լիքն է ծովածուալ բազմութեամբ մը,
ամէն սեւէ, ամէն հասակէ. . . Գրիչս անկարող է, ու
անկարող պիտի գգար ինքզինքը մեր ամենամեծ գրողն

խոյ, նկարել փորձելու այն տեսիլքը որ պարզուեցաւ մեր կարօտարագծ աչքերուն առջև: Հագարտուր բերաններ լիանալով «կեցցէ՛ Հայաստան, կեցցէ՛ Հայ Զինուորը, կեցցէ՛ն Գաշնակիցները» կը պտտային անվերջ անզուգրում ծափահարութիւններով: Տեղացի ու գողթական երիտասարդութիւնը, հայ եւագոյն նշանը կուրծքին, ալիք առ ալիք կուգար խանուիլ մեր շարժը, իր ցափին, իր անզսնին ու իր խտովքին մէջէն Յարութեան ալեծուփ օրհնութեան մը, մեղեղիի մը պէս գուարթ ու շէնչոյ:

Ըսէ՛ք, չա՛րժեք, մինակ այս վայրկեանին համար, ատուապիլ, գալարուիլ, բայց վերջապէս տեսնել զայն, համնիլ անոր:

Տեսէ՛ք թուրք զինուորը, որ երէկ գեռ դահիճի մը ծամածուտ թեամբ կը նայէր քեզի, այսօր, սարկօրէն բարեւի է կեցած: Ժամանակները շրջուած են. ու մենք մեծ գարազլուխի մը առջև կանգնած, վերածնող Հայութեան այգը կ'ողջունենք...:

ԹՈՐՈՍ ԼՈՒՍԻՆԵԱՆ (Կամաւոր)



Արարայի մէկ ռազմադիտարանէն հսկող Հայ Լեզէնական մը

Վ Ե Ր Զ Ա Ռ Ա Ն

Հ Ա Յ Լ Է Գ Է Ո Ն Ս Ա Կ Ա Ն Ն Ե Ր ՈՒ Ն

Հոս կը փակեմ ձեր սխրալի ուխտին նուիր-
ւած այս դուզնափայ յիշատակարանը, սիրս
սակաւին աղապատանով լեցուն եւ շը-
քունքներս դեռ սարսուռն անուններո՛վը ձենէ
Շասերուն, անձնուէրներ, զորս չի կրցայ ոգեկո-
չել այս հապնեպ էջերուն մէջ:

Բայց ձեր երախտիք չի՛ մոռցուիր, քաջօրդի-
ներ, եւ լուրքեան բոլոր դաւերն իսկ չե՛ն կրնար
արգիլել որ Հայ Գաղափարին սահարակիրները
ցեղին փառքին ու հպարտութեան համար՝ յա-
ւէ՛ս սարփողեն, պանծացնեն Արարան ու Հայկա-
կան Լէզէոնը:

Ողջո՛յն, ձեզի՛, Հա՛յ Լէզէոնականներ, մա-
սա՛ղ ձեր ոտներուն, որ հիմա Ռուքեններու, Թո-
րոսներու, Լեւոններու հայկական հողը սիրաբար
կը կոխեն, Տաւրոսէն Արարատ Միացեալ Հայաս-
տանին մեծ՝ երկունքը դորդաւեսելով:



1914

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԸ

(ՕՐԸ ՕՐԻՆ ՆՕԹԱԳՐՈՒԱԾ)

ԱԻԵՏԱԲԵՐ ՀՐԱՄԱՆԸ

Հի սխա՛ն սրտաց աւետարեր հրամանը, որուն անձկայրեաց պատումին մէջ թուրքիոյ Հայութիւնը՝ քառորդ զարէ ի վեր՝ կը ստկար իր անվերջ Գողգոթային, և որուն հոգեցունց արձագանգն ա՛նա՛ կը բերէ մեզի հետագիրը:

«ԹԻՖԼԻՍ, 3 Նոյեմբեր 1914. — Կովկասի Կայսերական Փոխարեան զեկուցման մը մէջ կը յայտարարէ թէ ռուսական եզերքներուն եւ Սեւ Մովու ռուսական նաւահանգիստի պահանջող մարտնչներու դէմ բուրբ յարձակումներուն պահանջով, Զարբ հրամայած է Կովկասի իր բանակին սահմանը անցնիլ եւ յարձակում գործել թուրքերուն վրայ:»

Արեւելքի խաչապաշտներուն հզօր Պաշտպանը, վերջապէ՛ս, իր պատմական կոչումին ճամբուն կը վերադառնայ, և «Քրիստոնէութեան» նախրական գատին անունով ինքն իսկ կը շեշտէ այս վերապարձին հանդիսար ու վեհաշուք նշանակութիւնը:

«ԲԵԹՐՈՒԿԱՏ, 3 Նոյեմբեր 1914. — Մանիճեքսի մը մէջ Զարբ կը յայտարարէ թէ կասաբայ հանդարտութեամբ է որ կը ստանայ Քրիստոնէութեան վաղեմի հալածիչին յարձակման լուրը, գիտնալով որ ռուսական քաղաքի բանակները պիտի յաղթանակեն:»

Իր բին է երեւակայել, թէ Զարբն մարտաշունչ հրամանն ու հանդիսար յայտարարութիւնները ի՛նչ բուն խանդավառութիւն, ի՛նչ զանգուածային խռովք

կը փոթորկեն, այս սրահուս, կովկասի Հայութեան ծոցին մէջ, մտցնելով նոյնիսկ արդէն շղթայազերծ պատերազմի մը սննդուստիւղի սոււայասնփներն ու սննդու թիւնները:

Հայ երկիրք, արարատեան աշխարհը, սպանադաշտի կը վերածուի. բայց զանգակները որ կը հնչեն Էջմիածնէն մինչև Արցախն, Օլթի, Սարի-Ղամիշ՝ բոլոր հայ տաճարներու բարձունքէն՝ վաանգին ազեապոյժ սնազօղանջը չէ՛ որ լսելի կ'ընեն, այլ մօտալուս ազատագրումին հօգեարար սեփար:

Կովկասը կը մրրկի, կ'եռուզեայ մեծ ու բազդորջ վազորդայններու սնհամբերութեանը մէջ:

Ռուսական երկգլխանի արծիւին հոխանոյն տակ ստնայած, արիայած Հայութեան կէսը տենդազին շտապով կը պատրաստուի գիմելու սահմանէն անդին տաւազօղ միւս եզրայրական կէսին փրկազորմանը:

Թիֆլիսէն մինչև Մօսքուս, մինչև Բէթրօկրաս՝ ռուսահայ մտաւորական երիտասարդութիւնը թափ կ'առնէ սխարլի ոգեւորութեամբ մը, որուն մարտազօղ արձագանգներուն տկար ծուէններն են միայն մեզ հազորդուած սու հեռապիրները:


«**ՅԵՓՐՈՒՄԱՏ**, 3 Նոյեմբեր 1914.— Մոսքուս գու-մարուած հաւաքումի մը մեջ, ուր ներկայ էին քաղաքին բոլոր հայ ուսանողները, որոշուեցաւ ուսանողներու մասնաւոր զօրագունք մը կազմել՝ միանալու համար Թուրքիոյ դեմ կռուող բանակին:»


«**ԼՕՆՏՈՆ**, 5 Նոյեմբեր 1914.— Ռուսիոյ Հայերը հաւասարմական մեծ ցոյցեր կը կատարեն ռուսական ազգին հանդէպ:»


ԴԷՊԻ ՀԱՅԱՍՏԱՆ


— «Անցէ՛ք սահմանը» . . . Դէպի Հայաստան . . .


Բրէմլինի նուիրական կամարներուն տակ սպա-րակուած անդաւանալի հրամանն է մեծ ու ամենապորմած Զարին:
































ցած քլլայիք մեծ համագրու իրականութեան մը ստ-
ջև: Յիշեցէ՛ք որ անտեսական կեանքը Ռուսաստանի
մէջ ալ, ինչպէս ամենուրեք, անդամալուծուած է այս
պահուս. բազմ կովկասի ձեր եզրայրակիցները կը բա-
նան ա՛նա՛ իրենց գանձերուն ըւերանը, և անգամ մըն
ալ հեղեղի պէս կը հոսեցնեն իրենց սակին, ամբողջ
հայկական բանակ մը իրենց հաշտոյն եփքիք ընելու
համար . . . :

«ՁԱ՛ՐԿ, ԿՈՎԿԱ՛Ս . . . »

Արդարեւ, Կովկասո՛վ է որ կը սփոփուինք, կը
սրտասպնդուինք, կը յուսադրուինք հիմա:

Հո՛ն է որ հայկական կարոփներն իրենց տիրական
թափը կ՛աւնենն, հոնկէ՛ է որ հայկական ուժերուն ու
զոհողութիւններուն գերազուստը պիտի նեատի, պի-
տի կշռէ ցեղին բազմը վճուող նժարին մէջ:

Ու բնական է որ ջերմեանոց անձկութեամբ ու
կրախտապէս հիացումով անոր, Կովկասին գանձանք,
սեւեռուինք շարունակ, բնական է որ՝ այս բազէկա՛
մեր պրկուած մտածումին մէջ անպազար կոտտայ
Սիամանթօի դիւցազնական յանկերգը.

«Ձա՛րկ, Կովկա՛ս . . . »

Ձա՛րկ, ու քու վեհանձն ու ասնական հպարտու-
թեանոց մէջ ներէ՛ մեզի, Կովկա՛ս, ներէ՛ մեզի, մեր
գառաւարտութեանը, մեր ուրացումին, մեր գառաւքու-
թեանը համար:

«Ձա՛րկ, Կովկա՛ս . . . »

Ճգմէ՛ զլախն անապոսոյն վիշապին որ գարերով
Հայուն արեամբը սնանեցաւ, յգիացաւ:

«Ձա՛րկ, Կովկա՛ս . . . »

Բաւ վրիժառու հարուածներդ փշրեցին ա՛նա՛ Պա-
յագիտի ու Արաշկերտի բազմաշարձար հայ բնակչու-
թեան շղթաները: Էնվէր-Լիմանեան բանակը՝ Քէօրբի-
Քէօյի մէջ ջախջախուած՝ էրզրում քաշուեցաւ Տէվե-
պուրանի կիրճէն դար քաւ կառապի մարտիկներդ խցե-

ցին: Քու պողպատէ բազուկներդ կ'ելիարին, կ'իջխեն արդէն հայկական բարձրասնդակին վրայ. կարին, վան, Մուշ, Բաղէշ, յաջորդական հանդրասնները պիտի ըլլան քու յաղթական վազքից որ ա՛լ կանց չի պիտի սննէ. և ի՛նչ հրաշալի տեսարան պիտի ըլլայ սն, երբ մեր հայրենի բոլոր կենսունակ կեդրաններէն քու երէկուան . . . եզրայրուան աջակցութեամբդ գինուած խոմբեր ընդառաջ յուստն քու կամուտը շարքերով, զանոնք գինուարելու և անոնց հետ կողք կողքի շարունակելու համար ազատարար մարտումին ճամբան, ի՛նչ աստուածացում պիտի ըլլայ քու սակեղապարձ զազափարից համար, երբ Սասունի Տարփօրիկէն, Կէլիէ-Կիզանէն, Գրգուր-Քարէն վար իջնին ու վապարականի Կարխաէն, Շատոխէն, Ոստանէն, Ալիարէն, Ողխմէն, Մոխէն դուրս գան Արապօի, Սերտրնէրու, Հրայրի, Աւեսխանի, Պետօի, Մարախի հերոսական սերունդին կրասերները . . . :

ԽԱՆԱՍՈՐԻ ՏԵՍԻԷՔԸ

Տեսիլքն ա՜ն՝ Խանասորէն ծայր կուտայ . . .

Խանասո՛ր . . . Այս ի՛նչ մոզական անուն է զոր ասածին անգամ եւրոպական թերթերուն մէջ կարգաւրով գլխու պտտցա ու սրափ գահավէժ արտիստն կուսնենանք:

Խանասո՛ր . . . Այս աչն վա՛յրն է ուր, յուսածատեթեան մուտլ օր մը, Նիխօլ Գուսան վրէժով խենդեցած ֆէտայիներու իր արշաւախոմբն ասուջնորդեց:

Գո՛ւն անմահացած էիր յեզափոխական մեր համեատարեզրութեանց մէջ, Խանասո՛ր, բայց չէիր դու չակիր, թերեւս, որ օր մը սուսօթուրք պատմական սաղմազաւ մը դասնարու փառքը պիտի վիճակուէր քեզի:

Բայց կեցէ՛ք, դեռ սեմին վրայ ենք տեսիլքին . . . Խանասո՛ր, դեռ ասածին կայանն է աս՝ Աարաբատականէն դէպի վան — Հալաստանի սիրտը — ասնոց արխնազանդ ճամբուն . . . Գեռ չա՛ն անտար ու կզե-

բական անուններ կան որ տիեզերական ուշադրութեան
պիտի հարկադրուին... Բոլոր անունները, որ հայ մար-
տիրոսացումին թատր, բոլոր ձօրերն ու լեռները, որ
հայ մարտնչումին վկայ ու ապաստան եղան, բոլոր
ժայռերն ու քարերը, որոնց տակ հայ ֆէառայիներ ին-
կան, անմահութեան ձայն պիտի տան... Եւ ամենուն
վերև, ամենուն համադրութեամբը, պիտի հնչէ աւետա-
յտու. «Հայաստան, Հայաստան, Հայաստան»... :



1916

ՎՏԱՐԱՆԴԻ ՀԱՅ ՃԵՏԻՆ



(ՀԱՅԳԱԳԱՆ ԼԵԳԷՌՇԻՆ ԶԻՆՈՒՈՐԱԳՐՄԱՆ ԱՌՔԻԻ)

Յրիսասարգ գինուար, ո՞ր կ'երթաս...
Լ Ա Մ Ը Ն Է

Հերուան աւետարար սաղմակոչը, արարատեան
հորիզոններէն չեփորուած, քենէ քիչերը պատրաստ
գտաւ, ո՞վ վտարանդի հայ երիտասարդութիւն... Սա-
կաւաթի ամենիններն էին որ նոյնհետայն ովկիանոս-
ները ձեղքեցին, և անդունդներուն ու բարձունքնե-
րուն վրայէն սուրադով հասան երազուած սահմանա-
զլուխը, խառնուեցան անկէ թափ սանող մեր առաջին
յուսավառ ու վրէժխնդիր լեզուններուն:

Արտասահմանեան մեր երիտասարգ շարքերը մե-
զուար չէին ստեղծուած անփառունակ կացութեան մէջ:
Անձնուիրութեան ոգին, վճռականութեան ջրը չէին
պակսեր անոնց, և եթէ նոյն չափով ձեռներէկցութեան
փաստեր չի արուեցան, եթէ շատեր կողմակերպուած

մարմիններէ, ազգային հաստատութիւններէ սպասեցին իրենց կարգախօսն ու անհրաժեշտ միջոցները, զանուկցան ալ որ՝ ամէն տարակուսելի խնամակալութեան կանակ զարձնելով՝ հանդիպող առաջին զանազից բանակին զինուորապրակցան:

Անհասական այս շքեղ խղանքները չի պիտի բաւէին, սակայն, մեր հաւաքական խղճմանն քն հանդատացնելու: Համաշխարհային գրեթէ բոլոր սողմածակասներուն վրայ Հայերու աւելի կամ նուազ ուշադրաւ ներկայութիւնը չէր կրնար մեզ արգելել ամէն վայրկեան տեսնալէ աչք-ծակող սո՛ր իրողութիւնը՝ թէ Հայ Արտասահմանը նանդիսասեսի գիրքը կը պահէր արիւնի ու աւերումի մէջ գալարուող Հայ Հայրենիքին հանդէպ:

Մեր տարագիր երիտասարդութիւնը պիտի ուզէ՞ր, պիտի զիջանէ՞ր մինչև վերջը չի հասկնալ ձեռացնել իր անխուսափելի, անդրժեղի պարտականութիւնը... Ի՞նչպէս իրեն պիտի յաջողէր ստիկա, առանց հուսկ ուրեմն զինք բանագասելու գասալքութեան ողորմելի խտտովանանքին... Հոս ամէն բան զինք կը ստիպէր առջի օրէն անդրադառնալու իրեն վիճակուած մարտական դերին և անոր լրջութեամբը համակուելու... Երեք սարիէ ի վեր բրիտանական կայսրութեան մայրկղզիէն ու բոլոր հեռաւոր արքայիներէն սողմածակաս վազող հարիւր հազարաւոր խարտեաչ ազաքը հայրենանուէր անձնուրացութեան խենդեցնող կոչը չերգկցի՞ն մերիններուն՝ թիփեհրիին խօլ ու ազեխարչ վանկերովը... «Երկա՛ր է ձամբան գէպի թիփեհրի»... Է՛հ, այո՛, և այդ նախրական ձամբան երկայնքը դիւցազնօրէն ինկած՝ բիրաւորներ կը քնանան հիմա Ալպիօնի ազուոր այն գուակներէն, որոնք ձեզի հեռ գարեջուր կոնծեցին Արդարութեան յաղթանակին, մինչ ուրիշ բիրաւորներ, նոր բիրաւորներ, անվերջ բիրաւորներ կուգան ու կը վազեն գէպի Պաղեստինի ու Միջագետքի արեւակեղ սողմապիծերը... Ահա՛ որ, յուսահատակա՛ն բան մը պիտի ըլլար մտածել թէ առնազեղ խիզախումի, վեհանձն երիտասարդութեան.

հարելի գրիանքներու և անոպորս՝ հարուածներու ասկ
ինկաք կոչկածամահ... .


Եւ գո՛ւք, և գո՛ւք, հայ դօջաղ տղամարդիկ, բո-
լոր սաղմնձակասներուն վրայ ու անանուն ու ան-
շուք գոհողութեան բոլոր ձամբաներուն մէջ ձեր ե-
րակները պարզեցիք... Արարատէն մինչև Արարա ձեր
պայքարող, դիմադրող, մտքատու կամքն ու կամուս-
րութիւնը աշխարհ զարմացուց և Մերձաւոր-Արևելքի
ասորիինակ զգալացունց յայանութիւնն եղաւ: Կիսով
կոտորակուած ցեղին անպարտելի կենտունակութիւնն
ապացուցիք զուք, որ հիմա հայրենի սահմաններուն
վրայ յանկարծ կանգ կ'առնէք ձեր փոթորկալար խո-
յանքին մէջ զսպուած... .




Ընդունա՞նք այս ամէնը... .

— Անկարելի՛ է:










Մի՛ մոռնա՛ք «Արարա»-ն օրինակներ
նուէր զրկել հայ որբերուն :

ՆՈՅՆ ՀԵՂԻՆՍԿԷՆ

- 1 Քայքայում (Սպասած)
- 2 Կիլիկեան Արհաւիրքը (Սպասած)
- 3 Հայուհին (Սպասած)
- 4 Արիւնին Մատեններ
- 5 Չայնը Հնչե՛ց — Վէպ — (Սպասած) 2ը2.
- 6 Անմահ Բոցը — Չայնը Հնչեց, Տաւմնէր (1 հատորով) 75
- 7 Եգիպտահայ Տարեցոյցը Ա. (1914), Բ. (1915),
Գ. (1916), Դ. (1917), Ե. (1918) (Սպասած)
- 8 «Հոսանք» ի Հաւարածուն 200



Դիմել հեղինակին՝

ՔԷՇԻՇԵԱՆ ՏՊԱՐԱՆ, ԲԷՀՊԻՄԱԼՅՐԼԱՐ ՊԱՇԵ, ԻՋՄԻՐ

SOURÈNE BARTÉVIAN

IMPRIMERIE KÉCHICHIAN, Rue Pechtimaldjilar, SMYRNE

ՏՊԱՐԱՆ ՔԷՇԻՇԵԱՆ

ԲԷՇԻՄԱԼՅՐԼԱՐ ՊԱՇԵ — ԻՋՄԻՐ

Կը ստանձնէ՛ տպագրական ամէն տեսակ գործեր,
խիստ գիրամատչելի գիներով: Խնամուած աշխատու-
թիւն: Գրաստաներէ, եղած յանձնարարութիւնները կը
կատարուին փութով և գոհացուցիչ պայմաններով: